ԶՐՈՅՑ ԸՆԹԵՐՑՈՂԻՍ ՆԵՏ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 92-ԱՄԵԱԿԸ...  
ՆՈՐ ՏԱՐԵԴԱՐՁ, ՆՈՐ ՎԵՐԵԼՔ

ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ



Մեծ Եղեռնի 92-րդ տարեդարձն է: Մեր պահանջատիրական արդարատենց պայքարի 2007 տարուան հաշուեկշիռը կը յուսադրէ և կ'ոգեւորէ մեզ: Մեր ժողովուրդին դէմ գործուած պատմական անիրաւութիւնը դարմանել տալու հայութեան ոգորումը արձանագրած է նոր յառաջընթաց ու վերելք: Միջազգային համայնք կոչուածին խիղճը, իր շատ երկա՛ր տեւած ձմեռնանհինջէն տակաւ կը զարթնի: Սկսած է տեսնել դեռ շուրջ դար մ'առաջ գործուած բայց անպատիժ մնացած ցեղասպանութիւնը Թուրքին և զգածուիլ: Ինքզինք մեղսակից կը նկատէ կարծես: Խղճահարուած ըլլալու տպաւորութիւն կը թողու: Ապացոյց՝ շուրջ երեք տասնեակ պետութիւններ ու հասարակական շատ կազմակերպութիւններ արդէն իր անունով կը կոչեն Թուրքին եղեռնագործութիւնը՝ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ: Պատիժ սահմանած են զայն ուրացողին դէմ: Իրենց պարկեշտ ու արդարամիտ վերաբերումը սկսած է դառնալ վարակիչ: Բարի օրինակ և խորհրդատու՝ շատերուն, որ ասոնք եւս ընդունին, որ անցեալ դարու սկիզբներուն հայութեան դէմ գործուած է, իրենց սիրած բնորոշումով՝ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՈՃԻՐ:

Առանձնապէս յատկանշական ու քաջալերական է տեսնելը որ Թուրքիոյ «Ռազմավարական դաշնակից» Մ. Նահանգներու մէջ անգամ, պետական շրջանակներէ ներս ու նահանգային մակարդակի վրայ հայանպաստ դիրքորոշումներ են յայտնուած: Եթէ երէկ, Զալիֆորնիոյ կառավարիչ Շուարցենեկըն էր Ապրիլ 24-ը «Հայկական Յեղասպանութեան Յիշատակումի Օր» հռչակողը, այսօր ԱՄՆ-ի Նեւատայի նահանգապետն է, որ Առնոլտի օրինակին կը հետեւի: Իսկ Զոնկրէսի երկու մեծագոյեցիկ անդամներ՝ Ֆրէնք Փալոնէ և Ճօ Նոլընպըրկ չեն վարանած պահանջելու Նախ. Պուշէն, որ Ապրիլ 24-ի իր տարեկան ուղերձին մէջ ըլլայ ուղղամիտ և գործածէ «Յեղասպանութիւն» մակդիրը, որ Թուրքին գործած եղեռնը իր լրիւ իմաստն ու տարողութիւնը գտնէ: Հոգ չէ, թէ Սպիտակ-Տուն-ին տէրը, մէկ անգամ եւս, անութիւն Ս. Գիրք դրած, ուրանայ ճշմարտութիւնը ինչպէս Պետրոս, Գեթսեմանիի պարտէզին մէջ, ուրացաւ Յիսուսը «Հաւը դեռ երեք անգամ չխօսած»... և «Վէթօ»ի գործածութեամբ հաճոյակատար գտնուի իր Թուրք ոճրապարտ դաշնակիցին հանդէպ որ պարծանքն է իր... ինքզինք «Արդարութեան Ախոյեան» հռչակած Ուաշինկթընին...:

Հայութիւնը իր պահանջատիրական պայքարին մէջ արձանագրած նորագոյն յաջողութիւնները կը պարտի նաե՛ւ իր միասնութեան, հաւաքական աշխատանքին և սեւեռակէտ ունեցած իտիալին, իր անխորտակ հաւատքին որ նահանջ ու ետ-դարձ պիտի չճանչնայ, արդար փոխ-հատուցումի ձգտող իր մարտնչումի ուղիին վրայ: Հայը ուխտած է, որ իր ոգորումը պիտի չունենայ դուլ և դադար: Մինչեւ դատապարտումը միջազգային համայնքին, Երոպական Միութեան ու ՄԱԿ-ին կողմէ հայկ. ցեղասպանութեան: Մինչեւ անարգանքի սիւնին գամուիլը թուրքին: Մինչեւ արդար հատուցում ստանալը հայուն որ կը նշանակէ՝ բռնագրաւեալ Հայաստանը վերադարձնել իր տիրոջ՝ հայութեան, վճարել թափուած հայու անմեղ արեան և յափշտակուած ինչքերուն գինը:

Անցեալ տասնամեակներու մեր հաւաքական ծառացումը ոճրապարտին և իր մեղսակիցներուն դէմ, մեր ձեռքբերած ողջունելի յաջողութիւնները խթան կը կազմեն այսօր: Կը ջրդեղեն մեր կամքը և կ'ամրապենդեն հաւատքը մեր Դատին արդարութեան և զայն յաջողութեամբ պսակելու կարելիութեան հանդէպ: Կը մղեն մեզ որ առաւել խտացնենք մեր շարքերը, զինուինք հոգե-բարոյական նոր զէնքերով, վճռականութեամբ: Կատարելագործենք մեր մարտավարութիւնը: Մեր ռազմավարութեան մէջ մնանք իմաստուն, խոհեմ, իրատես և



ՎԱՅԵՐԸ Է ՀԱՅ ԱԶԳԻՆ...

ՀԱՅԵՐԸ [ԻՐԻ ԹԷ], ԱՄԷՆ ՏԱՐԻ, 24 ԱՊՐԻԼԸ  
ԿԸ ՅԻՇԱՏԱԿԵՆ:

ԲԱՅՑ 24 ԱՊՐԻԼ 1915-Թ.ԻՆ  
ԻՆՉ ԸԼԼԱԼԸ ԱՄԷՆ ՈՔ ԼԱԻ ԳԻՏԷ՞

24 ԱՊՐԻԼ 1915-Թ.ԻՆ

ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ  
ՎԱՅՐԵՐՈՒՆ՝ ՉԱՆՂԸՐԸ-ԻՆ ԵՒ ԱՅԱՇ-ԻՆ  
ՈՒՐ ԳՏՆՈՒԵԼՆՈՒՆ ՀԱՅԵՐՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ,  
ՇԱՏ ՀԱԻԱՆԱԲԱՐ, ՏԵՂԵԱԿ ՉԵՆ

ԵՂԵՈՆԻ ՏԱՐԻՆԵՐԸՆ ՅԵՏՈՅ՝ ՄԻՆՉԵԻ  
ԱՅՍՕՐ, ՈՉ ՄԷԿ ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ՉԱՆՂԸՐԸ ԵՒ  
ԱՅԱՇ ԳԱՅԱԾ ԵՒ ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ  
ԱՆՅԱՅՑ ԳԵՐԵՋՄԱՆՆԵՐԸ ԵՂՈՂ ԱՅԴ ՀՈՂԵՐՈՒՆ  
ՎՐԱՅ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԸ ԿԱՏԱՐԱԾ Է

ՄԻՆՉԴԵՌ ՀՐԵԱՆԵՐԸ՝ ԻՐԵՆՑ  
«HOLOCAUST»-ԻՆ ՎԱՅՐԵՐԸ ԵՂՈՂ AUSCHWITZ-Ը,  
DACHAU-Ն BUCHENWALD-Ը ԵՒ ՆՄԱՆ CAMP DE  
CONCENTRATION-ՆԵՐԸ՝ ՍՐԲԱՏԵՂԻՆԵՐՈՒ  
ՎԵՐԱԾԱԾ ԵՆ

ԵՒ ՎԵՐՋԱՊԷ՛Ս...

24 ԱՊՐԻԼ 1915-Թ.Ի ՄԵԾ ԵՂԵՈՆԵՆ  
91 ՏԱՐԻՆԵՐ ՅԵՏՈՅ,  
15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2006-Թ.ԻՆ՝  
ՈՒՒՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Ի

ՉԱՆՂԸՐԸ ԵՒ ԱՅԱՇ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԵԺ ՈՒՒԲԷՆԵԱՆ]

Մեր այս գրութիւնը կը ձօնենք՝ Արմէն Արոյեանից և իրեն ուղեցոյց երկու հայ ընկերներուն որոնք, Եղեռնէն յետոյ առաջին անգամ ըլլալով, ուխտագնացութեամբ մեկնեցան Չանղըրը և Այաշ:



Տխրահռչակ  
Չանղըրը-ի  
մուտքը  
ուղեցուցող  
նշանակը:




Արմէն  
Արոյեանից  
դէպի  
Չանղըրը  
կատարած  
ուխտագնա-  
ցութիւնը  
պատմող  
DVD-ին  
առաջին  
տեսանկարը:




Չանղըրը՝  
Ռուբէն  
Սեակի,  
Դանիէլ  
Վարուժանի  
և իրենց  
մտաւորական  
ընկերներուն  
վերջին ...  
հանգրուանը:



Չանդրըրը-ի  
բարձունքին  
վրայի  
փլատակ  
բերդէն՝  
ուխտագնաց  
Արմէն Արոյեան  
կը դիտէ  
արհնաթաթախ  
քաղաքը:



Ահա՛ փլատակ բերդէն հին և նոր Չանդրըրը-ի տեսարանը:



Եւ ուխտագնաց Արմէն  
Արոյեան Չանդրըրը-ի  
բարձունքին վրայ,  
հոգեհանգիստ մը  
կատարած ըլլալու  
երկիւղածութեամբ կը  
կարդայ՝ Չանդրըրը  
նահատակուած  
Ռուբէն Սևակի  
ուղղուած  
դամբանականը, որուն  
կը հետեւի  
նահատակ-հերոս  
բանաստեղծին  
«Սրինգ» քերթուածին  
ընթերցումը...



### ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

Բու՛ն անունով՝ Ռուբեն Չիլինկիրեան: Ծնած է 1885-թ.ին, Սիլիվրի, բժշկութիւն ուսած՝ Լօզան, ապա աշխատած ու ստեղծագործած՝ Զուիցերիա և Պոլիս, ուր, 1915-ի Ապրիլ 24-ին ձերբակալուած է, հակառակ բանակի բժիշկի իր հանգամանքին, և խժոժութեամբ սպաննուած 200-է աւելի հայ մտաւորականներու հետ: Մեր նահատակ գրագէտներուն կրտսերագոյնը՝ Սեւակ, մեզի ժառանգ ձգած է «Սիրոյ Գիրքը», «Վերջին Հայերը», «Քառսը» և «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր» երկերը:

\* \* \*

Սիրո՛յ և յեղափոխաշունչ ապրումներու գրագէտ Ռուբեն Սեւակ, թէև երիտասարդ, բայց կանո՛ւխ հասկցար կեանքը և ըմբռնեցիր զայն, հասո՛ւն մարդու նման:

Տաղանդաւոր բժի՛շկ էիր, տարուած մարդասիրութեամբ, և իրաւա՛մբ կիսած ու բաժնած դժբախտութիւնները՝ մարդ արարածին.

Դո՛ւն, որ արիութեամբ կը հակադրուէիր ամէ՛ն տեսակի անարդարութեան դէմ...: Այսօր քեզի կու գանք որ բերենք մեր խո՛ր յարգանքը, մեր հիացումն ու սէրը՝ քեզի հանդէպ, նահատակութեանդ վայրին, Չանդըրը-ի մէջ:

Դու՛ն պարզ գրող մը չէիր, այլ՝ վաւերական բանաստեղծն ու արձակագիրը:

Դու՛ն պարզ բժիշկ մը չէիր, այլ՝ նուիրեալ հասարակական գործիչը, որ 100 տարիէ ի վեր կը ներշնչէ մեր ժողովուրդի գրասէր սերունդները՝ հա՛շտ ապրելու իրենց ներքին անձին հետ, հանդուրժելու՝ միւսին և ընդունելու, սիրելու զայն:

Դո՛ւն, որ քու բժշկական դասախօսութիւններովդ լուսաւորած էիր հազարաւորներու միտքն ու կեանքը և անսակարկ ու անմնացորդ նուիրուած ազգիդ՝ քու արուեստովդ, կարողութիւններովդ ու գիտելիքներովդ:

Ազնուագո՛յն երիտասարդ Ռուբեն Սեւակ՝ դու՛ն քու երեսուն տարու դեռատի կեանքդ զոհեցիր «Հայ» ըլլալու «Աններելի յանցանք»իդ համար, վաղաժամօրէն թաղելով ձիրքերդ և սէրերդ:

Կը խոնարհի՛նք քու անմոռաց և խնկելի յիշատակին առաջ:

Յարգա՛նք քեզ...:

### Ս Ր Ի Ն Գ

Ո՛վ խեղճ սրինգ, տարաբախտ ոստ,  
Ան ո՞ր անգուծ ձեռքն էր անտես,  
Կամ ո՞ր կայծակն որոտընդոստ,  
Որ խլեց, չորցուց քեզ ոսկրի պէս...  
  
Մօտեցո՛ւր կուրծքդ համբոյրիս,  
Թող օձեն վէրքդ արցունքներս,

Գիտեմ պիտի չդաւարիս,  
Բայց կեա՛նք փչեմ երակէդ ներս...  
  
Ո՛վ իմ սրինգ, ո՛ստ երկնատուր,  
Չորցած կուրծքիդ ես տամ հոգիս,  
Ու դուն ե՛րգ տուր, դուն վերե՛լք տուր,  
Երկինքներ տուր հիւանդ շունչիս...:




Արիւնոտ  
Չանդըրը-էն  
հին  
տուններ:



Հաւանաբար,  
այս տուններուն  
մէջ  
քանի  
մը ամիս  
բնակեցան  
մեր  
տուրք  
մտաւորական  
նահատակները




Չանդըրը-ի մէջ հայ  
ուղեւորը կը հարցնէ  
զագրելի տեսքով  
թուրքի մը.- Ո՞ւր է  
Հայ եկեղեցին»: «Սա փողոցին մէջն  
էր, բայց հիմա  
փլած է» կըլլայ  
պատասխանը: Այս  
եկեղեցին մէջ է, որ  
Կոմիտաս Կրդ. պա-  
տարագեց, վերջին  
անգամ, աքսորեալ  
մտաւորականներուն  
համար:



Ո՛վ գիտե...  
 թէ Չանղըրը-ի  
 այս սունը՝  
 1915-թ.ին  
 մեր սուրբ  
 նահատակներէն  
 որո՞ւն վերջին  
 բնակարանը  
 եղած է:



Հին Չանղըրը-ն  
 և  
 իր նոր  
 բնակիչները:





Ա Պ Ր Ի Լ Բ Ս Ա Ն Չ Ո Ր Ս ... Օ Ր Ի Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Մ Ո Վ Ս Է Ս Հ Ա Լ Ա Ց Ե Ա Ն

Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա մեր սպայերին,  
Տէ՛ր ողորմեա, մեր դարաւոր ննջեցելոց հոգիներին,  
Տէ՛ր ողորմեա, աշխարհով մէկ՝ թափառական անտո՛ւն հային,  
Ու Տէ՛ր գթա, հի՛ն փառքերից մի խուրճ դարձած՝ մեր սուրբ հողին...

Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա, հազա՛ր անգամ Տէ՛ր ինձ մեղայ,  
Տէ՛ր ինձ մեղայ, հազար մեղայ անձարակիս՝ Տէ՛ր ողորմեա,  
Ամէն Ապրիլ քսանչորսին լո՛ւս սպասող մեղաւորիս,  
Որ սթափի խոր թմբիրից՝ լուալ ժահրոտ վէ՛րքը հայիս...

Աղօ՛թք ու խունկ, փունջ մը ծաղիկ, կաթիլ մ'արցունք՝ անշէ՛ջ կրակ,  
Հազար յարգանք ու ծնկաչոք հազարավանկ սիրոյ մաղթանք,  
Միլիոն ու կէս նահատակաց հոգիներին, որոնք ինկան  
Հաստատակամ վասն հայրենեաց ու հաւատքի ազատութեան...

Երանի թէ ամէ՛ն մի օր, Ապրիլ լինի և քսանչորս,  
Ու մենք մտնենք ոտաբոպիկ՝ Մասիաց անտառն յաւերժահարս,  
Ուր մէ՛ն մի հայ, ծաղիկ վարման, Երկնածորան՝ Բազմաբուրեան,  
Մէկը միւսով պայծառացած, կանչում են մեզ՝ հաղորդութեան...

Երանի թէ ամէ՛ն մի օր, Ապրիլ լինի և քսանչորս,  
Ու լոյս ծագի, հոգիներին մեր ծորտացեալ՝ անբարեյոյս,  
Ձեռք երկարենք իրար անկեղծ, ողջագուրուենք կարօտակէզ,  
Իսկ թէ Բախտից՝ լա՛նք թէ խնդանք, միասնաբար ու սիրակէզ...

Երանի թէ ամէ՛ն մի օր Ապրիլ լինի և քսանչորս,  
Ո՛չ թէ լալու ու ողբալու, ափսոսալու՝ անիծելու,  
Այլ խոկա՛լու, ամփոփուելո՛ւ, խորանալո՛ւ, լրջանալո՛ւ,  
Սո՛սկ օտարի՛ց... Այլ ի՛րովին՝ հաշուեյարդար պահանջելու...

Քանի՞ մատաղ դո՛ւ ես բերել սուրբ սեղանին՝ հայավայել,  
Քանի՞ հայի տո՛ւն ես շինել, քանի՞ օծախ՝ ե՛տ ես վառել,  
Քանի՞ հայի տունդարձ կանչել՝ կապել նորից իր արմատին...  
Տխո՛ւր եմ... լո՛ւս ու անհանգիստ՝ հոգիները մեր պասյերին...

Ա՛լ հերիք է՝ հգօ՛ր արեւ, կանգնի՛ր մի պահ ու մե՛զ լսիր...  
Դե՛ն քանի՞ դար պէտք է մեզի որ միանանք ու անխտիր,  
Դե՛ն քանի՞ դար պէտք է մնանք անմիաբան ու անձրկած,  
Դե՛ն քանի՞ դար պէտք է մեզի՝ լուծել գաղտնիքն այս անթեղուած...

Միթէ՞ այդքան դու ժլատ ես... Մտի՛ր ազատ ամէն հայ տուն,  
Ամէն հա՛յ տուն մի շայաստան, քեզ է տնչում՝ յար մշտարթուն,  
Դու վա՛ն պահիր օծախն հային, կանչիր անեղծ սուրբ քաւութեան,  
Ու ե՛տ վանիր ամէն չար ուժ, որ մօտենայ իր խնդութեան...

Ջողի՛ր հային, միաւորի՛ր արարչական հուրովոյ վերին,  
Ջողի՛ր այնպէս, որ ոչ մի հայ մնայ հեռու՛մ գիրկն օտարին,  
Ո՛չ մի մութ ուժ, չթուլացնի՛ չխափանի երթը մերին,  
Այլ առ յաւէտ, պահիր մեզ սինդ՝ որպէս մի ազգ արեւածին...

Աղերսո՛ւմ եմ, աշխարհներին դու լոյս սփռող՝ լոյսի՛ իշխան,  
Լո՛յս տուր մեզի... Լուսաւորի սրտերը մեր օրհասական,  
Վերականգնիր ջահերը ջինջ՝ մեր իրճերի բազմադարեան,  
Ապրիլ ազատ, միասնական, կերտել երկիրն մեր Լայիրեան...

Քի՞չ է միթէ, միլիոն ու կէս նահատակի՝ հոգի անգին,  
Որ մինչեւ օրս չմիացանք, չհասկացանք խաղը կեանքին...  
Տէ՛ր ողորմի մեղաւորիս, հազա՛ր մեղայ Արարատին,  
Ա՛լ հերիք է խաբենք զիրար՝ միասնութեան պատրանքով սին...

Հա՛յ են ասել ու կոտորել, ասա՛ Տէ՛ր իմ՝ մեղքը հային...  
Դո՛ւ ես բաշխել շնորհք ու միտք, սնել բարին՝ վանել չարին,  
Քո՛ օրհնութեամբ՝ Լոյն է հանգչել Արարատի սուրբ կատարին,  
Ու քո՛ կամքով, մենք բազմացել՝ բացել ուղին նոր աշխարհին...

Թէ ա՛սա Տէ՛ր... զո՛ւր մեզ ջարդեն, կոտորակեն՝ քամուն յանձնեն...  
Ձի մեր հանգած փոշին անգամ՝ ո՛ր մի ձամբի ժայռին ընկնի,  
Միլ կը դառնայ, կը մեծանայ մի գեղանկի այգի կլնի,  
Համով-հոտով պտուղներով՝ նոր համ կտայ շրջապատին...

Աղօ՛թք ու խունկ, փունջ մը ծաղիկ, կաթիլ մ'արցունք, անշէ՛ջ կրակ  
Միլիոն ու կէս նահատակաց հոգիներին անփառունակ,  
Որոնք ինկան՝ բազմաչարչար, անապատի տօթ աւազում,  
Որ մենք ապրենք ազա՛տ անկախ, կերտենք՝ օծախ ու դպրութիւն...

Ու մենք ելանք ոտքի՝ հաստա՛տ, կառուցեցի՛նք երդիք ու տուն,  
Կառուցեցինք մեզի համար և ուրիշին անդո՛ւլ՝ անհո՛ւն,  
Ու բուժեցինք բազմադարեան վէրքե՛րը մեր՝ խոր արնաքամ,  
Բայց չիմացանք խա՛ղը կեանքին, Բաժին ընկած մեզ յաւիտեան...

Հարիւր տարին թակում է զո՛ն դոները մեր փակ՝ ամրակուտ,  
Իսկ մենք մտած խոր թմբիրում, յար յօրանջում՝ երկա՛ր ու լո՛ւս,  
Տակաւ քանի՞ քսանչորսե՛ր նոր աղէտնե՛ր դեռ կ'սսլասենք  
Որ արթնանանք, արիանանք բոունցք կազմենք ու ամրանանք...

Եկէ՛ք լինենք՝ կարմի՛ր, կապո՛յտ, նարնջագո՛յն... ջա՛ն՝ ջա՛ն ասենք  
Նո՛յն դրօշի վրայ երդում անենք, որ իրարից չբաժանուենք,  
Գլուխ չորած նո՛յն խորանին՝ մեղա՛յ ասենք մեր սպայերին,  
Որ մինչեւ օրս չմիացանք, չբուժեցինք՝ վէրքե՛րը հին...

Հարի՛ւր և ի՛նչ կուսակցութիւն, հազա՛ր ու մի աղանդ միին,  
Յօշոտո՛ւմ են հայու հոգին, անօգնական՝ իր տան շեմին...  
Մէջքը տուած սատանային՝ քանդո՛ւմ օծա՛խ, սէ՛ր, միութի՛ւն,  
Ծարտարարուեստ, գի՛րք՝ գիտութիւն, հո՛ղն հայրենեաց ու սրբութիւն...

«Հայո՛ւ հոգսը մե՛րն է հոգի՛ս, հայու ցա՛ւը մեզ բոլորիս,»  
Ասա՛ց Պասլս մահանալիս... «Դո՛ւն տէր եղիր հային որդիս,  
Եւ այս սպառգամս դու փոխանցիր քո թոռներին ու ծոռներին,  
Թէ չէ հոգիս՝ չզոզանար, մինչեւ լսի կանչը ծոռին...»

Ա Պ Ր Ի Լ Բ Ս Ա Ն Չ Ո Ր Ս ... Օ Ր Կ Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն  
Մ Ո Վ Ս Է Ս Հ Ա Լ Ա Ց Ե Ա Ն

Ու ծնկաչոք ման եմ գալիս իմ հայերին՝ աշխարհով լի,  
Նայում ցաւով իմ անցեալին՝ դեռ գալիքին անյուսալի,  
Ու մտածում պապիս մասին՝ որ հալածում է ինձ անվերջ,  
Ի՞նչ ես տուել ի՛մ հայերին, դու տնաւէ՛ր՝ իմ անգին լաճ...

Հոգիս տանջուած՝ լուսնուռ ու խենթ, լքել է ինձ՝ անօգնական,  
Ու անհոգի, ման եմ գալիս փողոցներով՝ զերթ ուրուական,  
Գլուխ դնում անցորդներին, ո՛չ մի նշոյլ՝ ո՛չ մի դարման,  
Հորացե՛լ է ժպիտն մանկան, պոկո՛ւել լեզո՛ւն անուշ թոռան...

Երանի՛ թէ ամէն մի օր Ապրիլ լինի և քսանչորս,  
Ու այս վշտից փուլ գան սրտերն, սառնապատած՝ անբարեյոյս,  
Դառնան աղօ՛թք, սուրբ պատարա՛գ, մեր մեծ դատի կո՛չ մարտական,  
Տաղուած ամէն հայի ծակտին՝ որպէս պահանջք արդարութեան...

Հազա՛ր յարգանք ու ծնկաչոք հազա՛ր մաղթանք հոգւոց բուրեան,  
Որոնք ինկան անսպասախան, աչքին առաջ կե՛ղծ մարդկութեան,  
Աչքե՛ր դեռ փակ՝ արնաթաթախ, աչքե՛ր անխօս՝ աչքե՛ր նօթի,  
Մինչ աչքե՛ր սուրբ՝ աչքե՛ր դեռ բաց... սպասո՛ւմ են՝ արդար դատի...

Թող ալ յառնեն հոգիները, մեր սյապերի որդեկորոյս,  
Ու հաւաքեն հողմահալած՝ հայ խլեակներն անտէ՛ր անյոյս,  
Մի յարկի տակ՝ ուր կայ անդորր, կապոյտ երկինք, արեւ գարնան,  
Ուր ափ մը հողն կեանք է բուրեան ու ծիչն մանկան՝ հերոսն  
վաղուան...

Թող մեր հոգին ազատ լինի՝ հազարումի կապանքից չար,  
Ու մենք ծափենք որպէս հայ մարդ, հայրենիքի փառքին համար...  
Սեղմե՛նք ամուր ազա՛տ հայու, ձեռքը ազատ ու փրկարար,  
Ընչենք ազա՛տ ու լիաթոք՝ բոյրը հողին մեր կենարար...

Ազա՛տ եմ ես ու իմ հոգիս՝ դուրս եմ բերել գոց վանդակից,  
Կ՛ուզեմ թռչիլ ազատօրէ՛ն, ամէնուրեք՝ վե՛ր ամէնքից,  
Ինձի սլէտք չեն ոսկէ վանդակ, մետաքսեայ թել կամ հանգիստ քուն,  
Կ՛ուզեմ թռչի՛լ ոտաբոբիկ... Մասի՛ս սա՛րը ի՛նձ է կանչում...

Մա՛ է ուղին մե՛ր սյապերի՝ երբ շուարած ման ենք գալիս,  
Մա՛ է թուրը Մասնա՛յ Դաւթի՝ երբ զէնք չունենք պաշտպանուելիս,  
Մա՛ է լոյսը Մասի՛ս սարին՝ երբ կորած ենք մութ աշխարհում.  
Մա՛ է լաստը բո՛ւտ մը հողին՝ կատղա՛ծ անծա՛յր ովկիանոսում...

Թէ ե՛կ ուխտենք... Մենք անարժան զաւակները՝ Արարատի,  
Լինենք խոր՛խտ Մասի՛սի սլէս, խոցուած՝ բայց վէ՛ս ու կենսալի,  
Ելնենք ոտքի Վարդանի՛ սլէս՝ քանդե՛նք մեհեան ու ատրուշա՛ն,  
Կերտե՛նք մեր Նո՛ր Արմենական, հաւատամքի՝ ոսկեմատեան...

**TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ**  
**24 NISAN 1915 DE TÜRKLER TARAFINDAN**  
**BASLATILAN ERMENİ MİLLETİNE KARŞI**  
**SOYKIRIMININ 92. YILDÖNÜMÜ DOLAYISI İLE**  
**LANETNAME N. 1**

18 NISAN 2007 TARİHİNDE MALATYADA HIRİSTİYANLIK PROPAGANDASI YAPTIKLARI İÇİN, BİR ALMAN VE İKİ TÜRK, BOGAZLARI KESİLEREK ÖLDÜRÜLDÜ...

.... SENELERDEN BERİ YAZIYORUZ:

TÜRKLER, ERMENİ SOYKIRIMI YAPMA SUÇU İLE CEZALANDIRILMADIKLARI MÜDDETÇE, YENİ SOYKIRIMLAR, YENİ KATLIAMLAR YAPMAYA DEVAM EDECEKLERDİR...

VE GENE TEKRAR EDİYORUZ.

EY AVRUPALI HIRİSTİYAN MİLLETLERİ.

1915-DE ERMENİ MİLLETİ, TÜRKLER TARAFINDAN SOYKIRIMINA UGRATILIRKEN, KILINIZI BİLE KİPİRDATMADINIZ.

BUNUN CEZASINI ÇEKECEKSİNİZ. VE AVRUPA BİRLİĞİNE GİRMESİNİ İSTEDİĞİNİZ TÜRKLER, İLK FIRSATTA AVRUPADAKİ HIRİSTİYANLARI SOYKIRIMINA UGRATACAKLARDIR.

SON MALATYA KATLIAMI İÇİN TÜRK DEVLET ADAMLARI ŞİMDİ TİMSAH GÖZYASLARI DÖKUYORLAR. BASBAKAN ERDOĞAN: "OLAY BİR VAHŞET" DEMİŞ.

HALBUKİ BİR MÜDDET EVVEL BASBAKAN ERDOĞANIN HÜKÜMET SOZCULARI "BÜYÜK ÇOGUNLUKLA MÜSLÜMANLARDAN OLUSAN TÜRKİYE DE MİSYONERLERİN ÇALIŞMALARINI TENKİT ETMİŞLERDİ".

AYRICA BİR MÜDDET EVVEL TIRABZONDA ÖLDÜRÜLEN RAHIP SANTORO-NUN VE İSTANBULDA ÖLDÜRÜLEN ERMENİ GAZETE YAZARI HRANT DINK-IN KATİLLERİNİN MAHKEMESİDE YILAN HİKAYESİNE DÖNDÜ.

BUGÜN ARTIK HERKES BİLİYORKİ, BÜTÜN BU CİNAYETLERİN ARKASINDA TÜRKİYEYİ İDARE EDEN GİZLİ KUVVETLERİN ELİ VAR....

FAKAT TÜRKİYEDE, ESKİDEN BERİ BÜ, BÖYLE İDİ.

DAHA DOĞRUSU 1908-DE JÖN TÜRK İTTİHATÇILARININ İKTİDARI ELE ALDIKLARI GÜNDEN BERİ, TÜRKİYENİN DIZGINLARI GİZLİ KUVVETLERİN ELİNDE İDİ.

1923-DE CUMHURİYET İLANINDAN, BU GÜNE KADAR DA TÜRKİYEYİ İDARE EDENLER YİNE AYNI GİZLİ KUVVETLER.

VE BU GİZLİ KUVVETLER CEZALANDIRILMADIKLARI MÜDDETÇE, TÜRKİYE KATLIAMCILAR VE SOYKIRIMCILAR DEVLETİ OLMIYA DEVAM EDECEKDIR.

Յ. Չ.



**Ա Պ Ր Ի Լ Ք Ս Ա Ն Չ Ո Ր Ս ... Օ Ր ՝ Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն**  
Մ Ո Վ Ս Է Ս Հ Ա Լ Ա Ց Ե Ա Ն

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ  
ԳՈՐԾԱԴՐՈՒԻԼ ՍԿՍԱԾ ՀԱՅ ԱԶԳԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
92-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՊԱՏԵՅՈՒԹԵԱՄԲ՝**

**Ա Ն Է Ծ Ք Ա Գ Ի Ր Թ Ի Ի 1**

18 Ապրիլ 2007-ին, Մալաթիոյ մէջ քրիստոնէական քարոզչութիւն ընելնուն համար՝ մէկ գերմանացիի և երկու թուրքերու կոկորդները կտրելով սպաննեցին:

Տարիներէ ի վեր կը գրենք.—

Թուրքերը հայկական ցեղասպանութիւն կատարած ըլլալու յանցանքով մինչեւ որ չպատժուին, անոնք պիտի շարունակեն նոր ցեղասպանութիւններ, նոր ջարդեր կատարել:

Եւ կրկին կ'ըսենք՝ Ո՛վ քրիստոնէայ երոպացի Ազգեր՝ 1915-ին հայ Ազգը, թուրքերուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուած միջոցին, ձեր մատն անգամ չշարժեցիք:

Ասոր պատիժը պիտի կրէք: Եւ ձեր՝ երոպական Միութիւն մտնել ջանացող թուրքիան, առաջին առիթով, երոպայի քրիստոնէաները ցեղասպանութեան պիտի ուզեն ենթարկել:

Վերջին օրերուն, Մալաթիոյ մէջ կատարուած սպանդին առընչութեամբ, թուրք պետական անձնաւորութիւններ՝ կոկորդիլոսի արցունքներ կը թափեն:

Վարչապետ Էրտողան՝ «Կատարուած դէպքը՝ վայրագութիւն է» ըսեր է:

Մինչդեռ միջոց մ'առաջ, Վարչապետ Էրտողանին կառավարութեան անդամ պատասխանատուները՝ «Չախջախիչ մեծամասնութեամբ իսլամ եղող թուրքիոյ մէջ, միսիոներներուն տարած աշխատանքներուն համար գանգատ յայտնած էին»:

Ասկէ զատ՝ քիչ մ'առաջ Տրապիզոնի մէջ սպաննուած կաթողիկէ վարդապետ SANTO-RO-ին և Պոլսոյ մէջ սպաննուած հայ լրագրող հրանդ Տինքին մարդասպաններուն դատավարութիւնը առեղծուածի վերածուած էր:

Այսօր ամէն մարդ տեղեակ է, որ այս սպանութիւններուն ետեւ, թուրքիան կառավարող գաղտնի ուժերուն ձեռքը կայ:


Բայց այս վիճակը, թուրքիոյ մէջ, առաջի՛ն օրէն այդպէս էր:

Աւելի ծիշդ... 1908-ին, Երիտթուրք իթթիհատականներուն իշխանութիւնը ձեռք անցուցած օրէն ի վեր, թուրքիոյ սանձերը Գաղտնի Ուժերուն ձեռքն էր:


1923-ին՝ հանրապետութեան հռչակումէն մինչեւ այսօր ալ, թուրքիան կառավարողները նոյն գաղտնի ուժերն են:

Եւ մինչեւ որ այս գաղտնի ուժերը չպատժուին՝ թուրքիան պիտի շարունակէ ըլլալ ջարդերու և ցեղասպանութիւններու պետութիւն:

**Յ. Զ.**




Ո՞վ գիտե...  
 մեր սուրբ  
 նահատակները  
 քանի, քանի՛  
 անգամ նայած  
 են  
 Չանդըրը-ի  
 այս  
 պատմական  
 աշտարակի  
 ժամացույցին՝  
 ապագային  
 հայող  
 իրենց  
 յոյսերով և  
 մտահոգու-  
 թիւններով:



1915-թ.ին  
 այս  
 տուններուն մէջ  
 քանի մը ամիս  
 ապրած  
 մեր  
 սուրբ  
 նահատակ-  
 ներուն  
 տեղ,  
 այսօր հոն  
 կը բնակի  
 ջարդարար  
 թուրքին  
 տիպարը եղող  
 ճիւղ մը:




24 Ապրիլ  
 1915-թ.ին  
 հայ  
 մտաւորական-  
 ներուն  
 սպանդանոցը  
 եղած Այաշ-ի  
 մէջ,  
 այսօրուան  
 քաղաքապե-  
 տութեան ցու-  
 ցատախտակը:



Դահիճներու քաղաք Այազ-էն հին շէնք մը:



Դահիճներու քաղաք՝ Այազ-ի հին «ANAVATAN» կուսակցութեան կեդրոնը: Հայերէն թարգմանութեամբ՝ «Մայր Հայրենիք» կոչուող այս կուսակցութեան անդամներուն մայր հայրենիքը ո՞ր է արդեօք-«Միջին Ասիոյ տափաստանները»-:



Յեղասպան թուրքին խորհրդանիշը եղող Այազ-ի հին թաղամասին տխրալուշ «Մինարէ»ն:







Դահլիճ քաղաք  
Այաշ-ի մէջ,  
հին և նոր  
շէնքեր  
քուլ-քուլի



Հին  
Այաշ-էն...  
հին շէնքեր



Հին  
Այաշ-էն...  
հին շէնքեր



Դահիճ քաղաք  
Այաշ-էն  
տեսարաններ:  
Հայ արտորեալ  
մտաւորական-  
ները՝ այս  
քաղաքին  
փողոցներուն  
մէջ պտղտելու  
առիթ  
չեն ունեցած:

ՈՒՄՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ՝ ԴԵՊԻ 24 ԱՊՐԻԼ 1915-Թ.Ի  
ՍՊԱՆԴԱՆՈՅԸ ԵՂԱԾ  
ՉԱՆՂԸՐԸ ԵՒ ԱՅԱԾ:  
Ո՞Վ Է ՈՒՄՏԱԳՆԱՅ ԱՐՄԷՆ ԱՐՈՅԵԱՆ

Ասկէ տասը տարիներ առաջ էր. Լոզանի մէջ, Ժընեւի Հոգեւոր Հովիւ Դոկտ. Աբէլ Քահանայ Մանուկեան և գանատաբնակ Տիկ. Մարօ Մանաւեան մեզի նուիրեցին video-cassette մը, որուն վրայ մեր բուն հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանը և թուրքերուն բարբարոսութիւններէն փրկուած, մեծ մասամբ կիսափրլատակ վիճակի մէջ եղող սպառնական յուշարձանները դիտելու մեծ, բայց նաեւ տխրութեամբ սպարուրուած հաճոյքը ունեցանք:

Տեսաերիզը պատրաստողը Լոս Անճելըս-աբնակ, նախկին Ճիպլինցի ընտանիքի գաւակ՝ Արմէն Արոյեանն էր, որ ամէն տարի Ամերիկայէն դէպի Արեւմտեան Հայաստան ճամբորդութիւններ կը կազմակերպէր, որուն կը մասնակցէին կին եւ այր՝ շատ մը հայրենասէր հայեր: Եւ Արմէն Արոյեան այս ուղեւորութիւն-ուխտագնացութիւնները ինք կը նկարէր և կը ծայնագրէր:

Այս՝ դէպի մեր արմատները, դէպի մայր հայրենիք ճամբորդութիւններուն իբր ուղեցոյց, շատ անգամ կը մասնակցէին Մեսրոպ Արք. Աշճեանի և Դոկտ. Հրանդ Մարգարեանի նման հմուտ անձնաւորութիւններ, որոնք իրենց սուած բացատրութիւններով աւելի կ'իմաստաւորէին ու կ'արժեւորէին այս բնոյթի ուխտագնացութիւնները...:

Այս տեսաերիզը սկզբնաւորութիւն մը եղաւ. և մենք կապ հաստատեցինք Լ. Անճելըս-աբնակ Արմէն Արոյեանի հետ:

Եւ ան մեզի ուղարկեց դէպի Արեւմտեան Հայաստան կատարած գրեթէ բոլոր ուխտագնացութիւններուն տեսաերիզները:

Եւ այս ձեւով, առանց Հայաստան երթալու, ճանչցանք մեր բուն հայրենիքը, անոր ամէն մէկ քաղաքը, գիւղը և ամէն մէկ սուրբ յուշարձանը:

Եւ այս տեսաերիզներով առիթ ունեցանք տեսնելու և մտիկ ընելու (→ էջ 12)

**ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 92-ԱՄԵԱԿԸ... ՆՈՐ ՏԱՐԵԴԱՐՁ, ՆՈՐ ... (Ծար. էջ 1-էն)**

շրջահայեաց: Չմոռնանք, որ մեր ամենավստահելի դաշնակիցը Ռուսաստանն է... բոլոր ժամանակներու Զրեմլինը: Սրբագրենք սխալն ու թերին: Մեր ունեցած պակասները լրացնենք: Նոր մարտահրաւերին կուրծք տանք պէտք եղած բոլոր միջոցներով:

Արդարեւ, լաւ գիտակցիմք, որ Ոճրապարտը այժմ դարձեր է աւելի վայրագ ու վրէժխնդիր: Ինքզինք չքմեղացնելու, ոճիրը մոռցնելու, աւարը չվերադարձնելու և վերջին տարիներուն կրած պարտութիւն-նահանջները [Արցախի ազատագրութիւն, հայկ. ցեղասպանութիւնը ճանջցող տէրութիւններու թիւի յաւելում, նոր խոչընդոտներու գոյացումը Թուրքիոյ Եւրամիութիւն մուտքին առջեւ, ստիպումը Անգարային որ վերանայի իր անցեալին և ընդունի իր ոճրապարտութիւնը...] զինք մղելու տեղ որ խոհեմաբար սեփական յանցանքները խոստովանի և ինքնասրբագրուի՝ Դահիճին դարձուցեր են աւելի բիրտ, արիւնարբու և ռիսկալ: Սպառնական: Ապացոյց՝ թրջալեզու երկիրներու նորերս կայացած ժողովը որ տեղի ունեցաւ Ատրպէյճանի մէջ: Այստեղ մէկտեղուած «Լեզուի և արիւնի եղբայրները» իրենց հակա-գրոհը ծրագրեցին: Նախ և առաջ՝ հայութեան դէմ: Երդուելով վերագրաւել Արցախը և չիք դարձնել հայոց պահանջները: Պնդելով, որ ցեղասպանութիւն չէ եղած: Չաբուտելով, որ գրաւեալ Արեւմտահայաստանը Թուրքիոյ կը պատկանի, քանի որ հոն հայ... չկայ: Եւ մարտնչող հայկական Սփիւռքին հակադրուելու համար ժողովը որոշեց կազմակերպել «Թրքական Սփիւռք»ը որ... պիտի ջանայ, բոլոր միջոցներով՝ խափանել սփիւռքահայութեան արդարատենչ գործունէութիւնը: Արդար և յանձնառու Հայկ. Արտասահմանին դէմ ծրագրուած սոյն նախաշարժակումի սկսման մէկ նշոյլը, թոյլ նախանշանը կը սեպուի Հրանդ Տիկնի սպանութիւնը, Պոլսահայութեան և Պատրիարքին ուղղուած սպառնալիքները: Դեռ երէկ, Մալաթիոյ մէջ, զինեալներ խուժած են քրիստոնէական հոգեւոր գրականութիւն լոյս ընծայող հրատարակչատուն մը և հոն գտնուող սեփականատէրն ու չորս ուրիշները սպաննած: Թրքական «Ժխտողականութիւնը» իր անհանդուրժողութիւնը կրկին եաթաղանով արտայայտելու միտում կը ցուցաբերէ:

Նորաստեղծ «Թրքական Լոպի»ին նորագոյն «Հակագրում»ները Հայ-Սփիւռքին դէմ ի՞նչ, ո՞ր և ե՞րբ կ'ըլլան-անոնք իրենց դէմքը ցոյց կուտան շուտով: Հայութիւնը պատրաստ գտնուելու է, սակայն, ինչքան ոճրապարտ՝ նոյնքան ու աւելի նենգ, ռիսերիմ ու վրիժառու թուրքին մութի մէջ նիւթած դաւերուն դէմ:

Սա կը նշանակէ, որ նորատիպ գօտեմարտի հանգրուան մը կը բացուի հայ-թուրք արդէն ձգտուած յարաբերութիւններու տխուր պատմութեան մէջ: Հայութիւնը կը դարձուի թիրախ Յեղասպանին կողմէ, որ կ'ուզէ նոր ու սեւ օղակ մ'աւելցնել շարան կազմող եղեռնագործութիւններու իր արիւնոտ շղթային վրայ: Հայը, ինչպէս միշտ, «մեղաւոր» է իր արդար դատը, բռնախլուած հողի վերատիրացումին հասնելու և, մինչեւ անգամ, ինքզինք պաշտպանել ուզելուն համար: Մինչ անպարտ ոճրագործը կը մնայ ազատ, որ նոր նախճիրներ սարքէ անմեղ, արդէն անիրաւուած ու Միջազգային Արդարութեան կողմէ դե՛ռ թողլըուած ու անտէր, սրատուած Ազգի մը մնացորդին դէմ:

Գրիչը հայու-միշտ-արեան մէջ թաթխելով հայկ. ցեղասպանութեան յաւելումած էջը գրելու պատրաստուող թուրքին դէմ, հայութիւնը կը վերցնէ՞ իր երեսին նետուած սա ձեռնոցը: Եթէ այո՝ բայց ինչպէ՞ս: Բեմերէն գեղեցիկ ու հոգեյոյզ ճառ-քարոզներ խօսելով: Մէկ օր ու ժամ «Միասնութիւն» հոլովելէ ետք, ամբողջ տարին իրարու կռնակ դարձուցած ու գրեթէ ձեռնածալ նստած-ապրելով:

Հաւուն աահանօատիոական ոտոտումո. Հաւ-Դաւոտ աաշտաանութեան աշ-



Հայուն պահանջատիրական ոգորումը, Հայ-Դատի պաշտպանութեան աշխատանքը նոր փուլ մտած է այսօր: Իւրաքանչիւրէս [ըլլանք համայնք, յարանուանութիւն, կուսակցութիւն, միութիւն, ընտանիք թէ անհատ] կը պահանջուի առաւել զգաստութիւն, լրջութիւն և վերակազմակերպում: Համազգայի՛ն մակարդակի վրայ: Ծարքերու խտացումով: Բոլորիս միջոցներն ու կարելիութիւնները իրարու համադրելով: Զանոնք ներդաշնակելով և յատկացնելով հասարակաց նպատակին, որ կարենանք ճակատ յարդարել օր ցերեկով ու բացէն մեզի ուղղուած Թուրք-Ազերիական սպառնալիքներուն դէմ. ասոնք եկած ըլլան Պաքուէն թէ՞ Գորշ Գայլերու ուրիշ որջերէ...:

Դատապաշտպան հայութեան մերօրեայ կարգախօսը որոշ ու յստակ է: Մեզմէ կը սպասուի առաւելագոյն միասնութիւն և միաձոյլ աշխատանք՝ Սփիւքէն մինչեւ Հայաստան: Կոչուած ենք պայքարելու մէկ և ընդհանուր ռազմավարութեամբ և ուսումնասիրուած մարտավարութեամբ մը: Գործելակերպերը կրնան մերթ իրարմէ տարբերիլ: Բայց հիմնական նպատակն ու թիրախը պիտի մնան անփոփոխ, մէկ և ընդհանուր տեսլականի մը ուղղուած-Կերտել Ամբողջական Հայութիւն եւ Հայաստան:

Իսկ այդ համազգային ռազմավարութիւնը հարկ է, որ ըլլայ որոշ, կտրուկ և համարձակ: Եւ կիրարկելու է շեշտակի, անշեղ, առանց ծռմուկելու, թեքելու աջ ու ձախ: Պատեհապաշտութիւնը կամ երկերեսութիւնը ո՛չ խոհեմ և ոչ ալ յանձնարարելի մարտավարութիւն է: Դիւանագիտութեան մէջ «ճկուն» ըլլալ՝ չի նշանակեր... մէկուն գրկին նստած՝ միւսը սիրել: Կամ՝ երկուքին միաժամանակ: Որուն «Կոմպլեմանտարիզմ» կը կոչեն մեր պետական այրերը:

Թուրքին հետ մեր խօսակցութեանց մէջ ըլլալու ենք կտրուկ և սկզբունքային: Երկլեզուով արտայայտուիլը վնասաբեր է նա՛խ՝ մեր շահերուն:

Ըսած ենք. կրկնենք-«Հողային պահանջ չունինք Թուրքիայէն», «Դէմ չենք, որ Թուրքիան Երոպա մտնէ», «Դիւանագիտական կապ հաստատենք, սահմանը բանանք և առետուր ընենք առանց պայմանի»... և նման հայավնաս խօսքեր մեր Դատ-ին բունը կը կացինահարե՛ն:

Չըլլանք միամիտ խորհելով նախ՝ որ նման հաւաստիք շռայլելով կրնանք մեզմէ աւելի խորամանկ և աղուէսաբարոյ Թուրքը խաղի բերել և մեր ուզածը՝ իրեն ընդունիլ տալ: Ապա՝ այսպիսի «Հաճոյախօսութեամբ» ոչ միայն բռնագրբաւիչ- ոճրապարտը չենք կրնար շողոմել, այլեւ՝ կը զարմացնենք ու մեզմէ կը հեռացնենք մեր օտար, Դատին համակիր բարեկամները: Անոնք կրնան մեր երեսին տալ ըսելով.- Եթէ դուք հողային պահանջք չունիք... Եթէ դէմ չէք, որ Թուրքիան Երոպական Միութեան անդամակցի առանց ընդունած ըլլալու հայկական ցեղասպանութիւնը՝ ինչո՞ւ մենք ըլլանք ընդդիմացողը... ձեր տեղ»:

Ասոր հակառակն է ճիշդը, անտարակո՛յս: Յեղասպանին հանդէպ պահանջատէր, անզիջող, վճռական ու յանդուգն կեցուած ցոյց տալով և մեր Դատին արդարացի ըլլալուն վրայ անդրդուելի յամառութեամբ պնդելով է, որ հայութեան բարեկամ-նեցուկ պետութիւններուն և անոնց ժողովուրդներուն թիւը պիտի կրկնապատկենք: Ինչպէս որ կը կատարուի այսօր: Երկրագունտին տարբեր անկիւններէն զօրակցութիւններ տա՛կաւ կը հասնին մեզի, որուն համար ուրախ ենք և հպարտ:

Պարտինք ո՛չ միայն ըլլալ շնորհակալ մեր իրաւունքներու պաշտպանութեան ձեռք մեկնող բարեկամ-դաշնակիցներուն, այլեւ տանելու ենք համոզիչ աշխատանք վարանոտներուն մօտ, որ ասոնք հակին դէպի մեզ: Ըսելով անոնց

թե՛ սեփական քաղաքացիներուն անգամ իրենց կրօնին, ազգութեան, լեզուին ու գաղափարին համար գնդակոծող կամ բանտարկողները ինչպե՞ս կարելի է քաղաքակիրթ ազգերու շարքին դասել: Երբ Թուրքիոյ «Աւանդական դաշնակից» Գերմանիոյ Վարչապետ Տիկ. Անկելա Մերքելն անգամ կ'ըսէ, թէ Թուրքիոյ անդամակցութիւնը ԵՄ-ին երկար ժամանակի կը կարօտի, մենք՝ հայե՞րս պիտի ըլլանք, մեր «Արտաքին Գերատեսչութեան Պետ»ին բերնով ըսող... Դեմ չենք, որ այդ անդամակցութիւնը օր առաջ կատարուի»:

Փակագծի մէջ ըսենք սակայն, որ մեր «Ի խորոց սրտի» եկած մաղթանքն է, որ վարչապետուհին այդպէս արտայայտուած չըլլայ իր բարեկամ Էրտողանէն մէկ քանի տնտեսա-քաղաքական գիշումներ կորզելու համար լո՛կ... հայուն արիւնը սակարկութեան նիւթ դարձնելով: Ինչպէս ըրաւ Կայսերական Գերմանիան 1914-թ.ին: Թոյլ, երկդիմի, երկչոտ և գիջական կեցուածքով չէ, որ իրաւունք կը պաշտպանուի: Արդար վճիռ կրնայ շահիլ անիրաւուած մարդը:

Բարի-դրացիական կապերու հաստատումին դեմ չի կրնար ըլլալ բնութեամբ բարի ու խաղաղասէր հայը: Միայն թէ, տուեալ հարեւանին հետ այդ գոյակցութիւնը հիմնուած ըլլալու է արդարութեան, փոխադարձ յարգանքի ու իրարու ներքին գործերուն չմիջամտելու սկզբունքի՛ն վրայ:

... Եւ ոչ թէ բռնագրաւուած Հայաստանի կորուստին համակերպելու, ցեղասպանութիւնը մոռնալու և «Անցուկը մոռցուկ է» ասացուածքն իրացնելով:

Հայութիւնը անդրդուելի պահանջատէր է ու կը մնայ: 92-ամեակը կը կոփէ իր կամքը: Եւ կը յուշէ բոլորիս դարերէն եկած մարտավարական դաս-սկզբունք մը որ կը յորդորէ., ԼԱԻԱԳՈՅՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՄԱՐՁԱԿ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆՆ Է, ԱՐԴԱՐ ՆԱԽԱՅԱՐՁԱԿՈՒՄԸ: ԵՒ Ո՛Չ ԹԷ ՋԻՋՈՒՄՆ ՈՒ ՆԱՀԱՆՋԸ:

ՈՒՄՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ՝ ԴԵՊԻ 24 ԱՊՐԻԼ 1915-Թ.Ի... (Շար. էջ 11-էն)

այդ հողերուն վրայ շարդերէն ճողոպրած տարեց հայերու խօսակցութիւնները:

Իրապէս ալ, մեր բարեկամին կատարածը՝ հայապահպանման օգտին եղած բացառիկ գործունէութիւն մըն էր: Անոր տեսաերիզները՝ Հայաստանի պատմական յուշարձանները ձեռով մը փրկեցին թուրքերուն կողմէ բոլորովին բնաջնջուելէ:

Եւ այդ վիտէօներու շնորհիւ հայկական պատմական յուշարձանները և վայրերը անմահացան:

\*\*

Բայց այս բոլոր տեսաերիզներուն մէջ պակաս բան մը կար, որ երկար ատեն իվեր մեր միտքը կը չարչրկէր:

Ինչո՞ւ 24 Ապրիլ 1915-թ.ի սպանդանոցները եղող Չանդըրը-ի և Այաշ-ի մասին, մինչեւ այսօր ոչ մէկ նկար, ոչ մէկ տեղեկութիւն և մանաւանդ՝ ոչ մէկ տեսաերիզ գոյութիւն ունեցած է:

Մինչդեռ հրեաները իրենց «HOLOCAUSTE»-ին կատարուած բոլոր վայրերը՝ AUSCHWITZ-ը, DACHAU-ն BUCHENWALD-ը և նման CAMP DE CONCENTRATION-ները սրբաւոեղիներու վերածած են:

Իսկ մենք Չանդըրը-ն և Այաշ-ը ոչ միայն սրբաւոեղիի վերածած չէինք, այլ՝ նոյնիսկ հայ կրօնական մը, մինչեւ այսօր. Չանդըրը և Այաշ չէ համարձակած երթալ և նահատակ մտաւորականներուն անյայտ գերեզմանոցը եղող այդ հողերուն վրայ աղօթք մը մըմնջել...:

Այս մտասեւեռումներով դիմեցինք Արմէն Արոյեանին և իրմէ խնդրեցինք, որ իր ուխտագնացութիւնը ամբողջացնէ և մինչեւ հիմա ոչ մէկ կրօնականի և նաեւ աշխարհականի կողմէ չայցելուած, 24 Ապրիլ 1915-թ.ի սպանդանոցները եղող՝ Չանդըրը և Այաշ ուխտագնացութեան երթայ...:

\*\*

Մեր ուղեգնաց ազգակիցը շատ ճիշդ գնահատելով այս ուխտագնացութեան կարեւորութիւնը՝ սիրով ընդունեց մեր առաջարկը...

Եւ 15 Սեպտեմբեր 2006-թ.ին, ինք և իր երկու հայ ուղեցոյցները ինքնաշարժով Պոլիսէն ճամբայ ելան դէպի առաջին սպանդանոց՝ Չանդըրը...:

Չանդըրը-ի հին քաղաքը սլորտելէ և նկարահանելէ յետոյ, մեր ուխտագնաց, յանդուգն բարեկամը, իր երկու ուղեցոյցներով կը դիմեն Չանդըրը-ի բարձունքը գտնուող պատմական բերդը, ուրկէ ինք իր հայեացքը կ'ոտղղէ դէպի վար, հին Չանդըրը-ի տնակ-բնակարանները, ուր քանի մը ամիս բնակած էին մեր նահատակ մտաւորականները: Եւ հոգեհանգիստ մը կատարելու ինքնամփոփումով և երկիւղածութեամբ կը կարդայ Չանդըրը-ի մէջ նահատակուած Ռուբէն Սեակի մասին իր հոգեյոյզ դամբանականը և կ'ընթերցէ նոյնքան թախծալից մէկ քերթուածը հերոս-նահատակ բանաստեղծին:

Ուխտագնացները կը փնտռեն նաեւ երբեմնի Հայկ. եկեղեցին: «Հոս էր, այժմ քանդուած է» - կը պատասխանուի: Հոն էր, որ Կոմիտաս Վրդ., աքսորէ վերադարձէ առաջ, պատարագած էր տարագիր հայ մտաւորականներուն համար, որոնց մասին Յովհան Ծ. Վ. Կարապետեան պիտի վկայէր յետագային... *Մատուտից դասին առջեւ ասպետական դիրքով կանգնած էր Տօքթ. Չիլիմկիրեան: Կը զգայի, թէ ինք, այդ վայրկեանին կը մարմնացներ մեր ցեղին հաւատքի դիւցազնութիւնը: Երկիւղի նշոյլը անգամ չկար իր առնական դէմքին արտայայտութեան մէջ: Սեակ առաջինը եղաւ Ս. հաղորդութիւն ճաշակող: Չեմ կրնար մտքէս հեռացնել իր այդ օրուան գրախօս վեհութիւնը: Կը նմանէր յաղթական կաղնիին, որուն բունը տապալել կը պատրաստուէին փայտահատները...»:*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ» - 1922-թ.

\*\*

Մեր ուխտաւոր հայրենակիցը և իր երկու հայ ուղեցոյցները, հոգեպէս շատ ընկճուած վիճակով կը բաժնուին Չանդըրը-էն և կ'երթան դէպի 24 Ապրիլ 1915-թ.ի երկրորդ սպանդանոցը եղող Այաշ քաղաքը...

Այաշ աքսորուած հայ մտաւորականները այնտեղ շատ ծանր պայմաններու մէջ գտնուած էին, քանի որ, բոլորն ալ մնացին բանտարկուած: Իրենց արգիլած էին դուրս գալ: Եւ Այաշ աքսորուած հայ մտաւորականներէն շատ քիչեր Պոլիս վերադարձան: Գրեթէ, բոլորն ալ, նահատակուեցան...:

Եւ այս անիծեալ Այաշ-էն Արոյեան և իր ընկերները, ինքնաշարժով Պոլիս վերադարձի ճամբուն վրայ, ինքզինքնին շատ սիրելի անձի մը յուղարկատրութենէն վերադարձողի հոգեվիճակի մէջ զգացեր են:

\*\*

Մենք կը հաւատանք, որ Արմէնի և իր ընկերներուն Չանդըրը և Այաշ կատարած ուխտագնացութիւնը՝ պատմական բացառիկ ձեռնարկ մըն է...

Եւ մենք ունինք այսօր Չանդըրը-ի և Այաշ-ի սպանդանոցներու նկարները: Եւ ունինք մանաւանդ՝ այս ուխտագնացութիւնը յաւերժացնող տեսաերիզը՝ DVD-ն:

Հազար շնորհակալութիւն՝ քեզի և ընկերներուդ՝ Սիրելի Արմէն Արոյեան: Գիտակից հայ ժողովուրդը երախտապարտ է ձեզի:



**ՆԱՂԱՂԱՍԵՐ ԱԶԳԵՐ ...  
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ...**

ԱՐԵԱՆ ԾԱՐԱԻ ԱՐԵԻՍՏԵԱՆ  
«ՀՐԷՇՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ»,  
ՈՒՒՍԻԱՆ ՆԵՐՄԵՆ ԶԱՆԴԵԼՈՒ ԻՐԵՆՑ  
ԾՐԱԳԻՐՆԵՐԸ ԳՈՐԾԱԴՐԵԼ ՍԿՍԱՆ:

ԵՒ Ո՞Վ Է ԱՐԵԻՍՏԵԱՆ ՀՐԷՇՆԵՐՈՒՆ  
ՈՒՒՍԻՈՑ ՄԷՋԻ ԱՅԴ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԷՆ ՄԵԿԸ...

ԿԵՐԻ ԿԱՍՊԱՐՈՎ ԿՈՉՈՒԱԾ ԱՅԴ  
[ԻՐԻ ԹԷ] ՀԱՅԸ:

ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ  
ՀՕՐԸ ԿՈՂՄԷ ՀՐԵԱՅ ԵՂՈՂ,  
ԵՒ ՊԱՔՈՒ ԾՆԱԾ ԱԶԵՐԻ ՄԸՆ Է:

ՈՒՒՍԻՈՑ ՆԱԽԱԳԱՀ  
ՎԼԱՏԻՍԻՐ ՓՈՒԹԻՆ,  
26 ԱՊՐԻԼ 2007-ԻՆ,  
ՈՒՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՈՒՂՂԱԾ  
ԻՐ ՊԱՏԳԱՍԻՆ ՄԷՋ ՍԱՊԵՍ ԸՍԱԻ՝  
ԳԱՂՈՒԹԱՐԱՐ ԱՐԵԻՍՏԵԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԻՐԵՆՑ ԿԵՂՑ «DEMOCRATIQUE»  
[ԺՈՂՈՎՐԴՆԱԿԱՐԱԿԱՆ] ՉԱԲՈՏՈՒԹՆԵՐՈՎ  
Կ՝ՈՒԶԵՆ [ԱՆՑԵԱԼԻՆ ԸՐԱԾՆՈՒՆ ՆՄԱՆ] ՄԵՐ  
ԵՐԿՐԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՂՈՊՏԵԼ:

1789-ԻՆ ՍԻՈՆԱԿԱՆ ՀՐԵԱՆԵՐՈՒՆ ՀՐԱՀՐԱԾ  
ՖՐԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵՆԷՆ Ի ՎԵՐ  
ԵՒ ՄԻՆՉԵԻ ԱՅՍՕՐ,  
ՆԵՂՃ ՈՒՒՍ ԱԶԳԸ՝ ԱՐԵԻՍՏԵԱՆ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՈՊՏԻՉ  
ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ Է:

ՅՈՎԱՆՆԵՍ ԶՆԻՆԿՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՈՒՌԲԷՆԵԱՆ]

1789-թ.ին հրեաներուն հրահրած ֆրանսական Յեղափոխութենէն յետոյ էր որ Նափոլէոն, սիոնական հրեաներուն տուաւ բոլոր «Ազատութիւնները» որ անոնք Աշխարհին տիրապետելու իրենց ծրագիրներուն գործադրութիւնը շարունակեն:

Եւ Նափոլէոն, ասոր փոխարէն, հրեաներէն առաւ «ԴՐԱՄ»:

Չմոռնանք շեշտել, որ Նափոլէոնի պէս ռազմատենչ բռնակալ մը՝ շատ լաւ հասկցած էր ամբողջ Աշխարհի մէջ «ԴՐԱՄ»ին ներկայացուցած ուժը:

Եւ շատ նշանաւոր, անմոռանալի սախօսքերը ըսած էր՝

«ՊԱՏԵՐԱԶՍ ՄԸ ԾԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԵՔ ԲԱՆ ՊԷՏՔ Է՛

ԱՌԱՋԻՆԸ՝ ԴՐԱՄՆ Է:

ԵՐԿՐՈՐԴԸ՝ ԴՐԱՄՆ Է:

ԵՐՐՈՐԴԸ՝ ԿՐԿԻՆ ԴՐԱՄՆ Է:

Այսինքն՝ Նափոլէոն հրեաներուն տուաւ «Ազատութիւն»ը, և ասոր դիմաց առաւ հրեաներուն դրամը, որ շարունակէ պատերազմներ մղել և միլիոնաւոր անմեղներուն մահուան պատճառ դառնալ:

\*\*

Եւ Նափոլէոն 1918-թ.ին յարձակեցաւ Ռուսիոյ վրայ: Պիտի ըսէք՝ Ֆրանսան ո՛ր, Ռուսիան ո՛ր:

Նափոլէոնը ի՞նչ կ'ուզէր Ռուսիայէն:

Ռուսերը ի՞նչ ըրած էին ֆրանսացիներուն:

Նափոլէոնի պէս ռազմագէտ կայսր մը շատ լաւ գիտնալու էր, թէ ի՛նչ ծանր հետեւանքներ կրնար ունենալ իր բանակներուն ֆրանսայէն այդքան հեռանալը:

Մենք կը հաւատանք, որ Սիոնիզմը ի՛նք թելադրած էր Նափոլէոնին որ Ռուսիան գրաւէ, որ իրենք Ռուսերուն հարստութիւններուն տիրանան:

Բայց Ռուսերը, *BEREZINA*-ի պատերազմին՝ ֆրանսացիներուն պարտութեան մատնեցին: Եւ Նափոլէոնին բանակները կիսով արդէն ջարդուած՝ խուճապահար խոյս տուին Ռուսիայէն:

Այս սպառնալից արդիւնքը այն

եղաւ, որ հարիւր հազարներով անմեղ մարդիկ մահացան: Բայց, ֆրանսացի զոհերու կողքին, նոյն չափով ալ Ռուսեր մահացան, և Նափոլէոնը մարդկային-նիւթական ծանր կորուստներ պատճառեց Ռուսիոյ:

\*

\* \* \*

Շատերուն ծանօթ է Խրիմի ահեղ պատերազմը, որ 1854-1855-թ.ներուն կատարուեցաւ:

Բայց գիտէի՞ք արդեօք, որ Խրիմի պատերազմին թուրքերուն օգնելու համար, ուրիշ Նափոլէոն մը՝ Նափոլէոն Գ. Կայսրը՝ Ռուսիոյ վրայ յարձակած էր կրկին....

19-րդ դարուն սկիզբը, Օսմանեան կայսրութիւնը կործանումի ճամբուն մէջ էր: Եւ Ռուսերը սլոտի ազատագրէին Օսմանեան բարբարոսներուն գրաման տակ եղող Անաթոլիան, Պոլիսը և Արեւմտեան Հայաստանը: Բայց Ֆրանսան և Անգլիան արգելք եղան, և օգնեցին թուրքերուն...:

30 Նոյեմբեր 1853-թ.ին Ռուսական նաւատորմը՝ Սեւ ծովու մէջ քանդեց Օսմանեան նաւատորմը: Եւ այս Օսմանեան նաւատորմին քանդուիլը սլաւոքուակ եղաւ, որ 27 Մարտ 1854-թ.ին, Նափոլէոն Գ.ի Ֆրանսան և Վիքթորիա թագուհիին Անգլիան պատերազմ հռչակեն Ռուսիոյ դէմ:

Եւ Ֆրանսական, Անգլիական, Սարտինիոյ թագաւորութեան ու Օսման-



1855-թ.ին Այվազովսքի-ին երկնագրած այս պաստառը կը ներկայացնէ Խրիմի պատերազմը [1853-1854-թ.], ուր կ'երեւի Ռուսիոյ վրայ յարձակող Ֆրանսական, Անգլիական, Օսմանեան և ուրիշ... պատերազմական նաւերուն խորտակուիլը Սեւաստափոլի ժայռերուն վրայ...: Այվազովսկին իր այս պաստառով ուզած է հայ ժողովուրդին հասկցնել, թէ ո՛վ է հայուն բարեկամը և ո՛վ է հայուն թշնամին...:



եան կայսրութեան նաւատորմները  
յարձակեցան Խրիմի վրայ:

\*\*

Եւ խեղճ Ռուս ժողովուրդը կրկին են-  
թարկուեցաւ ֆրանսացիներուն և  
իրենց զինակիցներուն բարբարոսու-  
թիւններուն:

Եւ ինչո՞ւ մղուեցաւ այս պատերազ-  
մը: Որովհետեւ Ռուսական բանակնե-  
րը պիտի ազատագրէին Զրիտոնէու-  
թեան Օրթանը եղող Անաթոլիան Թուր-  
քերուն տիրապետութենէն: Իսկ ասոր  
արգելք եղողները (իբր թէ) Զրիստոնե-  
այ ֆրանսացիներն ու Անգլիացի-  
ներն էին...

Անցած էին այն ժամանակները, երբ  
Անգլիոյ և ֆրանսայի Խաչակիրները  
Երուսաղէմը Իսլամներուն ձեռքէն իբր  
թէ ազատագրելու համար կը պատե-  
րազմէին: Եւ դարերը փոխուած էին  
այլեւս: Եւ 1789-թ.ին ֆրանսական յե-  
ղափոխութենէն յետոյ, կրօնի և գա-  
ղափարի ազատութիւն կար իբր թէ, և  
1793-թ.ին հրատարակուած էր «DECLA-  
RATIONS DES DROITS DE L'HOM-  
ME»ը («Մարդու իրաւունքներ»):

Մենք կը հաւատանք, որ «DROITS  
DE L'HOMME»ին բուն նպատակը  
ազատութիւն տալ էր Սիոնական  
«Հրեաներուն որ իրենց աշխարհակալ  
ծրագիրները իրականացնեն»:

\*\*

1914-1918-թ.ի Ա. Աշխարհամարտը՝  
Ռուս Ազգին համար ամէնէն ողբեգա-  
կան տարիները եղան:

Բայց, այս անգամ, Ռուսիոյ վրայ  
յարձակողները ֆրանսացիները և  
անգլիացիները չէին: Հոս՝ դերակա-  
տարներու փոփոխութիւն կար: Գեր-  
մանացիներն էին Ռուսիոյ վրայ յար-  
ձակողները այս անգամ:

Որովհետեւ, այն տարիներուն, Գեր-  
մանիան սիոնական հրեաներուն տի-  
րապետութեան ենթարկուած էր:

Եւ այդ տարիներուն՝ Ա. Աշխարհա-  
մարտի աւարտի օրերուն, Ռուսիոյ  
մէջ 1917-ի յեղափոխութիւնը սկսաւ:

Եւ Ռուս ազգի Առաջին Աշխարհամար-  
տաղաքացիական պատերազմի ընթաց-

քին, Ռուս ազգին տուած զոհերուն թիւը շուրջ տասը միլիոնի բարձրացաւ:  
Եւ այսօր նոր փաստաթուղթերով կը հաստատուի, որ 1917 Ռուսական  
Յեղափոխութիւնը հրահրելու և գործադրելու մէջ, Սիոնիզմը կարեւոր դեր  
ունեցած է, որ շարժումը յօգուտ իրեն ծառայեցնէ:

\* \* \*

Երկրորդ Աշխարհամարտը Ռուս ազգին համար ամէնէն սարսափելի  
սպառերագմը եղաւ: Որովհետեւ Սովետական Միութիւնը, այս սպառերագմին,  
20 միլիոնէ աւելի զոհ տուաւ:

Եւ կրկին Գերմանացիներն էին Ռուսիոյ վրայ յարձակողները: Եւ ի՞նչ էր  
սպառնառը: Պատրուակը այս անգամ, Ռուսիոյ Ընկերվարական վարչաձեւով  
կառավարուիլն էր...

Այսօր պատմական իրականութիւն մըն է այլեւս, որ 1933-թ.ին Գերմանիոյ  
մէջ Հիթլերը իշխանութեան բերողները՝ Սիոնականացած Ամերիկայի առաջ-  
նորդութեամբ «Մեծ Դրամատերերու Կազմակերպութիւններ»-ն էին: Եւ  
ծրագիրը գործադրուեցաւ: Եւ գրեթէ տասը տարիներու սպառաստութեան  
յետոյ Հիթլեր, 1941-թ.ին Ռուսիոյ վրայ յարձակեցաւ...

Բարեբախտաբար, Հիթլերի բանակները չկրցան ջլատել Ռուս ժողովուր-  
դին սպայքարի ոգին և ուժը:

Եւ Գերմանացիները պարտուեցան, և Խորհրդային Միութեան և գլխա-  
ւորաբար Ռուս բանակները վճռուեցին նախայարձակ գերմանացիները  
մինչեւ Պերլին: Հայաստանը եւս իր նկատելի զոհաբերութիւնը ունեցաւ այս  
Մեծ Յաղթանակի կերտումին մէջ, թոյլ չտալով որ Նացի Գերմանիոյ դաշ-  
նակից Թուրքիան խուժէ Հայաստան և ամբողջացնէ Մեծ Եղեռնը, հայկա-  
կան ցեղասպանութիւնը:

Բայց, Ռուսիան կրկին աներակի վերածուած էր: Եւ տասնեակ միլիոննե-  
րու հասած էր ռուս զոհերուն թիւը:

\* \* \*

Մենք, այս գրութեամբ ուզեցինք բացատրել, որ Ռուս Ազգը՝ 1789-ի ֆրան-  
սական յեղափոխութենէն ի վեր, տեսաբար Սիոնական հրեաներուն և Սիո-  
նականացած Արեւմուտքին կողմէ հրահրուած սպառերագմերու ենթարկը-  
ւած և տառապած է: Ռուսաստանը կրկին ու կրկին քանդուած է: Այսինքն՝  
նախայարձակները, մի՛շտ, արեւմտեան պետութիւններն են, իսկ գլխաւոր  
տուժողը և զոհողը՝ միշտ Ռուս Ազգն է:

Մինչդէռ Բ. Աշխարհամարտէն յետոյ, Արեւմտեան պետութիւնները  
իրենց ձեռքը եղող լրատուութեան միջոցներով ամբողջ աշխարհի մէջ տա-  
րածեցին այն վախը, թէ՛ «Պոլշեւիկները» պիտի յարձակին Եւրոպայի վրայ:

1945-էն անմիջապէս ետք սկսող Պաղ-պատերագմը հետեւանք էր «Ռու-  
սական նախայարձակում»-ի մասին Արեւմուտքին կողմէ տարածուած սու-  
տերուն...:

Եւ 1990-թ.ին Արեւմուտքի «Հրէշային Կազմակերպութիւն»ը, իր (→ էջ 3 )

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ  
ԹԱՏԵՐԳՈՒԹԵԱՄԲ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ  
«ԵՐԲ ԱՐԵԻԸ ԿԸ ԼՌԷ»

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ





Գիտնական գրող Հրանդ Մարգարեանի անունը կապում է Սփիւռքահայ թատերական կեանքին՝ Պաղտատեն մինչև Նիւ Եորք՝ իբրև դերասան, բեմադրիչ և թատերագիր: Իր գիտնականի ասպարեզի կողքին մշակութային-թատերական գործունեության ծանօթացույլը պիտի չդժուարանար զինք, - բառին իսկական առումով, - կոչել թատերական գործիչ:

Բեմական արուեստին սերը, որ մասնագիտական ուսմունքով հիմնադրած է, ծառայեցուցած է ոչ միայն հայ թատերագիրներու գործերու բեմադրության, այլև՝ իր սեփական թատերական ստեղծագործություններու թէ իբրև դերասան, թէ իբրև բեմադրիչ:

Հրանդ Մարգարեան իր անձով և գործով՝ Սփիւռքահայ մշակութային կեանքին մէջ նկատառելի երևոյթ է: Հեղինակ է 20-է աւելի թատերախաղերու. 10-է աւելի բեմականացումներ (բանաստեղծութիւն թէ արձակ) իրագործած է. թարգմանած թատերախաղեր ունի, որոնց մէջ ֆրանսացի արդի թատերագիր Ժան Անուի «Անթիկան»ը. հրատարակում գործերուն մէջ ճամբորդական յուշագրութիւն մը՝ «Քարածայն Պատարագ» և բանաստեղծութիւններու հատոր մը՝ «Ենթաեսէն Փշրուած»: Արդարեւ, բազմակողմանի ստեղծագործ մը, որուն վաստակը Սփիւռքի ստեղծագործ միտքի սլատմութեան արձանագրուած է արդէն արժանի գնահատումներով: 1987-ին արժանացած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին, իսկ՝ 2002-ին Հայաստանի մշակութի նախարարութեան «Ոսկեայ մետալ»ին:

Մեծ Եղեռնի 90-ամեակին առիթով թատերագիր Հրանդ Մարգարեան ներշնչուելով բանաստեղծ Ռուբէն Սեւակի հերոսական նահատակութենէն, անոր դիմադրական Ոգիին հանդէպ երկիւղած խոնարհումով թատերգութեամբ մը վերակերտած է բանաստեղծին ուրոյն կերպարը եղեռնեան խորասլակերի ցուցումով:

Այսպէս բնութագրած է ան իր թատերական երկին ծնունդ սուած խորհուրդը. «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՀՍՒԱՏՍՄՔԷՆ ԹԵԼԱԴՐՈՒՍԾ ՈՒՐՈՅՆ ԿԵՑՈՒՍԾՔԸ՝ ԱՆՀԱՏԻ, ԸՆՏԱՆԻՔԻ, ԱԶԳԻ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՀՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԿԱՏՄՍՄԲ, ԲՍՆԱՍՏԵՂԾԻՆ ՎԵՐՍԾԱԾ Է ՔԱՆԴՈՒՄԻՆ ԴԷՄ՝ ԾՍՈՍՏՈՂ ԵՒ ՀՍԿԱԴԻՐ ԴԻՄՍԴՐԱԿԱՆ ՈԳԻԻ ՄԸ»:

ԱՅՍ ԵՐԿԸ ԽՈՆԱՐՀՈՒՄ՝ ՄԸՆ Է ԱՅԴ ՈԳԻՒՆ»:

Լոզանի մէջ, Համալսարանի գրադարանը՝ Եաննի Ափելլի հետ առաջին ծանօթացման տեսարանով կը սկսի թատերգութիւնը: Հանդիպումը կը բնորոշուի դիպումաձային հանդիպում՝ արուեստի և գիտութեան: Գեղարուեստի ուսանողուհի Եաննի Ափելլի և բժշկութեան ուսանող Ռուբէն Սեւակի, որ միաժամանակ արուեստագէտ հոգիի տէր բանաստեղծ է, որոնց հասարակաց կապը Գանկն է: Երկուքին ալ գծագրելու նիւթը: Մին արուեստի, միւսը՝ գիտութեան գծով: Հանդիպումը կը ծառայէ նաեւ անձնականէն անդին՝ ազգային ծանօթացման: Եաննի Ափելլը ոչինչ լսած է հայերու մասին: Յուսախաբ դառնութեամբ Ռուբէն Սեւակը կը յարէ. «Այդ ալ մեր ազգային ցաւերէն մէկն է: Հարուստ մշակոյթով հին ազգ մըն ենք, բայց մոռցուած, անտեսուած... լքուած ազգ մըն ենք»:

Երկու օտարականները հրապուրուած են իրարմով, երբ Եաննի Ափելլ կը հե-  
ռանայ: Առանձին մնալէ ետք Ռուբէն Սեւակ կը կարդայ նամակ մը, որ Կիլիկիոյ  
ջարդերու մասին կը տեղեկագրէ: Թափաբարձիւրը բեմ կը հանէ «Ջարդին Խեմ-  
թը» որ Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններէն է: Խաչ մը տնկելով կ'աներե-  
ւութանայ: Խաչը խորհրդանիշն է հայ ժողովուրդի խաչելութեան:

Գաւառէն Երոսյա ուսանելու եկած երիտասարդներու միջեւ երկխօսութիւնը,  
որուն կը միանայ Ռուբէն Սեւակ, Բ. տեսարանի մթնոլորտը կը կազմէ ուր  
մտնուած հաճոյսպաշտ կեանքի մը երեւոյթին հետ կ'եռայ նաեւ վերադառնալով  
երկիր ազգային երագին ծառայելու ձգտումը: Ռուբէն Սեւակն է յորդորողը.  
«Սյո՛, այդպէս է: Երոսյան մեր տեղը չէ, տղաք: Վերադառնանք մեր հայրենի-  
քը: Մեր ժողովուրդը առանձին չթողունք սյնուող»:

Սիրոյ խոստովանութեան և Ուխտի տեսարանը (Գ. տեսարան) կը ցոլացնէ  
Ռուբէնի և Եաննիի սիրահարութեան յուզաշխարհը, որ իրարմով միութիւն կազ-  
մելու վճռականութեամբ, հակառակ երկու կողմի հայրերու ընդդիմութեան: Սէ-  
րը, որ բացառիկ իտէալականութիւն զգեցած է, կը յաղթահարէ ամէն խութ ու  
խոչընդոտ: Ռուբէն Սեւակ իր սիրոյ զօրութեան մէջ անգամ ազգայնութեան ոգին  
սպահելով զայն կը սերմանէ գերմանոհիի հոգիին մէջ՝ ապագայ զաւակներուն  
հայերէն սորվեցնելու սյարտը դնելով անոր վրայ: Եաննիին ուզածը Սեւակէն  
ուրիշ բան է. «Ինձմէ առաջ չես մեռնիր: Կեանքը առանց քեզի իմաստ սիտի  
չունենայ»: Տեղասպան թուրքը իրմէ առաջ խլեց հայ բանաստեղծին կեանքը,  
անաւարտ ձգելով զայն, ստեղծագործական, ազգային թէ ընտանեկան գետնի  
վրայ: Իր երագին մարմին տուող իրականութիւնը չտեսաւ իր սեւ ու դժբախտ  
ճակատագրով: Բաղաքապետարանի Խորհուրդէ զուրկ սպակը չէր գոհացներ  
սիրահար ամուլը, որուն կը յաջորդէ Փարիզի հայ եկեղեցւոյ մէջ սյակադրու-  
թեան արարողութիւնը «Ուրախ Լեռ» շարականին երսուշտուական խորախոր-  
հուրդ ընկերակցութեամբ, որ հայակնիք ծէսով կ'օծէր նորապսակ զոյգը: Գ. և  
Ե. կարճ տեսարաններով Հրանդ Մարգարեան այդ պահերուն հակադրական  
պատկերը կը պարզէ երկխօսութեան դիպուկ արտայայտութիւններով:

Պոլսոյ մէջ հայկական թատերասրահ մը,– ուր Վահրամ Փափազեանի կողմէ  
կը բեմադրուի Օթելլօն,– կը փոխադրէ թատերագիրը Թուրքիոյ մէջ հայերու հա-  
մար տիրող անապահովութեան անձկալի վիճակին, որ խօսակցութեան նիւթ կը  
դառնայ Սեւակին, իր ընկերոջ Ժիրայրին և Եաննիին միջեւ: Ժիրայրն ու Եան-  
նին Վաղուան Պոլիսով մտահոգ են և կ'ուզեն օր առաջ չարագոյժ Պոլիսէն հե-  
ռանալ: Ռուբէն Սեւակի ազգայնական ոգիին հերոսական գիծերը, որոնք հարա-  
զատ են անոր կենսագրութեան հետ, թատերագիրին կողմէ կարկառուած են  
ցայտուն գոյնով: Ազգային ղեկավարն ու մտաւորականը ժողովուրդին հետ ըլ-  
լալու և մնալու մտածողութեան արտայայտիչն է Ռուբէն Սեւակ, ամէն փորձու-  
թիւն և վտանգ ժողովուրդին հետ դիմագրաւելու սրիութեամբ. «Սյս բոլոր  
ըսածներդ ճիշդ են, բայց իմ սկզբունքներուս հակառակ: Եթէ որեւէ բան սիտի  
սպտահի հայ ժողովուրդին, մենք՝ Վարուժան, Սիամանթօ, Կոմիտաս և բոլոր  
հայ մտաւորականները, հո՛ւս պէտք է մնանք, ժողովուրդին հե՛տ պէտք է ըլլանք:  
Գիտես չէ՞, իսկական հովիւր իր ոչխարներուն հետ կը մնայ»:

Ռուբէն Սեւակի ազգային թատրոնի դերին առընչութեամբ արտայայտած  
խոհերը, որոնք ձեւակերպուած են բեմադրութեան սկիզբը արտասանած խիզախ  
խօսքին մէջ անգամ մը եւս կը ցոլացնեն ազգային մշակոյթով,– այս սյարագային

թատրոնով, — ազգային ոգին ամրապնդելու բանաստեղծի հայկական ոգեկանությունը: Հայ թատրոնի մասին իր մտածողությունը հայ ժողովուրդի կեանքի ներկայ հանգրուանին համար եւս, — Սփիւքի թէ հայրենիքի մէջ, — կը պահէ ազդու իր թելադրականությունը. «Եւ դեռ կայ ազգային թատրոնի հարցը, թատերգութեան

նիւթը: Հայ բեմը պէտք է անմահացնէր ազգային մեր հերոսները՝ անձնուիրութեան դաս տալով ժողովուրդին: Քանի՛ վեհանձն կեանքեր կան զոր հայ թատերգությունը բեմ պէտք է հանէր՝ մեզի հերոսաբար մեռնիլ սորվեցնելու համար»:

Թատերախաղին եօթներորդ տեսարանով կը բացայայտուի Իթթիհատական Թուրքիոյ հայաշինջ ծրագիրը, երբ Ռուբէն Սեւակ կ'առաջնորդուի ոստիկանասումն՝ տունէն զինք հիւանդի մը նայելու պատրուակով դուրս բերելով: «Քննիչին հարցաքննութենէն ի յայտ կու գայ, որ Ռուբէն Սեւակ, որուն բոլոր շարժումները, խօսքերն ու գրածները գրաքննուած են, լրտեսուած՝ Թուրք իշխանութիւններուն աչքին «Թշնամի»ի հանգամանք զգեցած են: Թուրքիոյ գոյութեան սպառնացող վտանգաւոր թշնամիի, որ օր առաջ պէտք է աքսորուի Չանդըրի «Ոնրագործներու վայրը»:

Ռուբէն չի տկարանար և իր արհուրթիւնը չի կորսնցնէր: Թուրք հարցաքննիչին առջեւ կը պաշտպանէ հայութիւնը՝ հայոց Թուրքիոյ բերած նպաստին ընդգծումով:



Ռուբէն Սեւակ

Մեծ Եղեռնի ծրագրի գործադրութեան մէջ թրքօգերմանական գործակցութիւնը պատմա-քաղաքական գրականութեան մէջ արծարծուելով հաստատուած է Գերմանիոյ տխուր դերակատարութիւնը: Թատերախաղը իր ութերորդ տեսարանով, որ Ռուբէն Սեւակի տիկնոջ [ծագումով գերմանացի] Եաննիին Պոլսոյ գերմանական դեսպանատան մէջ գերման դեսպանին՝ Վանկընհայմին հետ հանդիպումով պատկերացուած է, որ հարազատօրէն հիմնուած է իրական տուեալներու վրայ: Դիւանագէտի սինիզմին քօղը պատռելէ զատ՝ պատմական խեղաթիրումները դատարիտեւած է Եաննիին, յաջող երկխօսութեան ընդմէջէն: Գերման դեսպանին բերնով Թուրքիան խօսիլ տուած է, յատկապէս ինչ կը վերաբերի Ռուբէն Սեւակի «Խոռվարարութեան» և «Ջանգուածներու վրայ անոր ունեցած ազդեցութեան»: Եաննիին խիզախութիւնը յեղափոխական կնոջ մը կեցուածքն է իր բանաստեղծ անմեղ ամուսինին դէմ խուժդուժօրէն գործադրուածին և ամբողջ ժողովուրդի մը ողբերգութեան ի տես:

Չանդըրիի մէջ աքսորեալներու հոգեկան անձկութեան մէջէն և Թուրքիոյ մէջ հայ ազգի ասպագային շուրջ գաղափարներու փոխանակման նուիրուած է իններորդ տեսարանը, որ թատերական կառոյցին թոյլ մասն է, աքսորավայրին հարուստ նիւթ հայթայթող հանգամանքին տեսանկիւնէն:

Տասներորդ տեսարանը Ռուբէն Սեւակը կը դնէ Իսմայիլ Պէյի դիմաց սենեակին մէջ: Իսմայիլ Պէյը հայրն է թուրք այն աղջկան՝ Այիշէին, որուն բժշկած է Ռուբէն Սեւակ զինք ստոյգ մահէ փրկելով: Այիշէն սիրահարուած է Ռուբէն Սեւակին: Փորձութեան ժամն է: Իսմայիլին կողմէ կ'առաջարկուի, որ Ռուբէն Սեւակ



խլամութիւնը ընդունելով ամուսնանայ իր աղջկան հետ և իրեն շնորհուի մահուան դատապարտուած կեանքը: Յանուն ազգային իր արժանապատուութեան և ընտանեկան սրտիւնն Ռուբէն անդրդուելի կը մնայ: Ռուբէն Սեւակի հերոսական կերպարին հետ կը ցուցահանուի մերժումին հակազդեցութեամբ Թուրք գազանին հրէշայնութիւնը, որ դոյզն մարդկային ազնուութեան, — բարիքի փոխադարձութեան առումով, — ժխտումն է: Ռուբէն Սեւակին, — իր խնդրանքին ընդառաջումով, — կը շնորհուի իր ընկերներուն մօտ վերադառնալու պատեհութիւնը:

Տասնըմէկերորդ տեսարանով Ռուբէն Սեւակ ընկերներուն մօտ է, որոնցմէ Հայր Յովհանն և Ժիրայրը սուն պիտի վերադառնան արքայապետին: Դանիէլ Վարուժանն ու Ռուբէն Սեւակը պիտի դրուին Այաշի բանտը: Ոճրագործներու և մահուան դատապարտուածներու բանտը: Ռուբէն Սեւակի տիպարին ամբողջացումն է մահուան մղձաւանջին ապրումներով արտայայտուած միտքերը, իբր ստասիսան իր ընկերներուն կողմէ ժամանակաւոր կերպով իսլամութիւնը ընդունելով կեանքը փրկելու նահանջական թելադրութիւնը. «Կամորջներ կան կեանքի մէջ. որոնք անցնել էտք, չե՛ս կրնար ետ դառնալ: Միւս ափին՝ հոգիի մահն է: Հոգիի մահը աւելի ահաւոր է քան մարմնի մահը: Ուխտած եմ մեռնիլ, բայց հոգիս չսեւցնել: Մահէն վախճալով չեմ ուրանար ազգ ու ընտանիք: Մենք սէտք է մեռնինք՝ որ Հայաստանը վերականգնի, Հայութիւնը վերջնականապէս ազատի»: Բանաստեղծին մարգարէութիւնը իրականացած է այսօր Հայաստանի վերականգնումով և հայուն վերապրումով:

Աքարապետին Եաննիին ուղղուած նամակներ ունի Ռուբէն Սեւակ: Նամակներ, որոնք իր վերադարձի յոյսին լաւատեսութիւնը կ'արտայայտեն: Բայց էականը իր երկու զաւակներուն հայ մեծնալուն կտակն է: Տասնըկերորդ տեսարանը թուրք ոստիականին կողմէ Եաննիին ուղղուած նամակներուն յանձնումն է: Սրտի ճմլում առաջացնող տողեր մէջբերուած են այդ նամակներէն, որուն վերջինը փղձկիլ կուտայ Եաննին. «*Օգոստոս 22: Տղաքը հա՛յ մեծցոր: Այսօր Այաշ պիտի տանին մեզի*»:

Տասնըկերորդ տեսարանէն կ'առնէ թատերախաղը իր խորագիրը «Երբ Արեւը Կը Լուէ», որ Ռուբէն Սեւակի խօսքն է Իսմայիլի գաւազանի հարուածներուն սուկ, ի տես լուռ այգաբացին երբ «Արեւն անգամ լուռ է»:

Տասնըհինգերորդ եզրափակիչ տեսարանը անխօս պատկեր մըն է, ուր կը յայտնուի Եաննին բոպիկ ուրքերով և շալ մը ուսերուն: Ինքն իր մէջ ծուարած լուռ և խորհրդաւոր ինքնամփոփումով կ'արձանանայ բեմի ֆոնին տեսնելով Դանիէլ Վարուժանը, Ռուբէն Սեւակը և միւսները՝ մահանալէ ստաջ:

Եղեռնի 90-ամեակին առիթով երկնուած Հրանդ Մարգարեանի թատերական այս ստեղծագործութիւնը եղեռնի նուիրուած գեղարուեստական գրականութեան վրայ յաւելում արձանագրելու կողքին, կը հարստացնէ նաեւ նահատակ հերոս բանաստեղծին նուիրուած գեղարուեստական երկերուն, — վէպ, բանաստեղծութիւն, թատերգութիւն, — ցանկը, ուսումնասիրական-գրականագիտական աշխատասիրութիւններու հետ: Ռուբէն Սեւակ իր վերածնունդը կ'ապրի այդ երկերով:

**ԽԱՂԱՂԱՍԷՐ ԱԶԳԵՐ... ՌԻՇԱԴՐՈՒԹԻՒՆ ... (Շար. էջ 2-էն)**

սուտերու և զրպարտութեան վրայ հիմնուած ռազմավարութեամբ, յաջողեցաւ քանդել Խ. Միութիւնը:

Այսօր՝ այդ ենթադրեալ, շինծու, այսպէս կոչուած՝ «Ռուսական Համայնավարութեան ներխուժում»ի վտանգը չկայ:

Բայց Արեւմտեան պետութիւններուն «Պաղ Պատերազմ»ի ռազմավարութիւնը, առանց դոյզն փոփոխութեան, նոյնութեամբ կը շարունակուի: «ՆԱԹՕ» ըսուած ամերիկեան յարձակողական կազմակերպութիւնը նոյնութեամբ կը գոյատեւէ և կը գործէ, երեկի նենգամտութեամբ:

Եւ աւելին՝ այս «ՆԱԹՕ» նախայարձակ, յափշտակիչ կազմակերպութիւնը այսօրուան Ռուսիոյ սահմաններուն վրայ, զինուորական նոր սարքեր, հրթիռարձակումի նոր խարիսխներ կը զետեղէ, զինուորական նոր յենակետներ կը կառուցանէ:

1935 տարուան Ս. Յարութեան Զատիկական տօնը կը հանդիպէր Ապրիլի 22-ին: Այդ Կիրակի օրով, մեր եկեղեցին լեցուն էր խուռներամ հաւատացեալներով: Պատարագի սկզբնաւորութեան հետ եկեղեցի փութացողներուն թիւը այնքա՛ն բազմացաւ, որ մերձակայ բակերը եւս ծածկուեցան մարդկային զանգուածներով:

Պատարագիչն էր Գերապատիւ Հայր Ներսէս վարդապետ, որ մեզի հայերէն լեզու կը դասաւանդէր:

Պատարագի բովանդակ երգեցողութիւնը, իր քաղցրահնչիւն ձայնով, կատարեց Քոյր Փոլինը: Միեւնոյն ժամանակ կը նուագէր երգեհոնի վրայ: Ծառայասէր կրօնաւորուհի մըն էր ան. իւրաքանչիւր Կիրակի օր, մեր ժողովուրդը յարգանքով կը հետեւէր իր կրօնական երգեցողութեան:

Թէև տարիքով փոքր էի, բայց զգացի, թէ Ապրիլի 22-ի այդ Կիրակի օրով, մեր եկեղեցին ի՛րմով շէնցաւ, պայծառացաւ: Իր երգեցողութիւնը այնքա՛ն սրտամօտ էր և այնքա՛ն հոգեպարար, որ Պատարագէն ետք, բազմահարիւր ներկաները, կատարեալ կարգապահութեամբ սեղմեցին ձեռքը՝ Քոյր Փոլինին:

Եկեղեցական արարողութիւններէն ետք, մեր ժողովրդապետը, Քոյր Փոլինն ու Համայնքի խորհուրդին անդամները, մեր տան մէջ, լռորուեցան մեր Զատիկական սեղանին շուրջ: Տօնական օրերուն, ծնողքս կը յարգէին իրենց այս սովորութիւնը:

Ճաշի սպասարկութենէն առաջ, երբ Գերապատիւ վարդապետը օրհնեց սեղանը, երէց եղբայրներս՝ Անստոնն ու Պետրոսը, որոնք իրենց ստացած ուսումներով, շրջանային տնօրէններու պաշտօններ կը վարէին Իրաքի Այ. Բի. Սի. քարիւղի ընկերութեան մէջ, հարց տուին Քոյր Փոլինին.

– Ի՞նչ էր պատճառը որ այսօր, Պատարագի երգեցողութիւնը կատարեցիք Ձեր ամբողջ սրտով, հոգեկան ուժականութեամբ:»

Քոյր Փոլինը կ’արտայայտուէր հայերէն լեզուի մաքուր առոգանութեամբ: Ան բաժնուեցաւ սեղանէն և ուղղուեցաւ դէպի տան կեդրոնամասը, ուր կանգնած, ըսաւ հրաւիրեալներուն.

– Անտոնու ու Պետրոս եղբայրները՝ երկար ժամանակի վրայ տարածուող հարցում ուղղեցին ինձ: Ինքս, դարասկիզբի, ծնունդ եմ: Գիտե՞ք, որ կրօնաւորուհի մըն եմ: Առանայի կուտորածը, 1909 տարեթիւին, անոր յաջորդող հակահայ հալածանքները և, մասնաւորապէս Ապրիլեան Եղեռնը, զիս մղեցին ուխտապահութեամբ կրելու այս տարազը: Ինքզինքս հաւատքիս նուիրեցի, որպէսզի կարենամ թեթեւցնել իմ խորո՛ւնկ վիշտս ու իմ հոգեկան անհո՛ւն տառապանքս:

Անչափահաս տարիքիս, երբ կուտորածներու ընթացքին կորսնցուցած հիմ ծնողքս ու հարազատներս, հանդիպած եմ ա՛յնպիսի սրտաճմլիկ տեսարաններու և ա՛յնպիսի սարսափազդու պատկերներու, որոնք, մինչեւ այսօր, կը մթազնեն մտահորիզոնս:

Չգոհացայ միայն կրօնաւորուհիի տարազովս: Սորվեցայ հայերէն լեզուն: Հետեւեցայ ձայնամարզութեան ու երաժշտութեան: Առաջադրեցի աղօթիլ, հրգել ու նուազիլ հարազատներուս հոգիներուն խաղաղութեան համար:

Հայածէս պատարազը, ինծի համար, խորախորհուրդ զոհաբերութիւն մըն է:

Բովանդա՛կ Պատարազը կ՛ուզեմ, կը սիրե՛մ առանձինս հրգել. սիրտս վիճաւոր է:

Իմ տեսած անմե՛ղ արիւններուն մորմոքը սրտէս բղիտող «Սո՛ւրբ-Սո՛ւրբ»ն է լո՛կ, որ կրնայ փարատել:

«Օրհնեա՛լ է Աստուած», «Քրիստոս Պատարագեալ», «Սո՛ւրբ-Սո՛ւրբ» երբ կ՛երգեմ, կը վերանամ հոգեպէս: Քրիստոնէական հաւատքիս հետ, իմ ազգային ինքնութիւնս է որ կ՛ամրապնդեմ:

Այս տարի, Ս. Յարութեան օրընը խիստ մօտ է մեր մարտիրոսագրութեան: Բսան տարիներ միայն մեզ կը բաժնեն մեր ժողովուրդի իրաչելութենէն: Վէրքը տակաւին թա՛րմ է: Կը հաւատա՛մ, թէ պիտի գայ ժամանակ, երբ մեր ժողովուրդի զաւակները, կազմակերպչական կարգավիճակով, պիտի յիշեն Հայութեան Գողգոթայի ճանապարհորդութիւնը, պիտի իմացնեն մարդկութեան, թէ Հայութիւնը Եղեռնագործութեան ենթարկուեցաւ և, վաւերագրական փաստագրութիւններով, պիտի իօսին մեր բարոյական արժէքներուն, մեր աւանդութիւններուն, մեր մշակութային հարստութեան ամբողջական ոտնահարումին հրէշային նպատակը հետապնդող դաւաճութեան մասին:»

Պատանեկութեանս տարիներուն, մայրս Ս. Յարութեան Զատիկական Կիրակի օրերուն, ինձ խօսեցաւ մեր ազգին պարտադրուած ցիղասպանութեան մասին: Պատմեց մեր հայրենական ընօրրանին՝ Մարաշի մասին, Եղեռնին, 1921 թուականի Աղէտին, տարագրութեան և տեղահանութեան մասին: Ա՛յդ ժամանակ կրցայ սամբողջապէս ըմբռնիլ իմաստը՝ Քոյր Փոլինի արտայայտութիւններուն և զգացի, թէ՛ զաւակն եմ հալածուած բայց Յարութեան ոգիով տոգորուած քաղաքակի՛րթ ազգի մը:

9 Ապրիլ 2007, Ս. Զատիկուան Մեռելոցի յիշատակութեան Երկուշաբթի օրուան առաւօտուն, երբ կը գրէի այս տողերը, նկատեցի, թէ «Ֆրանս-2»-ի հեռուստատեսութեան կայանը, իր «Թելէ-Մաթէն» առաւօտեան յայտագիրը նուիրած է Ֆրանսայի մէջ հռչակուած «Հայաստանի Տարի»-ի մշակութային հանդիսութիւններուն: Կրոր սեղանի մը շուրջ համախմբուած էին Պատմութեան և Մշակոյթի Ֆրանսացի գիտաշխատողներ:

Հանդա՛րտ և զո՛ւսւյ ոճով, բացման խօսք արտասանեց հաղորդավարուհին: Տպաւորի՛չ էր անոր նախամուտը.

– Չեմ խորհիր, թէ երկրագունդին վրայ գտնուի ազգ մը, որ, հայութեան նման, յարտեւորէն ու մանաւա՛նդ՝ լաւատեսութեամբ պայքարի իր դիմագծին, իր աւանդներուն, իր հաւատքին ու իր հողին պաշտպանութեան համար:»

Պաղտատ 1935 – Փարիզ 2007-:

Հայութիւնը կը քալէ, միակա՛մ ու ինքնավստա՛հ, բարձր պահելով պայքարի դրօշը իր արդա՛ր պահանջատիրութեան: Պէյրութ, Ապրիլ 2007

ԱՅԺՄԷԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ

## ՀԱՅՈՒՆ ՊԱՅՔԱՐԸ ՍՈՒՐԲ Է ԵՒ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ

Գրեց՝ ՎԱՐԴԱՆ Ա. ՔԸՆՅ. ՏԻԼԿԷՐԵԱՆ

Ժամանակակից մարդիկ կ'ուզեն հսկայանալ, ամենազոր դառնալ, յաղթական երեսալ գեղանամանչ գագաթներու վրայ և անկէ ցոլացնել ստորոտներու վերել՝ իրենց ճառագայթող սնասլարծութիւնը:

Սանձարձակ կ'արշաւեն ամէն ուղղութեամբ ու կը միտին ճնշումի տակ պահել լուռ ու խոնարհ զանգուածները, որ երբեք չ'ազատագրուին իրենց ստրկութեան կապանքներէն:

Բռնատիրութեան պիղծ ձեռքերը չեն, որ պիտի գրեն հայ ժողովուրդին զուլումներուն մարտիրոսագրութիւնը և անշունչ թիւերը չեն, որ պիտի վկայեն հայաջինջ ցեղասպանութեան ահաւորութիւնը:

Պատմութիւնը կը գրեն մանրակրկիտ ճշմարտութեամբ չարդարարներու գեհեմատեսիլ սպանդէն հրաշքով վերասլուծ՝ բիրաւոր նահատակներու զաւակները և թոռները, որոնք վաերական վկաներն են ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ:

Անոնց ազգային խղճմտանքը չի թողուր, որ եղեռնի արիւնոտ իրողութիւնները խեղաթիրուին՝ ճշմարտութիւնը սրբապղծող կեղծ պատմագիրներու յերիւրածոյ փաստարկութիւններով:

Սարդարապատի ճակատագրական բախումներուն, ողջ հայութիւնը միակամ դիմագրաւեց, ո՛չ միայն իր գոյութեան բնաջնջումին սպառնացող մեծագոյն մարտահրաւէրը, այլ Աստուծոյ հետ զօրակցած՝ յաջողեցաւ պարտադրել թշնամիին, որ ամօթասլարտ նահանջէ, իր թիկունքը ցոյց տալով՝ հայ գրոհող բանակին:

Այս ազատ օրերուն կը ներգգանք այդ մեծահրաշ յաղթութեան ազգային հպարտութիւնը, որ հայ նորագոյն պատմութեան ոսկեզօծ էջերը կը կազմեն:

Անկարելի է խորաչափել հայ մարդուն, հայ կնոջ, հայ երիտասարդին, հայ կղերին բարացուցական զօրութիւնը տարակուսելի պատերազմի մը դէմ տարած յաղթանակին հրաշքը:

Հայ ժողովուրդին առհասակաւ անմիաբանութիւնը, այդ ճգնաժամային օրերուն, երկնային միջամտութեամբ կանգ առաւ, որ հայութիւնը, անպարտելի բանակի մը դիմաց փրկէ իր ազգային գոյութիւնը իսկական բնաջնումէ:

Այս դժուար օրերուն կ'ուզենք ու կը փնտռենք այդ երագային ՍԻՈՒԹԻԻՆԸ, ազատ ու անկախ հայ աշխարհին մէջ ու չենք գտներ: Սիրտերը տրամադրուած չեն այդպիսի հրաշք մը կատարելու:

Հայուն մտքին, սրտին ու հոգիին մէջ միահեծան կ'իշխէ սատանային Ես-ը: Հայը մեծ վտանգներու դիմաց կը զոհէ իր կեանքը, բայց՝ ոչ իր բազմազխանի ԵՍ-ը:

Քրիստոսի սիրոյ յեղափոխութենէն մինչեւ այսօր՝ հայ եկեղեցիներու խնկաբոյր կամարներուն տակ կը թնդան ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱՆԵՐԸ, սէր և միութիւն աղերսելով ԵՐԿՆԱԻՈՐԷՆ, բայց ամպերէն վեր, երկինք չեն հասնիր ու լսուիր:

Ինչպէ՞ս Աստուած ունկնդիր ըլլայ մեր աղօթքներուն եւ երգերուն, երբ ատելափառ հոգիներէ կը բխին և սիրոյ հրեշտակը չի կրնար խեղդել մեր մէջ մոնչող գազանը: Պէտք է երկրորդ Սարդարապատ մը ցնցէ մեր հոգիները, որ համբուրելի համերաշխութիւն գործէ ամէն հայու մէջ:



\* \* \*

Մի կարծեք, որ հայ ժողովուրդին անտարբերությամբ անտարբեր է, կղզիացած խաղաղության մեջ և աներ ու կորուստ չի պատճառեր մեր ազգային շահերում:

Ներկայիս, թե՛ անմիաբանությունը և թե՛ անտարբերությունը սերտորեն զօրակցած՝ վտանգ կը սպառնան հայրենիքին և հայրենաբնակ հայության, անոր մտքին մեջ սնուցանելով՝ արտագաղթի հրեշային գաղափարը:

Հայրենի իշխանության և ընդդիմադիր հոսանքներու միջև հակամարտության խրամը կը խորանայ՝ վտանգելով հայրենի տարաբախտ ժողովուրդին տագնապալի կեանքը:

Հայության անտարբերությունը՝ անմիաբանության հաասար ազգավնաս հիանդություն է, կարելի չէ յաղթահարել զայն մարդկային բարոյական տկարություններով:

Լաւակենցաղ պայմաններու մեջ շնչող՝ ընչաքսող հայերու ունկնդիր եղած են հովուական պաշտօնավարության օրերուն...: Անոնցմէ մէկն է խօսողը,

– Ազգային կրքոտ հակամարտություններէ ու սպայքարներէ կղզիացած սպրած են, ընտանեկան շրջանակիս մեջ ապահով ու հանգիստ: հեռախօսիս թիւը և տանս հասցէն չեն հրապարակած, որ գոյութիւնս չքողազերծեն և մուրացկանի խնդրանքներով զիս անհանգիստ չընեն: Անունս և մականունս փոխեցի, հիմա կը կոչուիմ՝ Շան Փիթըրսն:

Գիտէի, թէ ուր կը գտնուէր գեղատեսիլ ծառաստանով շրջապատուած իր սպերճաշուք ապարանքը, բայց ոչ մէկ օր չփորձեցի մօտենալ, նկատելով իր անբեկանելի ազահութիւնը... չմերժուելու համար:

Կը մտածեմ հայասերի հրավառ զգացումով, թէ նիւթական ի՛նչ կարօտալի ու ողորմելի վիճակի պիտի ենթարկուէին հայ եկեղեցիները և դպրոցները, եթէ ասոնց ստընթեր՝ արեւներու պէս չճառագայթէին բարեգութ ու բարեխիղճ հոգիները:

Հայրենասէր հայորդիին համար, իր ազգը, իր հայրենիքը, իր եկեղեցին օտարաբոյր սրբութիւններ չեն, որ ապերախտօրէն անտեսուին ու արհամարհուին: Հայ մը, իր ծնունդով՝ մօրը արգանդէն անիծուած ու վիժած պէտք է ըլլայ, որ հայութիւնը իր կեանքէն ու ծագումէն ջնջէ:

Ցաւալին այն է սակայն, որ ապերախտութիւնը, անտարբերութիւնը, անմիաբանութիւնը, նիւթապաշտութենէ ու մարմնապաշտութենէ խթանուած՝ կապարացուցած են մեծ թիւով հայերու ազգային խղճմտանքը, իսկ մարդկային խղճահարութիւնը, այն անյաղթելի զօրութիւնը չէ, որ սառնակոյտերը բեկանէ և կապարները հալեցնէ:

Համաճարակի նման ծաւալած՝ վարակիչ անտարբերութիւն մը կ'իշխէ աշխարհի վրայ, որ չի յաղթահարուիր սրտառուչ կոչերով ու խնդրանքներով:

\* \* \*

Ժողովրդային իմաստութիւնը կ'ըսէ. – Բարեկամներ բազմապատկեցէք և վստահ եղէք, որ անոնց բարեկամութիւնը շահելով, պիտի շահիք անոնց քսակները:

Շարունակական արտագաղթողներու թռիչքներէն մեր որբացած հայրենիքը, չի սիրուիր ու պաշտուիր երբեմնի գարունամեայ ազատամարտիկներու ողջակիզուած սէրերովը:

Ամբոխը գութ չունի, հաւատք չունի, կ'ատէ սրբութիւնը, կը հալածէ բարին, ինչպէս խաւարը՝ լոյսը: Կը նախընտրէ սատանային տատասկոտ արահետներէն քալել, քան թէ Աստուծոյ ծաղկաւետ ճամբաներէն:

Ի՞նչ գովելի արժէք կը մնայ մարդուն էութեան մէջ, երբ անկէ կը բացակայի Աստուծոյ հաւատքը, որ հոգիին գանձերուն գանձն է, երկնային չափանիշով և աստուածային գնահատումով:

Մ'արդը մեծահարուստ է լոկ այդ անփոխարինելի գանձով, քաջատողջ է մարմնով, երջանիկ է կեանքով, յաւիտենական է իր փառքով:

Երբ բանաւոր արարածը կը կողոպտուի իր երկնային շնորհներէն, իր մէջ կը բացուի վիհային պարասութիւն մը, որ յորդելու աստիճան կը լեցուի ԱՆԷԾՔԻ ՊՏՈՒՂՆԵՐՈՎ, ինչպէս կ'ըսէ Ոսկեբերան Նարեկացին իր սղօթամատենանին մէջ:

Մ'եղքերու և մոլութիւններու բրգացումէն ետք, սատանան ա՛լ չի ձգեր իր որսը որ ազատութեան մէջ շնչէ: Ապերջանկութիւնը կ'ըլլայ իր պատուհասը և մահապատիժը:

Անանուն ամբոխը կ'անցնի անտարբեր ու սառնարիւն իր առջեւէն, հեզնելով իր ողորմելի ճակատագիրը:

Պէտք է հաւատքը գահակալէ մարդուն մէջ աստեղազարդ և շողարձակում տայ իր խաւարակոտ շրջապատին Քրիստոսի շնորհներով:

Փոթորկալից օր մը Յուլիոս Կեսար կը գտնուէր փոքր նաւու մը մէջ, Ադրիական ծովուն բացերը: Յանկարծ՝ ահաւոր ալեկոծութիւն մը սարսափով համակեց Կայսեր հետեւորդները:

– Մի՛ վախճաք, – խրախուսեց Կայսրը, – անկարելի է, որ այս նաւը ընկղմի, որքան աստէն իրեն ճամբորդ ունի Կեսարը»:

Այս խօսքերը ցոյց կուտան մեծ մարդու մը ինքնավստահութիւնը, որ կը ժխտէ յուսահատութիւնը:

Ուրիշ նաւու մը մէջ կը լսուին նոյն խրախուսական խօսքերը, ո՛չ թէ մարդու մը բերնէն, այլ երկնային հորիզոններէն:

Այդ նաւը, Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցին է, որ ծովամոյն չի կորսուիր, որքան ալ ահեղ փոթորիկներէն ծեծուի. որովհետեւ ՆԱԻԱՊԵՏԸ ՔՐԻՍՏՈՍՆ Է:

ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՀԵՏ... (Ծար. էջ 4-էն)

– Հաշուում եմ մինչեւ տասը, մէկ... երկու... երեք...

Գլուխը կը հակէ դէպի ես, որպէսզի միայն երկինքը տեսնէ և անջատուելով հոգեղէն շրջապատէն, կը փորձէ ձեռքերը ազատել պարսանի կապանքներէն:

Այդ պահուն սուր ծակոց մը կը զգայ սրտին:

Վաղուց արդէն մտերմացած ճակատագրին հետ, սուսջանքի գոհունակութեամբ, ձերբազատուած պարտադրանքի կապանքներէն և ինքնամաքրումի արեան վկայագրով կը սլանայ դէպի երկինք:

Ինչպէս սիրոյ, մահուան մէջ՝ եւս յաղթական:

ՍԻՐՈՅ ՈՒ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

Իմ կեանքըս թող աղաչաւոր երգ մ'ըլլայ,  
Եղբրական ու միամիտ, սե՛ւ ողբերգ,  
Հսկայական ու տխրօրէն քաղցըր վէ՛րք,  
Իմ սիրտըս թող անհունին մէջ վէրք մ'ըլլայ,  
Իմ կեանքըս թող աղաչաւոր երգ մ'ըլլայ...:

Ես կը սիրեմ իմ տրամութիւնս դիւթական,  
Իմ տրամութիւնս Աստուածներո՛ւ ցաւին պէս,  
Քո՛յր, սրտիս մէջ ի՛նչ խաւարներ, վիհեր կան,  
Ջոր նայուածքովդ կ'ոսկեզօծես ու կ'օրհնես,  
Ես կը սիրեմ իմ տրամութիւնս դիւթական...:

Եկուր ինծի, լուսնակին պէս գեղեցիկ,  
Եկուր ինծի, լո՛յս ու ցնծում հեւալով  
Քու արծաթի շողերուդ մէջ սլացիկ  
Լուսաւորէ՛ աւերակներս լալո՛վ,  
Ես Մահն եմ, ե՛կ ինձ Կեանքին պէս գեղեցիկ...:

Իմ կեանքս թող սուռին երգին պէս ըլլայ,  
Ու երգս անուանդ կրկնումն ըլլայ թող յաւե՛րժ,  
Իմ կեանքս թող մո՛ւթ շրվէժին պէս ըլլայ,  
Ու դէպի քեզ անկում մ'ըլլայ գահավէժ.  
Իմ կեանքս թող առուին երգին պէս ըլլայ...:

Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի՛ պէս,  
Ուր խաւարներ կը փոթորկին մոլեղի՛ն.  
Երկու աչերդ՝ աստուածներու սկի՛հին պէս,  
Տո՛ւր ինձ անոնց մէջ սրբայցնել իմ հոգին,  
Ե՛ս կը սիրեմ երկու աչերդ վիհի պէս...:

Եկո՛ւր ինծի, քեզ կ'ըզձայ շունչըս անզօր.  
Եկո՛ւր, ես մութ բաներ քեզ ըսեմ  
Սիրոյ պէս քաղցըր ու Մահուան պէս հզօր.  
Գերեզմանիս լացող սիւքին պէս նսեմ  
Եկո՛ւր ինծի, քեզ կ'ըզձայ շունչըս անզօր...:

Իմ կեանքըս թող կորած նաւուն պէս ըլլայ,  
Շունչդ ուռեցնէ ծեր սուազաստըս անահ,  
Մի՛, մի՛ լսեր յոգնած հոգիս որ կու լայ,  
Տա՛ր զիս սիրոյ կղզիներէն դէպի Մահ,



ՍՈՒՏԵՐՈՒ ԿՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ  
[ԻՐԻ ԹԷ] ԱԶԱՏ ԱԾԽԱՐՀ ՄԸ

ՄԱՐԴԸ ԱՆԱՍՈՒՆԵՆ ԶԱՆԱԶԱՆԵԼ ՏՈՒՈՂ  
ՄԵԾԱԳՈՅՆ ԱՌԱԽԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝  
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽԻՂՃՆ Է, ԳՈՒԹԸ

ՈՒՐԵՄՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽԻՂՃԸ ԻՆՉՊԷ՞Ս  
ԿԸ ՀԱՆԴՈՒՐԺԷ՛ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՒ ԻՐԱՔԻ ՄԷՋ,  
ՏԱՐԻՆԵՐԷ Ի ԿԵՐ ԿԱՏԱՐՈՒԱԾ  
ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՈՐՈՎԷՏԵՏԻ MASSEMEDIA-ՆԵՐՈՒ  
ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ ՑԱՆՑԸ ԻՐԵՆՑ ԶԵՌՔԻՆ  
ՈՒՆԵՑՈՂ ՀՐԷՇՆԵՐՈՒ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՒ  
ԻՐԱՔԻ ՄԷՋ, ՏԱՐԻՆԵՐԷ Ի ԿԵՐ ՈՒ ՄԻՆՉԵՒ  
ԱՅՍՕՐ, ԱՆԹԻ ՈՒ ԱՆՀԱՄԱՐ ԱՆՄԵՂՆԵՐՈՒՆ  
ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՋԻՒՆԻ ՄԸ ՏՐՈՒԱԾԻՆ ԶԱՓ  
ԱՆԳԱՄ ԿԱՐԵՒՈՐՈՒԹՅՈՒՆ ԶԵՆ ՏԱՐ

«ԻՆՉ Է ԶԱՂԱԶԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ,  
«ԶԱՐԳԱՑԱԾ ԿԵԱՆՔԸ»  
-ԱՄԷՆ ԲԱՆ ՍՈՒՏ ՈՒ ԿԵՂԾԻՔ, ԾՊԱՐ ՈՒ  
ԱՄՕԹ: ԱՍԻԿԱ ԻՄ ՀԱՄՈՋՈՒՄՍ Է»  
29/4/1912 ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՒՆԿՈՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՌՈՒՐԷՆԵԱՆ]

Գրեթե 65 տարիներէ ի վեր և մինչեւ այսօր հրեաները, Պաղեստինի մէջ, բնիկ ժողովուրդը կը հալածեն ու կը ջարդեն:

Եւ «իբր թէ» քաղաքակիրթ Արեւմըտեան պետութիւնները, այս ցեղասպանութեան արգելք չեն ըլլար.....

1990-թ.էն ի վեր, և մինչեւ այսօր Ամերիկացիները, Իրաքի մէջ, ցեղասպանութիւն կը կատարեն:

Եւ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը այս ցեղասպանութեան արգելք չի կրնար ըլլալ:

Ա՞յս է՝ արդարութիւնը, քաղաքակրթութիւնը, «Ազատ Աշխարհ» ըսուածը...

1942-թ.էն ի վեր հրեաները՝ Պաղեստինցիներուն կը ջարդեն և նոյն ատեն պաղեստինցիներուն հետ կեղծ հաշտութեան բանակցութիւններ կը վարեն:

Եւ 65 տարիներէ ի վեր, ջարդերը և նոյն կեղծ հաշտութեան բանակցութիւնները միաժամանակ կը շարունակեն կատարել հրեաները:

Եւ, իբր թէ «Ազատ Աշխարհ»ը, այս կատարուած ողբերգական մշտնջենական զաւեշտներուն վերջ մը չի կրնար տալ:

Եւ կրնա՞ք երեւակայել, թէ հրեաները պաղեստինցիներու հետ կատարուած այս շինծու բանակցութիւնները ի՞նչ աստիճան անկեղծութեամբ, հարազատօրէն և որպէս ճշմարտութիւն կը ներկայացնեն աշխարհի հանրութեան: Ինչպէս ըրին 1993-թ.ին WASHINGTON-ի մէջ, ուր Ամերիկայի այն ատենուան նախագահ SEXY-MANNEQUIN Պիլ Զլինթըն-ի

միջնորդութեամբ, հրեայ Շիմոն Փերեզ-ը և պաղեստինցի Եասէր Արաֆաթը հաշտութեան դաշինք ստորագրեցին:

Եւ հրեաները այս հաշտութեան դաշինք ըսուած խեղկատակութիւնը շատ ակտիվ պաշտօնականացուցին և 1994-թ.ին Օսլօ-ի մէջ, Արաֆաթ-ին և Շ. Փերլանս-ին որպէս հաշտութեան ռաբուլիրաներ՝ Նոպել-ի խաղաղութեան մրցանակներ տրուեցան մեծ հանդիսութեամբ... բայց հրեաները շարունակեցին իրենց «Մեծն Իսրայէլ»ի ծրագիրները գործադրել և, շատ դիւրութեամբ, զանազան պատրուակներ գտան որ պաղեստինցիներուն շարունակեն հալածել և ջարդել՝ դարձեալ ու կրկին:

...Եւ 2004-թ.ին Ե. Արաֆաթ, հրեաներուն պաղեստինցիներու վրայ և ճոյնիսկ իր վարչութեան կեդրոնին վրայ կատարած ռմբակոծումները տեսաւ... Եւ հիւանդ վիճակի մէջ դժուարաւ ֆրանսա փոխադրուեցաւ և հոն մահացաւ:

Եւ չկրցաւ իբր շինծու հաշտութեան դերակատար՝ հրեաներուն տուած միլիոնները վայելել: Եւ 50 միլիոն տոլարի հասնող բայց արտասահման գտնուող իր հարստութիւնը կնոջը մնաց:

Գալով Շ. Փերես-ին՝ շինծու հաշտութեան երկրորդ դերակատարին՝ այս մէկն ալ, քանի մը օր առաջ, Իսրայէլի պետութեան նախագահ ընտրուեցաւ:

\* \*

Այսօր, բոլորին ծանօթ իրականութիւն մըն է, որ 2003-թ.ին Ամերիկայի ներկայ նախագահը GEORGE W. BUSH Իրաքի դէմ պատերազմ հռչակեց՝ յենելով սուտ և շինծու ամբաստանութիւններու վրայ յենելով որ, իբր թէ՛ Սատտամ Հիւսէյնը զանգուածային բնաջնջման զէնքեր ունի:

Այսօր կը յայտնուի որ այդ սուտ պատճառաբանութիւնները, որոնք պատերազմի պատրուակ եղան, բոլորն ալ հրեայ գործակալներու կողմէ ծրագրուած և պատրաստուած էին:

Եւ այս կազմակերպութեան ետեւ գտնուողը՝ հրեայ միլիառաւոր G. SO-ROS-ն էր:

Իսկ այս սուտերը G. BUSH-ին թելադրողը՝ ԱՄՆ-ի Պաշտպանութեան նախարարութեան [Փենթակոն] այն ատենուան թիւ երկու պատասխանատուն՝ փոխ նախարար և ծագումով հրեայ Փոլ Վոլֆովից-ն էր:

Ի՛նչ անուելի իրականութիւն...

Իրաքի այսօրուան ողբերգութեան պատճառ եղողները՝ Ա.-էն մինչեւ Շ., բոլորն ալ հրեաներ են:

Եւ Ճորճ Պուշ կրտսերը՝ հրեաներուն թելադրանքները գործադրող խամահիկ նախագահ մըն է միայն:

Երբ Իրաքի պատերազմին Փոլ Վոլֆովից-ին կողմէ սուտ պատճառաբանութիւններով G. W. BUSH-ին թելադրուած ըլլալը մէջտեղ ելաւ, 2005-թ.ին այս հրձիգ զեղծարարը Ա. Մ. Նահանգներուն Պաշտպանութեան փոխ-նախարարի պաշտօնէն ստիպուած հրաժարեցաւ:

Բայց այս հրէշը՝ իբր պատերազմի պատասխանատու՝ դատի չտրուեցաւ:

Ընդհակառակը՝ Ճորճ Պուշը-Կրտսեր Փոլ Վոլֆովից-ին աշխարհի բարձրագոյն պաշտօններէն մէկուն նշանակեց՝ BANK NATIONALE-ի նախագահ կարգուեցաւ:

Կրնա՞ք երեւակայել, որ հարիւր հազարներով անմեղներու սպանութեան պատճառ եղող հրեայ Փոլ Վոլֆովից-ը, Աշխարհի Դրամի դեկը իր ձեռքին ունեցող Համաշխարհային Դրամատան նախագահի պաշտօնը ստանձնեց...

Բայց, ճակատագրի ի՛նչ հեգնանք՝ 2007-թ.ի սկիզբը մէջտեղ ելաւ որ Փ. Վոլֆովից, Համաշխ. Դրամատան մէջ պաշտօնավարող իր հոմանունիին աշխատավարձը, անօրէն կերպով, բարձրացուցած է:



Եւ հակառակ ճ. Պուշի բուռն ընդդիմութեան, Համաշխ. Դրամաւում կեդրոնական վարչական Խորհուրդը ստիպեց Փ. Վոլֆովից-ին, որ հրաժարի իր պաշտօնէն... իր կատարած գեղծարարութեան առ ի պատիժ:

\* \* \*

Եւ այսօր, Պաղեստինի և Իրաքի մէջ, ողբերգութիւնները կը շարունակուին նոյն սաստկութեամբ...

Եւ ինչպէս որ վերը նշեցինք՝ ամէն օր հարիւրաւոր անմեղներ կ'սպաննուին: Բայց MASSEMEDIA-ներու լրատուութեան ցանցերուն համար կարծէք, թէ սպաննուողները միջիւններ եղած ըլլային: Այս լուրերուն բնաւ կարելորութիւն չեն տար:

Իրաքի պատերազմին համար 2003-թ.ին ըսած էինք, թէ «Ամերիկացիներուն Իրաքի մէջ մղած պատերազմին բուն նպատակը, գլխաւորը՝ սիւննիներու և շիիներու միջեւ եղբայրասպան պատերազմ բռնկեցնել է»:

Այս մարզին մէջ սիոնիստ Ամերիկացիները, դժբախտաբար, «մեծ յաջողութիւն» ունեցան:

Եւ այսօր, Իրաքի մէջի պատերազմը, աւելի շատ սիւննիներու և շիիներու միջեւ մղուող եղբայրասպան պատերազմի վերածուած է:

\* \* \*

...Հրեաները վերջերս, նոյն յաջողութիւնը ունեցան Պաղեստինի մէջ:

Պաղեստինի մէջ ազատագրական պայքար մղող շարժումին երկու թեւերը եղող՝ Ֆաթհ-ի և Համաս-ի միջեւ վերջերս շարունակուող զինեալ հակամարտութիւնը, եղբայրական պատերազմի յանգեցաւ: Ի մե՛ծ ուրախութիւն հրեաներուն:

**Թիւն հրեաներուն:**

Որովհետեւ Համաս-ը տեսած էր, որ Արաֆաթ-ին «Ֆաթհ»ը, վերջին շրջաններուն, սկսած էր հրեաներուն հրամանին ենթարկուող և զիջումներու գացող կազմակերպութեան մը վերածուիլ:

Եւ Պաղեստինի մէջ կատարուած վերջին ընտրութիւններուն, ժողովուրդին քուէներուն մեծամասնութեամբ և ամենայն արդարութեամբ Համաս-ը իշխանութեան գլուխ եկած էր:

Բայց, այս արդար ընտրութիւններէն գոհ չեղող և իբր թէ «ժողովրդավար» հրեաները և անոնց խամաճիկները կազմող Արեւմտեան պետութիւնները, իրենց գէնքի և դրամի ուժով խեղդել ուզեցին Համաս-ը: Եւ թիկունք կանգնեցան Ֆաթհ-ին: Եւ ասոր հետեւանքը այն եղաւ, որ Համաս-ի և Ֆաթհ-ի միջեւ խրամատը լայնցաւ: Եւ, ի վերջոյ, այս վիճակը եղբայրասպան կռիւի վերածուեցաւ:

\*

\* \*

Եղբայրասպան պատերազմ ստեղծելը՝ հրեաներուն և Ամերիկացիներուն նոր ռազմավարութիւնն է:

Ո՛՞՞ ՄԻԱՅՆ ԲԱԺԱՆԵԼ՝ ԻՇԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ԱՅԼ՝ ՀԱՐԿ Է ԲԱԺԱՆԵԼ, ՈՐ ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՍՏԵՂԾՈՒԻ:

Կը խնդրենք, որ ընթերցողը աչք մը տայ Իսրայէլի հետ սահման ունեցող երկիրներուն:

Անոնք, որ ենթարկուած են Իսրայէլ-ին [առժամաբար] շատ հանգիստ են. ինչպէս՝ Եգիպտոսն և Յորդանանը:

Բայց անոնք, որ տուժած են Իսրայէլի ծաւալապաշտական քաղաքականութենէն և չեն ենթարկուած Իսրայէլին, ինչպէս՝ Պաղեստինը, Իրաքը և Լիբանանը- կը տառապին:

Իրաքն այսօր բաժան-բաժան եղած է: Ամերիկեան լուծին տակ է և քառասային եղբայրասպան պատերազմի մէջ մխրճուած:

Պաղեստինը բոլորէն աւելի տառապողն է. և եղբայրասպան պատերազմի զոհը պիտի ըլլայ:

Լիբանանը նոյնպէս եղբայրասպան պատերազմի վտանգին ենթակայ է: Եւ այս վտանգը, Լիբանանի գլխուն վրայ, Դամոկլեան սուրի նման կախուած կը մնայ:

Եւ անոնք, որ նախկին վարչապետին սպանութեան համար հրեաներուն և Արեւմտեան պետութիւններուն թելադրանքով Սուրիան կ'ամբաստանեն, լաւ կ'ըլլայ, որ քիչ մը Իրաքի և Պաղեստինի այսօրուան ողբերգական վիճակին նային: Եւ մտածեն, թէ ո՛վ օգտուած է ոճիրէն:

\* \*


15 Մայիս 2007 թուակիր «Նայիրի»ի մէջ, «ԱՄՆ-ի պիտի տրուի՞ «Բ. Առիթ» տիրապետելու Աշխարհագունտին» վերնագրով Մեթր Գասպար Տէրտէրեանին հետաքրքրական, ուսանելի և այժմէական գրութիւնը կարդալու հաճոյքը ունեցանք:

Մեթրը իր այս գրութեամբ կ'ապացուցանէր, որ Ամերիկեան քաղաքականութիւնը ի՛նչ աստիճան անմարդկային և ծաւալապաշտական սկզբունքներու վրայ հիմնուած է:

Պիտի խնդրենք Մեթրէն, որ շարունակէ, նման նիւթերով, աշխատակցիլ «Նայիրի»ին:

Այս գրութեան նիւթը՝ ծագումով Բոլոնացի, Ամերիկեան քաղաքագէտ՝ ZBIGNIEW BRZEZINSKI-ի նորագոյն հրատարակութեան՝ «Երկրորդ Առիթ» խորագրով գիրքին վերլուծումն է:

Մեթր Տէրտէրեանի այս գրութենէն կը տեղեկանանք, որ

(→էջ) 

TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
 YAZIK OLDU ERMENİ MİLLETİNE.  
 ERMENİ MİLLETİNİN GERÇEK HİKAYESİ.  
 YIKILAN OSMANLI IMPARATORLUGUNUN SON KURBANI  
 ERMENİLER OLDULAR.  
 ÇÜNKÜ OSMANLILARIN ISGAL ETTİKLERİ TOPRAKLARDA YASİYAN  
 BÜTÜN YERLİ MİLLETLER, HÜRRIYETLERİNE KAVUSTULAR.  
 SIRPLAR, ARNAVUTLAR, BULGARLAR MACARLAR, ROMENLER,  
 YUNANLILAR VE BÜTÜN ARAP MİLLETLERİ BİRER DEVLET OLDULAR.  
 YALNIZ ERMENİLERİN VATANI, OSMANLILAR TARAFINDAN ÇALINDI.  
 VE ERMENİ MİLLETİ OSMANLILAR TARAFINDAN  
 SOYKIRIMINA UGRATILDI.  
 VE 4000 SENELİK ERMENİSTAN TOPRAKLARI UZERİNDE,  
 YENİ VE UYDURMA BİR TÜRKİYE DEVLETİ KURULDU.  
 İSTE BİR KAÇ CÜMLE İLE ERMENİLERİN VE OSMANLILARIN  
 GERÇEK HİKAYESİ.

1908-DE SELANIKLI YAHUDİLERİN VE DÖNME YAHUDİLERİN KURDUKLARI İTTİHAT VE TERAKKİ PARTİSİ ABDUL HAMİDİ DEVİREREK İSTANBULDA İKTİDARI ELE GEÇİRDİ.

YAHUDI VE DÖNME-YAHUDI OLMALARINA RAGMEN BU İTTİHATÇILAR ASIRI TÜRKÇÜ VE TURANCI İDİLER.

VE OSMANLI DEVLETİNİN YIKILMASINA ENGEL OLMAK İÇİN PLANLAR KURDULAR.

BU PLANLARA GÖRE İTTİHATÇILAR BÜTÜN KUVVETLERİNİ ANATOLYADA TOPLAYACAKLAR VE ANATOLYADA YALNIZ MÜSLÜMANLARDAN OLUSAN YENİ BİR DEVLET YARATACAKLARDI.

DÖNME YAHUDİLERİN İDARESİNDE OSMANLI IMPARATORLUGUNDA YASİYAN BÜTÜN MÜSLÜMAN HALKLARI, ARNAVUT, POMAK, BOSNAK, ÇERKEZ, LAZ, KÜRT VE TATARLAR BU YENİ DEVLETİN TEMELİNİ TESKİL EDECEKLERDİ.

İSTE ERMENİ SOYKIRIMI: SELANIKLI DÖNMELEK TARAFINDAN KURULAN İTTİHAT VE TERAKKİ PARTİSİNİN ANATOLYADA YALNIZ MÜSLÜMANLARDAN OLUSAN BİR DEVLET YARATMA PLANININ OLAGAN NETİCESİDİR.

VE BU PLAN, 1914 DÜNYA SAVASININ KARGASALIGINDAN İSTİFADE EDEREK 1915-DE İTTİHATÇILAR TARAFINDAN KORKUNÇ BİR ŞEKİLDE GERÇEKLEŞTİRİLDİ. VE ANATOLYADAKİ BÜTÜN ERMENİLER 4000 SENELİK VATANLARINDAN SÜRÜLDÜLER VE SOYKIRIMINA UGRATILDILAR.

VE ERMENİ SOYKIRIMI SAYESİNDE ANATOLYADA YALNIZ MÜSLÜMANLARDAN OLUSAN VE TÜRKİYE DENİLEN NE OLDUGU BUGÜN BİLE HÂLÂ BELİRSİZ BİR DEVLET YARATILDI.

\* \* \*

VE BUGÜN, TÜRKİYENİN (SÖZDE) TÜRK DENİLEN DEVLET İDARECİLER BU GERÇEKLERİ İNKAR EDİYOR VE "ERMENİ SOYKIRIMI OLMAMİSTİR" DİYORLAR.....

ÇÜNKÜ TÜRKLER, ERMENİ SOYKIRIMINI KABUL ETTİKLERİ TAKTİRDE, SONRA NELER OLABİLECEĞİNİ ONLAR ÇOK İYİ BİLİYORLAR. ÇÜNKÜ TÜRKLER, ERMENİ SOYKIRIMINI TANIRSA ANATOLYANIN ELLERİNDEN GİDECEĞİNİ, TÜRKİYE DENİLEN UYDURMA DEVLETİN İSKAMBİL KAGİTINDAN KALELER GİBİ İÇERDEN YIKILACAGINI ÇOK İYİ BİLİYORLAR.

BU KACINILMAZ GERÇEĞİ ARTIK YALNIZ TÜRK DEVLET İDARECİLERİ DEĞİL AYDIN, TÜRKÇÜ, TURANCILAR DA BİLİYOR.

ONUN İÇİN SON ZAMANLARDA BU AYDIN TÜRKÇÜ-TURANCILARIN ETEKLERİ TUTUSMUS, TEHLİKE İSARETİ VERİYORLAR.

ORTADOĞU TEKNİK ÜNİVERSİTESİ TARİH PROFÖSÖRÜ ÖMER TURAN BAKIN NE DİYOR "BU BİR GÜC MESELESİDİR. NE KADAR ZAYIF SAK, ERMENİ MESELESİYLE BİZİ ANADOLUDAN ATARLAR.



BU SAYIN PROFESÖRÜN: “BU-BİR GÜÇ MESELESİDİR” DEDİĞİ:

“SAKIN HA, VICDANA GELİP ERMENİ SOYKIRIMINI KABUL ETMEYİN. SAKIN HA GERÇEKLER ORTAYA ÇIKMASIN. O ZAMAN BİZİ ANATOLYADAN ATARLAR. INKAR EDİN, İNKÂR EDİN. DEVAMLİ İNKAR EDİN. YANI GÜÇLÜ DURUN” DEMEK İSTİYOR.

\* \* \*

SON ZAMANLARDA TÜRKLER ARASINDA ERMENİ SOYKIRIMI HAKKINDA BİR FİKİR DEĞİŞİKLİĞİ VAR.

ESKİDEN TÜRKLER ERMENİ SOYKIRIMI İÇİN: “TÜRKLER ERMENİLERİ KESMEDİLER. ERMENİLER TÜRKLERİ KESTİ” GİBİ TÜRKLERİN KENDİLERİNİN DE İNANMADIĞI SAFSATLAR İLERİ SÜRERLERDİ.....

SİMDİ İSE VAZİYET DEĞİŞTİ. DÜNYADA BUGÜN 18 ÜLKE ERMENİ SOYKIRIMINI RESMEN KABUL ETMİŞ DURUMDA.

RUSYA-FRANSA-ALMANYA-İTALYA- POLONYA-HOLLANDA, BELÇİKA, KANADA GİBİ 18 DEVLET.

VE ÜSTELİK DE TÜRKİYENİN AVRUPA BİRLİĞİNE GİRMESİ İÇİN BİR ÇOK AVRUPALI DEVLETLER, TÜRKLERİN ERMENİ SOYKIRIMININ KABUL ETMESİNİ SART KOSUYORLAR.

AVRUPALI DEVLETLERİN ERMENİ SOYKIRIMINI TANIMALARINDA ÇOK MÜHİM BİR DURUM VAR.

AVRUPA DEVLETLERİNDEN DOKUZU: TÜRKLERİN AVRUPA BİRLİĞİNE ÜYE OLMA BASVURUSUNDAN SONRA ERMENİ SOYKIRIMINI KABUL ETMİŞLER.

BUNUN MANASI SU: TÜRKİYENİN AVRUPA BİRLİĞİNE ÜYE OLMASI MESELESİ MASAYA GELİRSE, TÜRKİYENİN ÜYELİĞİNE KARŞI OLAN BU DEVLETLER TÜRKLERDEN ERMENİ SOYKIRIMINI TANIMASINI İSTİYECEKLER.

İSTE TÜRKİYE İÇİN ZORLUK BURDA BAŞLIYOR.

TÜRKİYE AVRUPA BİRLİĞİNE GİRMEK İSTİYOR AMA, ERMENİ SOYKIRIMINI KABUL ETMEK İSTEMİYOR. ÇÜNKÜ TÜRKİYE ERMENİ SOYKIRIMINI KABUL EDERSE ÇOK BÜYÜK TEHLİKELER DOĞABİLİR.

AVRUPA DEVLETLERİ DE BU DURUMU BİLİYORLAR. VE TÜRKİYEYİ AVRUPA BİRLİĞİNE ALMAMAK İÇİN ERMENİ SOYKIRIMINI KABUL ETME SARTINI ÖNE SÜRÜYORLAR....

TÜRKİYEDE DE BİR ÇOK AYDINLAR TÜRKİYENİN GERİCİ YOBAZ TEHLİKESİNDEN KURTULARAK, AVRUPALI BİR TÜRKİYE OLMASINI İSTİYORLAR.

BUNUN İÇİN DE BİR ÇOK AYDINLAR TÜRKİYENİN ARTIK GERÇEKLERİ KABUL EDEREK, ERMENİ SOYKIRIMINI TANIMASINI İSTİYORLAR.

FAKAT BİR KİSİMİ TÜRKÇÜ-TURANCI AYDINLAR DA “VATAN ELDEN GİDER BİZİ ANADOLUDAN KOVARLAR” DİYEREK ERMENİ SOYKIRIMININ TANINMASINI İSTEMİYORLAR....

BİZİM İNANCIMIZ DA SÖYLE: TÜRKİYE ENİNDE SONUNDA GERÇEKLERİ KABUL ETMİYE MECBUR OLACAKTIR.

Յ. Չ.

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻՐԲ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՂՔ ԵՂԱՒ ՀԱՅ ԱԶԳԻՆ:**

**ՀԱՅ ԱԶԳԻՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ:**

ԿՈՐԾԱՆՈՂ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ԶՈՂԸ` ՀԱՅԵՐԸ ԵՂԱՆ:

ՈՐՈՎՅԵՏԵՒ ՕՍՄԱՆՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԻԱԾ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳՏՆՈՒՈՂ ԲՈԼՈՐ ԲՆԻԿ ԱԶԳԵՐԸ` ԻՐԵՆՑ ԱՆԿԱՊՈՒԹԵԱՆ ՏԻՐԱՑԱՆ` ՍԵՐՊԵՐԸ, ԱԼՊԱՆԱՑԻՆԵՐԸ, ՊՈՒԼԿԱՐՆԵՐԸ, ՀՈՒՆԳԱՐՆԵՐԸ, ՌՈՒՄԱՆԱՑԻՆԵՐԸ, ՅՈՅՆԵՐԸ և ԲՈԼՈՐ ԱՐԱԲ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՈՐՈՆՔ ՄԷՅ ՄԷԿ ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՂԱՆ: ՄԻԱՅՆ ՀԱՅԵՐՈՒՆ

**ՀԱՅՐԵՆԻՔԸ` ՕՍՄԱՆՑԻՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ ԳՈՂՑՈՒԵՑԱԻ:**

ԵՒ ՀԱՅ ԱԶԳԸ` ՕՍՄԱՆՑԻՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԻ:

ԵՒ 4000 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՅԱՏԱՆԻ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ, ԹՈՒՐՔԻԱ ԿՈՉՈՒՈՂ ՆՈՐ

**ԵՒ ՇԻՆԾՈՒ ԹՈՒՐՔ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԻՄՆՈՒԵՑԱԻ:**

**ԱՀԱ, ՄԷԿ ՔԱՆԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՄԲ,**

**ՀԱՅՈՑ ԵՒ ՕՍՄԱՆՑԻՆԵՐՈՒՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ:**

1908-թ.ին, Սելանիկցի հրեաներու և դաւանափոխ հրեաներու կողմէ հիմնուած ITTIHAD VE TERAKKI կուսակցութիւնը` Ապտիլ շամիտը գահընկեց ընելով Պոլսոյ մէջ, իշխանութիւնը ձեռք անցուց:

Չրեայ և դաւանափոխ չրեայ ըլլալով հանդերձ, այս իթթիհատականները ծայրայեղ թրքամու և Թուրանական էին:

Եւ Օսմանեան կայսրութեան կործանման արգելք ըլլալու համար, անոնք ծրագիրներ պատրաստեցին:


Այս ծրագիրներուն համաձայն` իթթիհատականները իրենց բոլոր ուժերը Անաթոլիոյ մէջ պիտի կեդրոնացնէին և հոն միայն, իսլամներէ կազմուած, նոր պետութիւն մը պիտի ստեղծէին: Եւ դաւանափոխ հրեաներուն իշխանութեան ներքեւ, Օսմանեան կայսրութեան մէջ ապրող բոլոր իսլամ ժողովուրդները` Ալյան, Բոմակ, Պոշնակ, Չերքէզ, Լազ, Քիւրտ և Թաթարները այս նոր պետութեան հիմերը պիտի կազմէին:

Ահա՛ թէ ինչու, հայկական ցեղասպանութիւնը այս Սելանիկցի դաւանափոխ հրեաներուն կողմէ կազմուած "ITTIHAD VE TERAKKI" կուսակցութեան, Անաթոլիոյ մէջ միայն իսլամներէ կազմուած նոր պետութիւն մը ստեղծելու ծրագրին բնական հետեւանքն էր:

Եւ այս ծրագիրը, 1914-թ.ի Համաշխարհային պատերազմին խառնաշփոթութենէն օգտուելով, իթթիհատականներուն կողմէ ահուելի վայրագութեամբ իրագործուեցաւ:

Եւ Անաթոլիոյ բոլոր հայերը, իրենց 4000 տարուան հայրենիքէն աքսորուեցան և ցեղասպանութեան ենթարկուեցան:

Եւ «Շնորհիւ» այս հայկական ցեղասպանութեան, Անաթոլիոյ մէջ միայն իսլամներէ կազմուած և Թուրքիա կոչուած և մինչեւ այսօր ալ իր ի՞նչ ըլլալը անորոշ եղող պետութիւն մը ստեղծուեցաւ:



Եւ այսօրուան Թուրքիոյ [Իբր Թէ] Թուրք կոչուող պետական իշխանաւորները այս իրականութիւնները կ'ուրանան, և «Հայկական ցեղասպանութիւն չէ եղած» կ'ըսեն:

Որովհետեւ Թուրքերը շատ լաւ գիտեն, որ եթէ ցեղասպանութիւնը ընդունին, ասոր հետեւանքները ինչե՛ր պիտի ըլլան:

Որովհետեւ Թուրքերը շատ լաւ գիտեն, որ եթէ ցեղասպանութիւնը ընդունին, Անաթոլիան ձեռքերնէն սիտի երթայ և Թուրքիան, խաղաթուղթէ աշտարակի նման, փուլ պիտի գայ:

Այս անխուսափելի իրականութեան այլեւս ոչ միայն Թուրք պետական իշխանաւորները տեղեակ են, այլեւ` քիչ թէ շատ գիտակից թրքամուլ-Թուրանականներն անգամ գիտեն:

Այս պատճառաւ, վերջին շրջաններուն, այս թրքամուլ-Թուրանականները իրար անցած, ահազանգ կը հնչեցնեն:

Անգարայի Միջին Արեւելքի Թեքնիք համալսարանի սլամութեան ուսուցիչ Փրոֆ. ÖMER TURAN նայեցէք, թէ ի՛նչ կ'ըսէ.— «Այս՝ զօրութեան հարց է: Եթէ տկար ըլլանք՝ մեզ Անաթոլիայէն դուրս կը նետեն»:

Այս յարգարժան Փրոֆեսորը «Այս՝ զօրութեան հարց է» ըսելով, հետեւեալ գաղափարները կը յայտնէ.

«Չըլլայ, թէ խղճահարութեան գալով հայկական ցեղասպանութիւնը ընդունիք: Չըլլայ, թէ իրականութիւնները մէջտեղ հանէք: Այն ատեն մեզ, Անաթոլիայէն դուրս կը նետեն: Ուրացէ՛ք: Ուրացէ՛ք: Տեւաբար ուրացէ՛ք: Զօրաւոր կեցէ՛ք»:

★ ★ ★

Վերջին շրջաններուն, Թուրքերուն մէջ, հայկական ցեղասպանութեան մասին մտածելակերպի փոփոխութիւններ կը տեսնուին: Ասկէ առաջ Թուրքերը, հայկական ցեղասպանութեան մասին սապէս կ'ըսէին.— Թուրքերը չէ, որ հայերուն ջարդեցին: Հայերն են, որ Թուրքեր ջարդած են»:

Իրականութեան մէջ՝ այս ճաբատուներուն Թուրքերն ալ չէին հաւատար:

Միջոցաւ հիմա կացութիւնը փոխուած է:

Այսօր աշխարհի մէջ 18 սլետութիւն, հայկական ցեղասպանութիւնը սլաշտօնասլաշտ ծանցցած են. Ռուսիա, Ֆրանսա, Գերմանիա, Իտալիա, Լեհաստան, Նիւ Զիլանտա, Պելժիքա, Գանատա— և այլն՝ աւելի քան 18 սլետութիւններ:

Եւ աւելին՝ շատ մը եւրոպական սլետութիւններ, Թուրքիոյ եւրոպական Միութեան անդամակցութեան համար, հայկական ցեղասպանութեան անոր կողմէ ընդունուիլը պայման դրած են:

Եւրոպական սլետութիւններուն կողմէ հայկական ցեղասպանութիւնը ծանցնալու հարցին մէջ, շատ կարեւոր իրավիճակ մը կայ: Հայկական ցեղասպանութիւնը ծանցող 9 սլետութիւններ, Թուրքիոյ կողմէ եւրոպական Միութեան անդամակցելու դիմումի ներկայացումէն յետոյ է, որ հայկական ցեղասպանութիւնը ծանցցած են: Այս իրավիճակը սասլաշտ կը բացատրուի:

Եթէ Թուրքիոյ եւրոպական Միութեան անդամակցութեան հարցը սեղանի վրայ գայ, Թուրքերուն եւրոպական միութեան մէջ մտնելուն հակառակ եղող սլետութիւնները, Թուրքերուն հայկական ցեղասպանութիւնը ընդունիլը սլետի պահանջեն:

Թուրքիոյ համար դժուարութիւնը այս կէտէն կ'սկսի:

Թուրքիան եւրոպական Միութեան մէջ մտնել կ'ուզէ: Բայց հայկական ցեղասպանութիւնը ընդունիլ չուզեր: [Որովհետեւ Թուրքիա գիտէ, որ եթէ հայկական ցեղասպանութիւնը ընդունի, իրենց համար ի՛նչ մեծ վտանգներ կրնան ստեղծուիլ]:

Եւ եւրոպական սլետութիւնները այս կացութենէն տեղեակ են, և Թուրքիան եւրոպական Միութեան մէջ չառնելու համար, Թուրքիոյ կողմէ հայկական ցեղասպանութեան ընդունուիլը պայման կը դնեն:

★ ★ ★

Թուրքիոյ մէջ շատ մը լուսամիտ անձեր, Թուրքիան յետամնաց և մոլեռանդ կրօնականներու վտանգէն ազատելու համար, Թուրքիոյ եւրոպական Պետութիւն մը դառնալը կը փափաքին:

Այս հեռանկարով շատ մը Թուրք մտաւորականներ, Թուրքիոյ իրականութիւնները այլեւս ծանցնալը և հայկական ցեղասպանութիւնը ընդունիլը կը պահանջեն:

Բայց ուրիշ Թրքամուլ Թուրանականներ և ուրիշներ ալ, «Երկիրը մեր ձեռքէն կ'երթայ, մեզ Անաթոլիայէն կը վռնտեն» ըսելով, հայկական ցեղասպանութիւնը ընդունելուն բացարձակասլաշտ հակառակ են:

Մենք ալ կը հաւատանք որ Թուրքիան, ի վերջոյ, այս իրականութիւնները սլետի ստիսլուի ընդունիլ:



**ՍՈՒՏԵՐՈՒ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ [ԻՐ ԹԷ] ԱԶԱՏ... (Շար. էջ 2-էն)**

Զ. Պրզեզիդենտի իր այս գիրքին մէջ «Համաշխարհային տասը անկիւնադարձային փոփոխութիւններ» կը ներկայացնէ՝ որոնք կենսական էին «Ամերիկեան աշխարհակալութեան» համար:

Մենք այստեղ պիտի նշենք միայն՝ Զ. Պրզեզիդենտի-ի համաշխարհային վեցերորդ փոփոխութեան մասին մեր գաղափարները՝ որոնք Չեչենիոյ պատերազմին կը վերաբերին:

Ամերիկացին ցաւ կը յայտնէ, որ «Ամերիկեան վարչութիւնը, նախագահին ապիկարութեան հետեւանքով, չկորցաւ աւելի արդիւնաւէտ կերպով օգտագործել Չեչենիոյ պատերազմը»:

Մերին այս գրութեան շնորհիւ շատ աւելի կը հիմնաւորուին 12 Յուլիս 2005-թ.ին, «Նայիրի»ի մէջ Պրզեզիդենտի-ի մասին գրուածները:

Այստեղ օգտակար կը նկատենք մէջբերելը 12 Յուլիս 2005-թ.ի «Նայիրի»ին մէջ լոյս տեսած Պրզեզիդենտի-ին ո՛վ և ինչ գաղափարի ծառայող անձնաւորութիւն մ'ըլլալը բացատրող մեր գրութիւնը:

**ԱՀԱ՛, ԱՅՍ ՄԱՐԴԱՀՐԷՇ  
ԲՈԼՈՆԱՅԻ ԶՊԻԿՆԻԻ ՊՐԶԵԶԻՆՍՔԻՆ Է,  
ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ...**

...11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2001-Ի NEW YORK-Ի  
ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ,  
23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2002-Ի ՄՈՍԿՈՒԱՅԻ ՕԲԵՐԱՅԻ  
ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ,  
11 ՄԱՐՏ 2004-Ի ՄԱՏՐԻՏԻ ԿԱՅԱՐԱՆԻ  
ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ,  
3 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004-Ի ՌՈՒՍԻՈՅ ԲԵՍԼԱՆ ՔԱՂԱՔԻ  
ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ,  
ԵՒ ՔԱՆԻ ՄԸ ՕՐ ԱՌԱՋ՝ 7-7-2005-Ի ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ  
ԿԱՏԱՐՈՒԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ...  
ԵՒ ՇԱՏ ՄԸ ՌԻՐԻՇ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ...  
ՈՐՈՎԼԵՏԵԻ ZBIGNIEW BRZEZINSKI-Ն Է, ՈՐ ԻՐ  
ԽՈՐՀՐԴԱԿԱՆ 1977-1981-Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՃԻՍԻ ՔԱՐԹԸՐ-Ի, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ  
ՔԱՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԾԱՅՐԱՅԵՂ ԻՍԼԱՄ  
«ՍՈՒՃԱՀԻՏ»ՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄԵԼՈՒ, ՄԱՐԶԵԼՈՒ  
ԵՒ ԶԻՆԵԼՈՒ ՍԱՏԱՆԱՅԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՌԱԾ ԷՐ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

Բայց քաղաքական պայմանները, միշտ ու տեսարար կը փոխուին: Նաեւ՝ պետութիւններու ռազմավարութիւնն ալ:

1978-1981-թ.ին Ամերիկայի նախագահ Միմի Քարթըրի խորհրդականը եղող, ծագումով Բոլոնացի Zbigniew Brzezinski-ին մեր համոզումով՝ աշխարհը կործանումի տանող որոշում մը առաւ՝

«Սովետական Միութիւնը քանդելու համար, անոր շուրջ գտնուող իսլամ երկիրներէ ներս, ծայրայեղ իսլամական մոլեռանդական շարժում ստեղծել»:

Եւ այս նպատակով ամերիկացիները սկսան, իրենց խամահիկները եղող շատ մը իսլամական երկիրներու մէջ, ծայրայեղ իսլամ գործակալներու խմբակներ վերակազմել, մարզել և զինել:

Այս մէկը եղաւ ամերիկացիներու ձեռամբ, իսլամ «Մուճահիտ»ներու շարժման սկիզբը [Այս մասին տես՝ «Նայիրի» 19-10-2005 թիւը]: 2004

Բոլորիս ծանօթ է, թէ Սովետները որքան մեծ թիւով զոհեր տուին Աֆղանիստանի մէջ՝ ամերիկացիներուն մարզած և զինած Մուճահիտին-ներուն զէնքերով:

Եւ 1991-թ.ին Սովետ Միութիւնը կործանեցաւ:

Բայց, ծայրայեղ իսլամական «Մուճահիտ»ներու շարժումը իր գոյութիւնը շարունակեց: Որովհետեւ իսլամներուն մէջ, ծայրայեղ մոլեռանդութեան սերմերը տարածուած էին այլեւս: Ու նաեւ, մոլեռանդ իսլամները, դեռ կառուարելիք շա՛տ «սլաւտականութիւններ» ունէին:

Սովետական Միութիւնը քանդուած էր: Բայց, մինչ այդ, ամերիկացիներուն համար, ուրիշ վտանգ մը մէջտեղ ելած էր՝ «Եւրոպական Միութիւնը», որ Սովետ Միութեան չափ, նոյնիսկ ասկէ ատելի մեծ «փորձանք» մըն էր Մ. Նահանգներուն գլխուն: Եւ ամէնէն կարելորը՝ Սիոնիստական սադայելական ծրագիրներուն համար, Եւրոպային, Մերմակ ցեղին և Քրիստոնէութեան քանդուիլը պէտք էր:

Բայց ամերիկացիները չէին գիտեր, որ ծայրայեղ և մոլեռանդ իսլամներուն համար, իրենցմէ չեղողը [այսինքն՝ իսլամ չեղող ամէն անձ] Քալֆիր, կեաւոր է: Այդ իրենցմէ չեղողը ո՛վ որ ալ ըլլար՝ Ռուս, Եւրոպացի կամ Ամերիկացի-բոլորն ալ «Կեաւոր» էին:

Եւ ասոր հետեւանքը եղաւ՝ 11 Սեպտեմբեր 2001-ի Նիւ Եորքի մեծ աղէտը: Եւ Ամերիկացիները այս աղէտէն օգտուելու կերպը գիտցան: Իբր թէ անսրբակիչները սլիսի «սլատեան» ըսելով՝ գրաւեցին Աֆղանիստանը և Միջին Ասիոյ երկիրները:

«Նայիրի» 12 Յուլիս 2005-թ.

\*\*

Յովհաննէս-Պօղոս Բ. և Զ. Պրզեզիտքի երկու բոլոնացիներ են, որոնք թշնամի էին թէ՛ Սովետներուն և թէ՛ Ռուսերուն:

Այս երկու բոլոնացիները ամէն բան ըրին իրենց կեանքին մէջ, որ Սովե-



տական Միութիւնը կործանի: Եւ՝ յաջողեցան:

Բայց երկուքն ալ այսքանով չգոհացան: Եւ շարունակեցին աշխատանքը՝ Ռուսիան կործանելու համար:

Երկուքին ալ կեանքի պատմութիւնները լի են հակառուսական սադրիչ գործունէութիւններով:

Անոնց այս թշնամութեան պատճառը [իբր բոլոնացի և կաթողիկէ] իրենց պատմական արմատներուն մէջ պէտք է փնտռել:

Հակառակ, որ բոլոնացիները Սլաւ ցեղին կը պատկանին՝ իրենց կրօնական դաւանութեան պատճառաւ տեւապէս վտանգաւոր թշնամիները եղած են Ռուս ազգին, ամբողջ պատմութեան ընթացքին, դժբախտաբար: Եւ նոյնիսկ գործակցած են թուրքերուն հետ՝ Ռուսերուն դէմ:

Բոլոնացիները ապերախտ Ազգ մըն են: Միշտ վնաս հասցուցած են Ռուսերուն:

Նոյնիսկ, հիմա, իրենց հողերուն վրայ, հակահրթիռային արդիական խարիսխներ հաստատելու արտօնութիւն տուած են Ամերիկացիներուն, կրկին ու դարձեալ Ռուսերուն դէմ իրենց սնուցած դարաւոր թշնամութեան պատճառաւ:

**Մ Ե Ծ Ի Տ Ա Ն Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ո Ւ Թ Ե Ա Ն  
Ն Ա Խ Ա Ձ Ե Ռ Ն Ո Ւ Թ Ե Ա Մ Բ ...**

**«ՆՈՐ ԿԻԼԻԿԻԱ» ԳԻՒՂ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ**

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի 16-րդ նիստի բացումը տեղի ունեցաւ Երեքշաբթի 19 Յունիս 2007-ին, Երեւանի մէջ, նախագահութեամբ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ռոպերթ Քոչարեանի: Յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսի, Հիմնադրամի սոյն նիստին ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան, Առաջնորդ Թեմիանի Հայոց թեմի:

Սրբազանը խօսք առնելով, Վեհափառ Հայրապետին ողջոյնները հաղորդեց Հանրապետութեան նախագահին և ներկայ ժողովականութեան: Ապա, ան ուրախութեամբ յայտնեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը նախաձեռնած է «Նոր Կիլիկիա» գիւղի շինութեան Ղարաբաղի մէջ, որուն շինարար աշխատանքներուն և նվաճման ներդրումին իրենց մասնակցութիւնը սլիտի բերեն Կիլիկեան Ս. Աթոռի հովանաւորութիւնը վայելող բոլոր թեմերը:

Յայտնենք, թէ Հիմնադրամը այս տարի կ'ամբողջացնէ իր 15-ամեակը, և Հայաստանի Նախագահին արժեւորումով, արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալած է անցող տարիներուն: Ժողովի բացման ընթացքին, Նախագահ Քոչարեան սյարգեւատրեց 10 Սփիւռֆահայ բարերարներ:

Այս առթիւ հանդիմով իմացանք, որ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի անդամ նշանակուած է Գանատարնակ (նախկին լիբանանահայ) սզգային Պրն. Արա Պոյանեան:

«Նայիրի» կը շնորհաւորէ իր բարեկամ-ընթերցող Պրն. Արան և կը մաղթէ իրեն արդիւնաւէտ ծառայութիւն Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդէն ներս:



**ԼԻՔԱՆԱՆ ԵՒ ԻՐ ԳՈՂԳՈՒԹԱՆ... (Շար. էջ 1-էն)**

Տիրող կարծիքն այն է, որ Արեւմուտքին Նոր Գաղութարարները, Համաշխարհայինացումն ու ռազմավարները Լիբանանը կ'ուզեն կամ արդէն մեկնակէտ-յեւնարանի վերածած են իրենց նուաճողական ախորժակը, շահածարաւ որկորը յագեցնելու համար: Ուրկէ մեկնելով կը ջանան ընդլայնել և նորատիպ գաղութատիրութիւն հաստատել Մերձաւոր և Միջին Արեւելքի վրայ, ունելի գործածելով իրենց ծառայութեան կոչուած մանր գործօններ: Երբայական տէրութիւնը ունենալով գլխաւոր խարխիս:

Ժամանակը պիտի ամբողջութեամբ փողագործէ հիւսիսային Լիբանանի սա ողբերգութեան մութ ծալքերը, որուն կապակցութեամբ փութկոտ հետեւութիւններ կը կատարուին, աջ ու ահեակ մատնացոյց կ'ընեն մեղաւոր: Բայց ոչ մէկ վերջնական համոզիչ և ապացոյց դեռ չեն կարկայացուցաւ: Մօտիկ ապագան լոյսի կը բերէ բուն ճշմարտութիւնը:

Ի պատասխան անոնց որոնք «ամէն քարի տակ» Սուրիան կը տեսնեն, դրացի տէրութեան պաշտօնական բանբերը ըսաւ... Առանց հետաքննութեան արդիւններուն սպասելու, տեղեկանալու նման ամբաստանութիւններ կատարելը կը ծառայէ քաղաքական այն կողմերուն որոնք չեն ուզեր Լիբանանի գերագոյն շահերուն իրականացումը: Այս մթնոլորտի մէջ սուրիացի աշխատաւորներ ենթարկուած են թշնամական վերաբերումներու: Պատասխանատուութիւնը պարտին ստանձնել մեր դէմ անհիմն ամբաստանութիւն կատարողները»: Որո՞ւ համար գաղտնիք է, որ Արեւմուտքին աչքին Սուրիա, Իրան և իրենց բարեկամները... փուշեր են:

**ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՍՏ... (Շար. էջ 5-էն)**

Նրանք աւելի ծանր յանցանք են կատարում սեփական ժողովրդի առջեւ, նրանից թաքցնելով ամբողջ ճշմարտութիւնը, հենց նաեւ թուրք ժողովրդի նկատմամբ Երիտթուրքերի կազմակերպած ահաւոր ողբերգութեան մասին: Երիտթուրքերի նորօրեայ յետնորդները ոչ միայն իրենց արարքով խորացնում են թուրքիայի ճակատի սեւ խարանը, այլեւ խաբում են սեփական ժողովրդին, առեւանգելով ժողովրդի յիշողութիւնը, նրան զրկում պատմական յիշողութիւնից: Իսկ պատմութիւնն ու ժամանակը, ինչպէս յայտնի է՝ դաւան ու խիստ դատաւոր է այդպիսիների նկատմամբ:

Վերջապէս, էնվերի աճիւնի տեղափոխումով թուրքական հողը դատապարտուեց մի նոր խայտառակութեան, թուրքիայի կառավարողների կամքով դառնալով մարդկութեան դէմ յանցանք կատարած և մարդկութեան նզովքին արժանացած հրէշների վերջին ապաստանը:

Ի հարկէ, ամէն մի երկիր ինքն է պատասխանատու, թէ իր հողը ինչով է պանծացնում և ինչով՝ խայտառակում: Թուրքիայի կառավարող շրջանակները էնվերի աճիւնը տեղափոխելով ընտրեցին երկրորդ միջոցը: Դա իրենց գործն է:

Բայց մեր համոզմամբ մարդկային քաղաքակրթութեան նոր, երրորդ հազարամեակի շեմին, թուրքական կառավարիչների այդ խայտառակ քայլը դաժան մարտահրաւէր է՝ նետուած աշխարհին և մենք յուսով ենք, որ ինչպէս դարասկզբին, այնպէս էլ հիմա բոլոր երկրների հումանիստ գործիչները հանդէս կը բերեն միասնական կամք ու վճռականութիւն, ստիպելով իրենց կառավարութիւններին Փանթուրքիզմի գաղափարախօսների հետու գնացող նպատակների առջեւ ամուր պատնէջ ստեղծելու համար:

Այլապէս վաղը ուշ կը լինի: Հակառակ դէպքում սրգէն սաղմնաւորուած էնվերներն ու հիւլերները 21-րդ դարի սկիզբին մարդկութեանը կը կանգնեցնեն անկանխատեսելի իրողութեան առջեւ:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊՊԱՆՈՒԹԵԱՆ 92 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՏԷՐ ԶՕՐ**  
**ԳԷՈՐԳ ԳԻՐԻՃԵԱՆ**

Այս տարի եւս, Յովսէփ Աշնեանի փոխադրական Գրասենեակը՝ «Աշնեան Թուրգ», հաւատարիմ իր սովորութեան, գնահատելի հետեւողականութեամբ և ի յարգանք Ապրիլեան Մեծ Եղեռնի նահատակներուն, անոնց անմոռաց յիշատակիս, կազմակերպեց Խլխ ազնացութիւն դէպի Տէր Զօր, մեր ժողովուրդի անշիրիմ և բացօդայ մէկ հաւաքական գերեզմանը եղող Մարկատէ:

«Նայիրի» թերթի կողմէ սպարոականութիւն տրուած էր ինծի, իմբագրութեան կողմէ, որ իբր թղթակից մասնակցիմ այս երթին: Հանդիմով ու երկիրդած սյաւորաստականութեամբ կատարեցի պարականութիւնս, մնալով շնորհակալ թէ՛ «Աշնեան հիմնարկութիւն»ին և թէ՛ թերթի Տնօրէնութեան:

Անցողակի ըսեմ, որ «Նայիրի»ի և Պրն. Աշնեանի միջեւ օգուակար գործակցութիւն կ'ընթանայ տարիներէ ի վեր: Ճամբորդական գրասենեակին ձեռնարկները միշտ արձագանգուած են թերթին կողմէ, մանաւանդ՝ քաջայերուած:

Հանելի է հաստատելը նաեւ, որ մանաւանդ Ապրիլ 24-ի տարեդարձներու առթիւ, Լիբանանէն դէպի Տէր Զօր իմբային մեկնումները երթալով աւելի բազմամարդ և յանախակի կը դառնան: Ինչ որ «Նայիրի»ի մաղթանքն եղած է: Կը յիշեմ որ անցեալ տարի, թերթին աշխատակիցներէն Պրն. Արտաշէս Գույումեան որ մաս կազմած էր «Աշնեան Թուրգ»ի խումբին և այցելած Մարկատէ, իր տպաւորութիւնները «Նայիրի»ին տուաւ երկար յօդուածաշարով մը: Անոնցմէ մէկուն մէջ ան մաղթած էր, որ հայկական ցեղասպանութիւնը խորհրդանշուլ իւրաքանչիւր Ապրիլ 24-ի առթիւ, լիբանանահայ ուսանողներու հաւաքական ուխտագնացութիւններ կատարուին դէպի Տէր Զօր: Ուրախալի է ըսելը, որ այս «Զայնը» լսուած ըլլալու է, քանի որ անցեալ Ապրիլ 24-ին ուսանողական երթեր կատարուեցան դէպի Մարկատէ:

Ուրեմն... նախկիններուն պէս մեր խումբն ալ, Պրն Յովսէփ Աշնեանի գլխաւորութեամբ և իր հաստատութեան սուջեւէն, շքեղ օթօսլիսով մը ճամբայ ելաւ երեկոյեան:





*Ա. շարք, ճախէն աջ՝ Տիկ. Խաչատուրեան, Տիկ. Մարօ Զեօրէմեան, Տիկ. Միրէյ, Տիկ. Վրէժուհի Փափազեան, Երեցկին Այտա Քերթեզեան: Բ. շարք՝ ճախէն աջ՝ Սարգիս Խաչատուրեան, Յովսէփ Աշեան, Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Քերթեզեան, Գեորգ Գիրիմեան, Յարութիւն Գարասյանազեան, Սահակ Պասբաւեան:*

Ուխտագնացներու խումբին մէջ էր Աշրաֆիյէի Սրբ. Յակոբ եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Քերթեզեան, որուն աղօթք-Պահպանիչով ու իրախուսիչ խօսքերով մեր խումբը ճամբայ ելաւ:

Հասանք Հալէպ գիշերուան ժամը 9-ին: Կարճատեւ պտոյտ մ'ըրինք քաղաքին մէջ, փոքր խմբակներու բաժնուած և ապա աղօթեցինք և մոմ վառեցինք, Նախախընամութենէն խնդրելով ապաւեն ու գուք, որ մեր ուղեւորութիւնը անցնի անփորձանք և ապահով, որ մեր ուխտը կատարենք հանդէպ մեր նահատակներուն:

Ապա եղանք ճաշարան, ուր մեզի յատկացուած սեղանները արդէն մեզ կը սպասէին տարբեր համադրամներով: Հոն կար հայկական նուագախումբ ու երգիչ: Ընթրիւք անցաւ հաճելի: Սակայն չէինք կրնար աւելի յամենալ: Օթօպիւսը մեզ կը սպասէր: Անցանք մեր տեղերը և շրջելէ յետոյ Սուրիոյ հիւսիսային մայրաքաղաքին գլխաւոր փողոցներէն, ուղղութիւն բռնեցինք Ռաֆֆան և այնուհետեւ՝ դէպի Տէր Զօր, ուր հասանք շատ ժամեր ճամբորդելէ ետք:



*Եփրատ գետի սփին, Ապրիլ 24-ի առաւօտուն, մեր նահատակներու ոգիներուն հետ հաղորդուելու պահը: Կ'աղօթէ նահատակներուն հոգիներուն համար Տ. Մեսրոպ Քհնյ. Քերթեզեան, հոգեւոր հովիւ Աշրաֆիյէի Ս. Յակոբ եկեղեցւոյ:*

Արշալոյսի առաջին շուրջը եղան մեզ դիմաւորողը: Մեր հիւրանոցը կը գտնուէր տեղւոյն հայկական եկեղեցիին դիմաց: Նախանշեցինք և գացինք եկեղեցի: Հոս եւս ըրինք աղօթք, վառեցինք մոմ և վերադարձանք սլանդոկ, որ գոնէ



կարճատև հանգիստ առնենք: Ամբողջ գիշերը նամբորդած ըլլալով՝ պէտք ունէինք ֆունի և թարմանալու:

Ըսեմ, որ Տէր Զօրը... երբեմնի խեղճուկ գիւղաֆաղաքը չէ: Արդիական կա-

ռոյցներ շատ ունի: Հողագործական կեդրոն է այժմ, ուր կը գործեն առևտրական ընկերութիւններ: Գիւղատնտեսութիւնը շատ զարգացած է այստեղ, արտերը՝ բերքառատ են: Հողամշակութիւնը կը կատարուի արդիական մեթոտներով:

Տեղւոյն հայկական եկեղեցին գողտրիկ կառոյց մըն է, հայկական ոճով շինուած, ինչպէս՝ գրեթէ մեր բոլոր եկեղեցիները: Այս ինքնատիպ շինութեան գեոնայարկը կայ թանգարան մը ուր, ապակեփեղկերու ետին դասուած կը մնան հայ նահատակներու մասունք-ոսկորներ: Պատերու վրայ կան Արեւմտեան Հայաստանի - Կիլիկիոյ հայկական կամ հայաբնակ ֆաղաֆ-գիւղ-աւաններու նկարներ: Ինչպէս՝ Այնթապ, Խարբերդ, Մարաշ, Կեսարիա եւայլն... Հայու քրտինքով ու բազուկով կառուցուած ու շէնացուած բնօրրաններ՝ որոնք յափշտակուած կը մնան դե՛ռ մինչեւ այսօր, մինչ անոնց տէր-բնակիչներէն ոմանց մասունքները ցուցադրուելը են հոս և... Արդարութիւն կը խնդրե՛ն:

Մեր ժողովուրդը չէ յուսահատած սակայն: Կը մնայ պահանջատէր: Ամբողջ աշխարհի երեսին, մանաւանդ՝ յափշտակիչ թուրքին և զինք անցեալին ու դեռ այսօր սլաշտսլանող Արեւմտեան տէրութիւններուն երեսին կը սյոռայ... Մերն են այդ հողերը: Արդարութիւն կը պահանջենք... մեզմէ իլուած արիւնին, կեանքերուն ու նիւթական անհաշիւ հարստութեանց ու ոգեղէն արժէքներուն փոխան... և մենք համոզուած ենք, որ ինչքան ալ ժամանակը թաւալի՝ պիտի չմոռանանք մեզի պատճառուած տառապանքը: Պիտի չթուլանայ մեր պահանջատիրական սլաշտը»:

Յաջորդ օր գացինք, երկիւղած ու մտամփոփ՝ Մարկատէ: Լայնատարած անասլատ, որուն մէկ մասին, բլրակի վրայ կառուցուած է մատուռ, ուր «Հայր Մեր» մը արտասանեցինք, ըրինք սրտարուխ աղօթք, մում վառեցինք և հաղորդուեցանք մեր նահատակներուն ոգիներուն հետ:

Ապրիլի 24-ին, գլխաւորութեամբ Տէր Մեսրոպի, գացինք Եփրատ գետ, այն մասը ուր կառուցուած երկաթեայ կամուրջը, գաղութարար տէրութիւններու բանակայիններուն կողմէ, դեռ կը տոկայ:

Եփրատի գլխաւոր հունը կամբջող այս վայրին մէջ հոգեհանգիստի արարողութիւն կատարուեցաւ: Տարօրինակ, զարմանալի զգայնութիւններ ունեցանք այդ սլառուն: Ինձի այլպէս թուեցաւ, որ մեր նահատակներուն օգնութիւն խնդրող, աղաչական ձայները կը լսեմ: «Մեզ մի մոռնա՛ք», «Մեր վրէժը առէ՛ք... հայ մնալով և հայ մեծցնելով ձեր գաւակները...» և նման ձայներ կը հասնէին կարծես ականջիս: Եւ դեռ սա խօսքը. «Այսօր չարիք թէ մոռանան մեր որդիք... ամբողջ աշխարհն իրենց կարգայ նախատինք»:

Հոս եւս, աղօթեցինք և մտովի նորոգեցինք մեր հաւատարմական ուխտը, որ պիտի շարունակենք սլաշտը մինչեւ ձեռքերումը արդար փոխհատուցման... և մեր հողերը... բոլորէն առաջ:

Ըլլալով «Նայիրի»ի համեստ բարեկամ- երբեմն ալ աշխատակից (հազուադէպ), ջերմ ընթերցող մը Պրն. Յովհաննէս Զիլինկիրեանի սփանջելի գրութիւններուն, խորունկ սէր, հիացում և անչափ յարգանք ունեցած եմ յատկապէս նահատակ Ռուբէն Սեւակի հանդէպ:

Մտադրած էի, ես ինձի, ներշնչուած թունդ ազգասէր այս բանաստեղծին հայրենանուէր քերթուածներու ընթերցումէն և մանաւանդ սրտանմլիկ ու հերոսական նահատակութեան մանրամասներէն զորս կարդացեր էի «Նայիրի»ի մէջ, գրել սրտաբուխ խօսք մը տաղաչափեալ և զայն կարդալ այս ուխտագնացութեան վայրին մէջ:

Որով, երբ խմբուած էինք կամուրջին վրայ որուն տակէն կը հոսի Եփրատը (որքան ալ տարօրինակ թուի ըսեմ), առանց հետս եղողներուն զարմանքը վրաս կեդրոնացուցած ըլլալուս համար որեւէ անյարմարութիւն զգալու, կիսաձայն ըսի մօտս գտնուողներուն, որ նահատակ Ռուբէն Սեւակի և անոր մէջէն մեր բոլոր նահատակներուն հոգիներուն ուղղուած յարգանքի արտայայտութիւն մը սլիտի ունենամ: Եւ անշուշտ՝ բարձրաձայն արտասանեցի գրութիւնս զոր գրած եմ դեռ 1995-թ.ին:

Ձեմ գիտեր. աւելի շատ ե՞ս յուզուած էի թէ ունկնդիր ուխտաւորները, որոնք իրենց ձեռքերուն ունեցած ծաղիկները նետեցին Եփրատի հանդարտ հոսող ջուրերուն, սիրազեղ ու թախծալից մտածում մը ընկերացնելով անոնց:

Հետեւեցայ իրենց: Ձեռքիս ծաղկեփունջը յանձնեցի Եփրատին մրմնջելով.— Մեր բոլոր նահատակներուն ի սէր և ի յիշատակ»: Իսկ առանձնացուած մեխակն ալ նետեցի ըսելով.— Քեզի համար՝ յաւերժալոյս Ռուբէն Սեւակ: Դուն, էու հաւատարմութիւնդ ուզեցիր ժառանգ թողուլ յետնորդ սերունդին: «Մենք սլիտի գոհուլինք, որ գալիք սերունդին օրինակ ըլլանք».— ըսիր: Այո. էու հերոսի կերպարդ օրինակ է մեզի այսօր: Մենք հաւատարիմ ենք էու մաղթանք-պատգամին: Քու նուիրումի ոգիդ, հայրենասիրութիւնդ, խիզախութիւնդ և անկուորում հաւատդ. Ազգիդ յաւերժութեան հանդէպ է՝ և սլիտի մնայ ներշնչումի աղբիւր ներկայ ու գալիք բոլոր հայ սերունդներուն: (→ էջ 11)

**ՅԱԻԵՐԺԻ ԶԱՄԲՈՐԴԸ**  
 ( ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ  
 80-ԱՄԵԱ ԿԻՆՅ )

« ԱՐԻԻՆ – ՀԵՂԵՂ ՅՈՐԴԵՑ ԱՅՍ ՍՈՒՐԲ ՉՈՐԵՐԷ, ԲԱՅՑ  
 ԶԻ ՓԱԽԻՍ, ՓԱՐԷ ԵՐԿՐԻԴ ԶԱՅՆ ՍԻՐԷ, ՀՈՂԻԴ ՎՐԱՅ  
 ԳԵՐԻ ՄԻ ԸԼԼԱՐ. ԱՅԼ ՏԻՐԷ... »

*ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ*

Մեր Մեծ, անմահ Ռուբէն Սեւակ,  
 Եղար հայոց Գիսաւոր աստղ,  
 Ճակտիդ կրեցիր լուսէ պսակ,  
 Հայութեան հերոս քաջ նահատակ:  
 Զուգեցիր երբեք փառք, մեծարանք,  
 Ընտրեցիր դուն ճշմարիտին ճամբան,  
 Զործեցիր բնաւ անունդ հայկեան,  
 Եղար ուղեւորն հոգիի անմահութեան:  
 Յեղափոխիչ մտքերովդ մրրկաշունչ,  
 Հայութեան հայրենավառ կարօտն ես դուն:  
 Լուսանճանչ դէմքովդ Ազգիդ լոյսն ես անմար,  
 Արեւափայլ Մասսի գագաթէն վրէժի շեփորահար:  
 Մայր Հայաստանի հողին վրայ ներկայ ես յար,  
 Մեր մեծ անմահ Ռուբէն Սեւակ,  
 Դուն հայութեան սլափու անապակ:  
 Դուն՝ մեր առաջնորդ. լուսեղէն ջահ,  
 Մեր օրերու հրակարմիր Հիւսիսայգ,  
 Զիլինկիրեան տոհմի արդար սլարձանք:  
 22 Յուլիս 1995, Պէյրութ ԳԵՈՐԳ ԳԻՐԻՃԵԱՆ

**ԱՐԱՄ ՍԵՓԵԹՅԵԱՆԻ «ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՁ...» (Շաբ. էջ 10-էն)**

ա՛յս հաւոտածին մէջ: Հետաքրքրական նորութիւնը իր առաջարկն է հայկական հարցի վաւերագրական մատենադարանի մը անհրաժեշտութիւնը և ազգային հերոս Անդրանիկի նուիրուած ներքողը, որպէս «Յաւերժի ճանապարհորդ»՝ 1990 թուականին գրուած յօդուածով, ուր տեղ մը հեղինակը սլահանջֆի պէս հարց կու տայ. «Ա.հա թէ ինչո՞ւ անհրաժեշտօրէն կարիքն ունինք Անդրանիկին՝ նոյնիսկ անոր յետ մահու ներկայութեան: Առաւել կարիքն ունինք անդրանիկեան և արմենական ոգիով թրծուած նորահաս հայ սերունդներու»:

Ցեղասպանութեան 76-րդ տարեդարձին առիթով գրուած՝ 1991 Ս.պրիլի 24-ի յօդուածը լաւագոյն պատկերը կու տայ Սեփեթեանի աւարումներուն և մտորումներուն:

**“ERMENİ SOYKIRIMINI KABUL ETMEYİN. YOKSA KUZEY İRAKA GİRERİZ” VE AMERİKALILAR BU SANTAJA BOYUN EGDİLER, VE ERMENİ SOYKIRIMI TASARISINI ERTELEDİLER.**

**FAKAT TÜRK SANTAJININ SONU GELMEZ.**

**SİMDİ GENE AMERİKALILARA SANTAJ YAPIYORLAR VE DİYORLARKI, P.K.K. -YA KARŞI “ARTIK SABRİMİZ TÜKENDİ P.K.K.-TERORİSTLERİNİ TEMİZLEMELİK İÇİN KUZEY İRAKA GİRME-MİZE MANİ OLMAYIN. YOKSA İNCİRLİKTEKİ VE ANATOLYADAKİ DİĞER AMERİKAN ÜSLERİNİ KULLANAMAZSINIZ”.**

**AMERİKALILAR : 1945-TEN BERİ EN GÜVENDİKLERİ MUTTEFİKLERİ OLAN TÜRKLERİN BU SANTAJLARINDAN DOLAYI ÇOK SASIRMIS DURUMDA.**

**AMERİKAN DİŞ İŞLERİ BAKANİ CONDOLİZA RICE ORTA DOĞUDA VE TÜRKİYEDE TEMASLAR YAPIYOR.**

**TÜRKİYE BASBAKANİ TAYYİP ERDOĞAN AMERİKAYA YENİ GİTMİŞTİ. HAFTAYA GENE AMERİKAYA GİDECEK VE PAZARLIK PAZARLIK, PAZARLIK YAPILACAK.**

**İRAK DİŞİSLERİ BAKANİ İKİ GÜN EVVEL ANKARADA İDİ.**

**BU ARADA TÜRK DİŞİSLERİ BAKANİ ALİ BABACAN TAHRANA GİTMİŞ....**

**TAHRANDA GÖRÜŞMELER YAPIYOR.**

**İRAN CUMHURBAŞKANİ AHMEDİNEJAD TÜRK DİŞİSLERİ BAKANİNİ KABUL EDİYOR. ALİ BABACANIN SÖYLEDİĞİNE GÖRE, İRAN TÜRKLERE, P.K.K. İLE MÜCADELESİNDE DESTEK SÖZÜ VERMİŞ.**

VE IRAN DISISLERI BAKANI DA YARIN SURIYEYE GIDECEK.

BÜTÜN BU GIDIS - GELISLERDE TÜRKİYENİN GAYESİ SU: TÜRKİYE, IRAK, IRAN VE SURIYEDE BULUNAN KÜRTLERE KARSİ BİRLESİK BİR SİYASET JUTNE KARARI ALMAK.

IRAKTA 7 MİLYON KÜRT VAR. IRANDA 4 MİLYON. SURIYEDE 3 MİLYON .VE TÜRKİYEDE 20 MİLYONDAN FAZLA KÜRT VAR (BAZILARI BU SAYIYI 30 MİLYONA ÇIKARIYOR.

DAHA DOGRUSU GERÇEK SAYIYI KİMSE BILMIYOR. ÇÜNKÜ KÜRTLER OKADAR TÜRKLERE KARİSMİS Kİ, KİMİN KÜRT KİMİN TÜRK OLDUGU BELLİ DEĞİL).

\*

\* \*

BU 4 DEVLETEN YALNIZ TÜRKİYEDE KÜRTLER KÜRT OLARAK TANINMIYOR. VE KÜRT OLARAK YASAMA HAKLARI YOK. DÜŞÜNÜN, TÜRKİYEDE 20 MİLYON DAN FAZLA OLAN KÜRTLERİN 21-ASIRDA BİLE KİMLİKLERİ TÜRK DEVLETİ TARAFNDAN İNKAR EDİLİYOR.

1990-DA AMERİKALILAR BİRİNCİ IRAK SAVASINDA, ORTA DOGUDA KENDİ HAKİMİYETLERİNİ DEVAM ETTİRMEK İÇİN KUZEY IRAKTA BAĞIMSIZ BİR KÜRT MINTIAKASI YARATTILAR. VE BU MINTIKA BUGÜN, BAĞIMSIZ KÜRT DEVLETİNE DÖNÜSTÜ.

VE KÜRTLER, IRAKTA AMERİKALILARIN EN GÜVENDİĞİ MİLLET.

VE BU DURUMDAN EN FAZLA KORKANLAR DA TÜRKLER. ÇÜNKÜ İRAKTAKİ KÜRT DEVLETİNDEN SONRA SİRANIN TÜRKİYEDEKİ KÜRTLERE GELECEĞİNİ ÇOK İYİ BİLİYORLAR.

VE TÜRKLER 2003-DE İKİNCİ IRAK SAVASININ BİRİNCİ GÜNÜNDEN BERİ P.K.K.-Yİ EZMEK BEHANESİ İLE KUZEY İRAKA GİREK BU YENİ KURULAN KÜRT DEVLETİNİ YIKMAK İSTEDİLER. FAKAT BUGÜNE KADAR AMERİKALILAR ENGEL OLDU.

SON GÜNLERDE TÜRKLER, AMERİKALILARIN İRAKTAKİ ZOR VE ZAYIF DURUMUNDAN İSTİFADE EDEREK GENE SİNTAJLARA BAŞLADILAR.

ORDULARINI KUZEY İRAKA YIGDILAR TÜRK MECLİSİ DE TÜRK HÜKÜMETİNE (İRAKTAKİ P.K.K.-LARI TEMİZLEMELİK BAHANESİ İLE) İRAKA GİRME YETKİSİ VERDİ.

TABİİ TÜRKLERİN ASİL GAYESİ, TÜRKLER İÇİN HAYAT-MEMAT MESELESİ OLAN KUZEY İRAKTAKİ KÜRT DEVLETİNİ VE KÜRTLERİ TEMİZLEMELİK.

BU ARADA TÜRKLERİN İSTAHLARININ SONU YOK.

TÜRKLERİN BİR GAYELERİ DE KERKÜK PETROLLERİNİ ELE GEÇİRMEK.

BİZ DE DİYORUZ Kİ :

“DİKKAT EDİN TÜRKLER. “DİMİYATA PİRİNCE GİDERKEN EVDEKİ BULGURDAN OLA-CAKSİNİZ”.

ZATEN SON GÜNLERDE TÜRK GAZETELERİNDE BİR ÇOK YAZAR, İRAKA GİRMENİN TEHLİKELERİNİ BELİRTİYOR. VE SONUÇ OLARAK DİYORLAR Kİ :

“AMAN, GENERALLER, BU MACERAYA GİRMEYİN. İRAKTAKİ AMERİKALILAR GİBİ OLABİRSİNİZ. AYRICA KARSİNİZDA AMERİKALILARI BULUCAKSİNİZ.

ÇÜNKÜ AMERİKALILAR SİZİ PETROL MINTIKALARINA YAKLASTIRMAZLAR.

AYRICA TÜRKİYEDEKİ KÜRTLERİ DE UNUTMAYIN.

BU BİZİ KARDES SAVASINA KADAR GÖTÜRÜR”.

Յ. Չ.

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԲԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ԹՈՒՐԲԵՐՈՒՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՁԷՆՔԸ՝**

**ՍՊԱՌՆԱԼԻՔ, ՍՊԱՌՆԱԼԻՔ, ՍՊԱՌՆԱԼԻՔ...**

**«ԿԱ՛Մ՝ ԻՍԼԱՄ Կ՛ԸԼԼԱՔ, ԿԱ՛Մ՝ ԳԼՈՒԽՆԻԴ ԿԸ ԹՈՒՒ»**

Այս սպառնալիքներով յաջողեցաք Քրիստոնեայ Անաթոլիան, քանի մը դարուան ընթացքին՝ թրքացնել:

Հիմա ալ՝ Ամերիկացիներուն կ'սպառնաք ըսելով.— «Հայկական ցեղասպանութիւնը մի ընդունիք: Այլապէս՝ Իրաքեան քիւրտերուն վրայ կը յարձակինք»:

Ձեր այս սպառնալիքը «յաջողեցաւ»: Եւ Ամերիկացիները հայկական ցեղասպանութեան ծանաչումը յետաձգեցին:

Ձեր այս յաջողութենէն քաջալերուելով՝ շարունակեցիք սպառնալիքներ կատարել մեզի ըսելով.—

«Հիւսիսային Իրաքի մէջ P.K.K.-ն մաքրելու մեր գործողութեան արգելք մի ըլլաք: Այլապէս՝ Անաթոլիոյ Ամերիկեան զինուորական խարխիսները կը փակենք»:

Թուրքերուն կատարած այս սպառնալիքները՝ Ամերիկացիներուն Իրաքի մէջ, շատ վտանգաւոր վիճակի կը մատնեն:

Որովհետեւ Իրաքի մէջ, արդէն շատ դժուար վիճակի ենթարկուած Ամերիկեան բանակներուն պէտք ունեցած բոլոր նիւթերը՝ Ատանայի "Incirlik" օդակայանին նման Թուրքիոյ մէջ գտնուող Ամերիկեան խարխիսներէն ծամբայ ելլող օդանաւերով կը հայթայթուին:

Թուրքերը աշխարհի մէջ, շատ ծանօթ են արդէն, իբր սպառնալիքներ կատարող և Պատեհապաշտներ:

1915-թ.ին՝ Առաջին Աշխարհամարտէն օգտուելով, հայ Ազգը ցեղասպանութեան ենթարկեցին:

1974-թ.ին՝ Կիպրոսի մէջ, Նախագահ "Makarios"ի դէմ մահափորձի մը կատարուիլը սպառնուակելով, Կիպրոսի վրայ յարձակեցան և կղզիին կէսը գրաւեցին:

Հիմա ալ Ամերիկացիներուն կ'ստանան՝ «Մի ծանչնաք հայկական ցեղասպանութիւնը. այլապէս՝ Հիւսիսային Իրաք կը մտնենք»:

Եւ Ամերիկացիները, այս ստանալիքին հետեւանքով՝ հայկական ցեղասպանութեան բանաձեւի որդեգրումը յետաձգեցին:

Բայց, թրքական ստանալիքներուն վերջը, չի՛ գար:

Հիմա, կրկին Ամերիկացիներուն կ'սպառնան և կ'ըսեն թէ՛ «Այլեւ P.K.K.-ի ահաբեկիչները մաքրագործելու համար, մեր Հիւսիսային Իրաք մուտքին արգելք մի ըլլաք:

Ասյա թէ՛ ոչ՝ մենք ալ, "Incirlik"ի և Անաթոլիոյ մէջ գտնուող միւս օդակայաններուն՝ ձեր կողմէ օգտագործուելուն արգելք կ'ըլլանք»:

Ամերիկացիները, 1945-թ.էն ի վեր, իրենց ամէնէն աւելի վստահելի դաշնակիցը եղող Թուրքերուն կատարած այս սպառնալիքներուն պատճառաւ, շատ դժուարութեան մատնուեցան:

Ամերիկայի Արտաքին Գործոց Նախարարուհի Քոնտուլիզա Ռայս, Միջին Արեւելքի և Թուրքիոյ մէջ, այս հարցով շփումներ կ'ունենայ:

Թուրքիոյ Վարչապետ Թայյիպ Էրտողան, քանի մը շաբաթ առաջ, Ամերիկա գացած էր:

Թ. Էրտողան գալ շաբաթ, կրկին Ամերիկա պիտի երթայ:

Եւ. սակարկութիւն, սակարկութիւն և սակարկութիւններ պիտի կատարուին.....

Իրաքի Արտաքին Գործոց Նախարարը, քանի մը օր առաջ, Անգարա կը գտնուէր:

Այս միջոցին Թուրքիոյ Ա Գ Նախարար Ալի Պապաձան, Թեհրան կը գտնուի և հոն բանակցութիւններ կը վարէ:



Իրանի նախագահ Ահմետինեժատը Թուրքիոյ ԱԿ նախարարը ընդունած է: Եւ Ալի Պապաճանին ըսածին համեմատ՝ «Իրանը P.K.K.ի դէմ պայքարի հարցին մէջ, Թուրքիոյ թիկունք պիտի կանգնի»:

Եւ Իրանի ԱԳ նախարարը վաղը Սուրիա պիտի երթայ:

Այս ամբողջ եռուզեօնին մէջ, Թուրքերուն նպատակը հետեւեալն է.

«Թուրքիոյ, Իրաքի, Իրանի և Սուրիոյ մէջ գտնուող քիւրտերուն դէմ հասարակաց քաղաքականութիւն մը վարելու որոշումի մը յանգիլ»:

Իրաքի մէջ 7 միլիոն քիւրտ կայ, Իրանի մէջ՝ 4 միլիոն, Սուրիոյ մէջ՝ 3 միլիոն, իսկ Թուրքիոյ մէջ 20 միլիոնէ աւելի քիւրտ կայ: [Կարգ մը աղբիւրներ՝ Թուրքիոյ քիւրտերուն թիւը 30 միլիոն է կ'ըսեն: Իրականութեան մէջ, անոնց իսկական թիւը ոչ ոք գիտէ: Որովհետեւ քիւրտերը այնքա՛ն Թուրքերուն հետ խառնուած են, որ Թուրքն ու քիւրտը իրարմէ զանազանելը շատ դժուար է:

★ ★ ★

Այս 4 երկիրներէն միայն Թուրքիոյ մէջ է, որ քիւրտերը իբր քիւրտ չեն ծանօցուիր:

Եւ Թուրքիոյ մէջ քիւրտերը՝ իբր քիւրտ ապրելու իրաւունք չունին:

Կրնա՞ք երեւակայել: Թուրքիոյ մէջ, 21-րդ դարուն, 20 միլիոնէ աւելի թիւ կազմող քիւրտերուն ինքնութիւնը՝ Թրքական պետութեան կողմէ կ'ուրացուի:

1990-թ.ին Ամերիկացիները, իրաքեան Առաջին պատերազմին, Միջին Արեւելքի մէջ իրենց իշխանութիւնը տեւականացնելու նպատակաւ, Հիւսիսային Իրաքի մէջի քիւրտերուն համար, քրտական ինքնավար շրջան մը ստեղծեցին:

Եւ այս ինքնավար քրտական շրջանը այսօր, ինքնավար քրտական Պետութիւնի մը վերածուեցաւ:

Եւ նոր քրտական Պետութիւն-էն ամէնէն շատ վախցողներն ալ՝ Թուրքերն են:

Որովհետեւ Իրաքի քրտական պետութենէն յետոյ, կարգը Թուրքիոյ մէջ ապրող քիւրտերուն պիտի գայ՝ սեփական պետութիւն կերտելու: Եւ Թուրքերը լա՛ւ գիտեն այս մէկը:

Եւ Թուրքերը 2003-ին, իրաքեան Բ. պատերազին առաջին օրերէն սկսեալ, P.K.K.ն ծզմելու սպտրուակով, Իրաք մտնելով քրտական «նոր Պետութիւն»ը քանդել ուզեցին: Բայց, մինչեւ այսօր, Ամերիկացիները իրենց արգելք եղան:

Սա վերջին օրերուն Թուրքերը՝ Ամերիկացիներուն Իրաքի մէջ մատնուած դժուար և տկար վիճակէն օգտուելով, կրկին սպառնալ սկսան: Եւ Թրքական բանակները Հիւսիսային Իրաքի սահմանին վրայ համախմբեցին: Եւ Թուրքիոյ Ազգային ժողովը, P.K.K.-ն մաքրագործելու համար, Թրքական կառավարութեան Հիւսիսային Իրաք մտնելու իրաւասութիւն տուաւ:

Բնական է, որ Թուրքերուն բուն նպատակը [Թուրքերուն համար մահուկեմաց խնդիր եղող], Հիւսիսային Իրաքի քրտական պետութիւնը և քիւրտերը մաքրագործել է:

Մինչ այդ՝ Թուրքերուն ախորժակը շատ բացուած է: Թուրքերուն ուրիշ մէկ նսլատակն ալ՝ Քերքուքի քարիւղի հարուստ շրջաններուն տիրանալ է.....

Մենք ալ Թուրքերուն կ'ըսենք թէ՛ «Ուշադրութիւն ըրէք, Թուրքե՛ր: Բրիւնձի համար Տիմեաթ գացած միջոցին, տունին ծաւարէն չզրկուիք»:

Արդէն, սա վերջին օրերուն, Թրքական թերթերուն մէջ շատ գրիչներ, Իրաք ներխուժման փորձին վտանգալից ըլլալը կը մատնանշեն. և իբր եզրակացութիւն կը զգուշացնեն.

«Ուշադրութիւն՝ զօրավարներ, այս արկածախնդրութեան մի՛ դիմէք: Աերիկացիներուն նման, Իրաքի մէջ, դժուարութիւններու կը մատնուիք: Եւ ձեր դէմ, նախ, ամերիկացիները պիտի գտնէք: Որովհետեւ անոնք ձեզ, Իրաքի քարիւղի շրջաններուն չեն մօտեցներ:

Ասկէ զատ՝ Թուրքիոյ մէջ գտնուող քիւրտերն ալ մի մոռնաք....

Ասիկա մեզ մինչեւ եղբայրասպան պատերազմի կը տանի»:

Թ. Չ.

**ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԳՐԱԿԱՆ  
2007-ՏԱՐՈՒԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐԸ...  
ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ**

ԼԵ

Ռուբէն Սեւակի անուան 2007 տարւան գրական մրցանակը շնորհուեցաւ Դրոզ և հասարակական գործիչ Թորոս Թորանեանին, իր հեղինակած «Իմ Ռուբէն Սեւակը» գիրքին առ ի գնահատուքին:

Մրցանակի տուչութիւնը կատարուեցաւ անցեալ Հոկտ.ի 12-ին, Երեւան, «Ռուբէն Սեւակ» միջնակարգ դպրոցի հանդիսասրահին մէջ, հայրենի մտաւորականներու, կրթական մշակներու, ծանօթ դէմքերու, արտասահմանէն ժամանած հիւրերու և ծնողներու ներկայութեան: ՀՀ-ի Պետական հեռատեսիլը, Ռատիօն, Տեղակալու Գործակալութիւնը և Մամուլը իրենց թղթակիցները դրկած էին որ «Արձագանգն» եղելութեան, որ յատկանշուեցաւ մանաւանդ ներկայութեամբ Ռուբէն Սեւակի դստեր՝ Շամիրամ Սեւակի որ եկած էր ֆրանսայէն իր աւելի քան 93-ամեայ... անթառամ գեղեցկութեամբ, ի հեճուկս վերջերս անցուցած սրկածին որ, բարեբախտաբար, ոչինչ խլած էր իր արդէն առասպելական թուիլ սկսած երիտասարդական աշխոյժէն ու կորովէն:



*Շամիրամ Սեւակ իր հօր անուանակիր 2007 տարւան մրցանակը կը յանձնէ Թորոս Թորանեանին (ձախին): Կեդրոնը՝ Ժիրայր Նայիրի:*

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ յուզիչ և հոգեպարար մթնոլորտի մէջ, յատուկ և խնամուած յայտագրի մը գործադրութեամբ, ուր հանդէս եկան կրթական այս շատ գնահատուած - Հայրենիքի ու Սփիւռքի մէջ- հաստատութեան սան-սանուհիները իրենց Սեւակաշունչ և Մեսրոպաբարբառ կատարումներով, որոնք կ'արտայայտէին և կ'երդուէին հաւատարմութիւն հանդէպ հերոս-նահատակի յիշատակին և պատգամին, անոր ժառանգ ձգած հոգե-բարոյական արժէքներուն:

Օրուան խորհուրդին բանքերը եղաւ ծանօթ գրող-մտաւորական-հասարակական գործիչ, այլազան մրցանակներու դափնեկիր, «Նայիրի» թերթի արտօնատէր-խմբագիր Ժիրայր Նայիրին (որուն ելոյթը կը ներկայացնենք առաձին), որ ներկայներուն փոխանցեց «Ռուբէն Սեւակ» Յիշատակի Տան հիմնադիր-Տնօրէն, նահատակ-հերոսի ելքօրորդի, անոր ոգիին ու տեսլականին մերօրեայ կրող ու ջահա-

կիր՝ Յովհաննէս  
Չլիկկիրեանի  
պատգամը:

Հուսկ՝ կատարուեցաւ մըր-  
ցանակի յանձ-  
նումը, Շամիրամ  
Սեւակի կողմէ, դափնե-  
կիր Թ. Թորան-  
եանին, որ հան-  
դէս եկաւ շնոր-  
հակալութեան  
խօսքով և յանձ-  
նառութեամբ մը,  
որ ինք պիտի  
շարունակէ մնալ  
հաւատարիմ հե-



Ռ. Սեւակի անուան միջնակարգ դպրոցի Ուսուցչական կազմը, պաշտօնէութիւնը և մաս մը հիւրեր հանդիսութենէն ետք, հիւրասիրութեան ընթացքին:

տելոդ-մունետիլկ մը Ռուբէն Սեւակեան Գաղափարականին: Մրցանակի տուչու-  
թեան հետեւեցաւ հիւրասիրութիւն:

Հանդիսութենէն առաջ դիւցազնատիպ Գահատակ Ռուբէն Սեւակի կոթող-  
կիսանդրին որ կանգնած է միջնակարգ այս դպրոցի ծաղկաւէտ բակին կեդրոնը,  
ողողուեցաւ ծաղկեկողովներով, փունջերով և կարմիր-սպիտակ մեխակներու  
մատուցումով:

### ՆՈՐԻՑ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՀԵՏ

Նորից տօնական տրամադրութեամբ է լցուել Ռուբէն Սեւակի անուան կրթօ-  
ճախը: Բոլորի շուրթերից Հնչում է ուրախ լուրը. «Շամիրամը գալու է, Ռ. Սեւակի



Ռ. Սեւակի անուան միջնակարգ դպրոցի երգչախումբը ելոյթի պահուն:

2007-թ. Հոկտեմբերի 9-ը: Բակում՝ Ռ. Սեւակի կիսանդրու շուրջ և մուտքի երկա-  
րութեամբ շարուած են մանուկները, քիչ վերել՝ ուսուցիչները, ծնողները: Բոլորը  
անհամբերութեամբ սպասում են...

դուստրը գալու  
է...»:

Ուրախ են  
բոլորը՝ ե՛լ  
նրանք, ովքեր  
առաջին անգամ  
են տեսնելու մեծ  
բանաստեղծի  
դատերը, ե՛լ  
նրանք, ովքեր  
արդէն տեսել են  
և կարօտով սալա-  
սում են, ինչպէս՝  
Հարազատին:

Եւ ահա, եկաւ  
բաղձալի օրը՝



Եւ... մուտքի դարպասների մօտ երեւում է Շամիրամը՝ Տնօրէնի՝ Տ-ն Ճուլիա Ղազարեանի ուղեկցութեամբ:

Շամիրամը՝ միշտ հմայիչ, միշտ գեղեցիկ և իր 93-ամեայ հասակում գարմանալի կենսունակ ու սլայծառամիտ:

Ի՞նչ է գաղտնիքը: Արդեօք Հօր չասրած գարունների կենսաո՞ւժն է փոխանցուել նրա աւիչներին, թէ՞ Ֆրանսիական մշտաթովիչ ու յաւերժական կանացիութիւնը. դժուար է ասել: Ինչեւէ. բոլորի հիացական հայեացքների ու ծափողջոյնների ուղեկցութեամբ Շամիրամը ոտք է դնում հայրական տուն, ուր նրան կարօտով սպասում են բոլորը. ողջագուրանքներ, գրկախառնութիւններ, արցունքներ... Եւ ապա թանգարանում, ուր սլատերից իրեն են ժայտում հայրը, մայրը, տատը, ինքը՝ իր մանկութեան աչքերով, Ֆրանսերէն հնչում են ողջոյնի խօսքեր, բանաստեղծութիւններ, երգեր: Մթնոլորտը յագեցած էր Ռուբէն Սեւակով: Իսկ Հոկտեմբերի 12-ին, սէտք է կայանար Ռ. Սեւակի նուիրուած բազմաթիւ գրքերից մէկի՝ հալէպահայ բժիշկ-հրասարակախօս՝ Թորոս Թորանեանի՝ «Իմ Ռուբէն Սեւակը» գրքի շնորհահանդէսը:



Շամիրամ Սեւակ (կեդրոնը) իր հօրեղօրորդույնը՝ քարերար Յ. Զիլինկիրեանի Եկարին առջև: Աջին՝ դպրոցի տնօրէնուհի՝ Ճուլիա Ղազարեան: Զախին՝ Ժ. Նայիրի:

Միջանկեալ ասեմ, որ Ռ. Սեւակի յաղթարչաւը սկսուեց 14 տարի առաջ, երբ նա վերածնուեց իր հայրենիքում՝ որպէս անդրի, և իր տունը ունեցաւ, իր անունով կոչուեց թիւ 151 միջնակարգ դպրոցը:

1995-թ.ից դպրոցը Սեւակապաշտ և Սեւակագէտ, ազնիւ հայրենասէր Յովհաննէս Զիլինկիրեանի հովանաւորութեամբ սկսեց իր յաղթական երթը, Ռուբէն Սեւակի գաղափարականը և անձնագոհութեան ոգին տարածելու ուղղութեամբ:

Դպրոցը դարձաւ աշխարհում սփռուած բոլոր այն հայերի ուխտաւայրը, ում համար թանկ են ուրիշ Սեւակի բարձրարժեքային մտածողութիւնը: ու Վարդանանց ոգուն բնորոշող հերոսական կեանքի պատմութիւնը և, վերջապէս, ում համար թանկ է Հայ դատի սլահանջատիրութիւնը...

**ՆԱՀԱՏԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾ  
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ  
ԱՆՈՒԱՆ ԳՐԱԿԱՆ  
ՄՐՅԱՆԱԿ**

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Ռուբէն Սեւակի գաղափարականը և անձնագրհութեան ոգին հայ ժողովուրդին մէջ տարածելու նպատակաւ, բանաստեղծին ծննդեան 100-ամեակին առթիւ՝ 1985-ին ստեղծուած էր Ռուբէն Սեւակի անուան գրական մրցանակ մը:

1985-էն ի վեր, Ռուբէն Սեւակի անուան գրական մրցանակը յատկացուեցաւ հետեւեալ հայրենասէր անձնատրութիւններուն՝

Գէորգ Գալպառաճեան, Ալեքսանդր Թոփչեան, Անահիտ Թոփչեան, անդրանիկ Ծառուկեան, Ժիրայր Նայիրի, Անթիլիասի Հայաստանեայց Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութիւն, Վարդան Ապտօ, Պէպօ Սիմոնեան, Ճուլիա Ղազարեան, Վահան Նաւասարդեան:

2007-տարուան Ռուբէն Սեւակի անուան գրական մրցանակը յատկացուած է՝ Սփիւռքի ծանօթ հռետոր-մտաւորական, հայրենասէր գրող Թորոս Թորանեանին՝ իր «Իմ Ռուբէն Սեւակը» գիրքին համար:

«Իմ Ռուբէն Սեւակը» գիրքով Թորոս Թորանեանը՝ Ռուբէն Սեւակը կը ներկայացնէ շատ շատերուն համար մինչեւ հիմա անծանօթ մնացած կողմերով:

Թորոս Թորանեանին «Իմ Ռուբէն Սեւակը», բոլոր հայերուն համար հայրենասիրական գանձ մըն է:

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ  
ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ  
GAGNES SUR MER - FRANCE**

12 տարի շարունակ դպրոցում կազմակերպուել են բազմաթիւ միջոցառումներ, որոնց մէջ ընդգրկուել են ոչ միայն Ռ. Սեւակի անուան, այլեւ մայրաքաղաքի շատ դպրոցների աշակերտներ, ինչպէս՝ օրինակ՝ Սեւակեան թեմաներով շարադրութիւնների, ասմունքի, նկարչութեան մրցոյթներ, իսկ Ժիրիի կազմում ընդգրկուել են Հանրապետութեան յայտնի գրականագէտներ, դերասաններ, նկարիչներ: Կազմակերպուել են գրական-երաժշտական ցերեկոյթներ, բեմադրութիւններ, գրական զեկուցումներ, բաց դասեր, դաս-ցերեկոյթներ... Այլ խօսքով՝ Ռ. Սեւակը ներկայացուել է բազմակողմանիօրէն և այս տարիների ընթացքում եկող ու գնացող սերունդները Ռ. Սեւակի անունը դարձրել են յայտնի ու սիրելի Հասարակութեան լայն զանգուլակների Համար: Այս տարիների ընթացքում դպրոցը հիւրընկալել է Սփիւռքի և Հայրենի բազմաթիւ դրողների, արուեստագէտների, պետական ու քաղաքական գործիչների, կրթութեան նուիրեալների, Հայրենանուէր գործարարների: Իր ջանադիր և Հայրենանուէր աշխատանքի շնորհիւ, ուսման մէջ որակական բարձր նուաճումների Համար դպրոցը դասուել է մայրաքաղաքի լաւագոյնների շարքում:

Եւ Հոկտեմբերի 12-ին, նորից Ռ. Սեւակի անունով դպրոցը մարդաշատ էր: Այդ օրը նորից Ռ. Սեւակը մէկտեղել էր բոլոր նրանց, ում Համար թանկ են ազգային, մշակութային ու Հոգեւոր արժէքները, ովքեր ասլրում են ոչ միայն «Հացիւ»: Ինչպէս նշեցինք, Թ. Թորանեանի «Իմ Ռուբէն Սեւակը» գրքի շնորհահանդէսի աւերթով ժամանել էին բազմաթիւ հիւրեր Սփիւռքից և Հայաստանից՝ Շ. Սեւակ, Ժիրայր Նայիրի, ժողովրդական նկարիչ Յակոբ Յակոբեան, Վլ. Պետրոսեան, մտաւորականութեան ներկայացուցիչներ, լրագրողներ, (→էջ 8)

## Ո՞Ր ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱԻԵԼԻ... (Շար. էջ 2-էն)

Այստեղ կ'ուզենք նշել, հայկական ցեղասպանութեան բանաձեւին կողմնակից Democrate երեսփոխաններուն առաջնորդը եղող Adam Schiff-ին այս անյաջողութեան պատճառներուն մասին ըսածները՝

«Դժբախտաբար, թրքական «լոպի»ն՝ իր առած դրամին «արժանի» եղաւ»

Այս անյաջողութեան պատասխանատուները՝ Թուրքիոյ համար աշխատող «Լոպի»ականներն են: Դժբախտաբար թրքական «Լոպի»ն իր առած դրամին «արժանի» եղաւ:

Այս թրքական «Լոպի»ականները իրենց տարած համոզելու և ճնշելու աշխատանքներուն մէջ յաջողեցան»:

Դրամը «Աստուած» դաւանող երկրին մէջ, թուրքերը ով գիտէ քանի՛, քանի՛ միլիոն տոլար տուած էին այս շատ ծանօթ թրքական «Լոպի»-ականներուն:

Եւ հայկական ցեղասպանութեան զոհ մեր նահատակները, դարձեալ ու կրկին շահու աղբիւր ու միջոց եղած են 1915-ի ցեղասպանութեան բուն պատասխանատուներու ձեռքին:

\*\*

Թուրքիոյ Վարչապետ Թայիպ Էրտողան անպատկառութեան մրցանիշը կոտորեց՝ այսօր [27.10.2007] կատարած յայտարարութեան ընթացքին.

Թուրքիոյ Վարչապետ Թայիպ Էրտողան արեւմտեան պետութիւնները կը մեղադրէ այսօր, իր [27-10-2007-թ.ին] կատարած յայտարարութեամբ:

Ինչո՞ւ: Որովհետեւ արեւմտեան պետութիւնները Թուրքիոյ չեն օգներ եղեր, Զիւրտ ապստամբներուն դէմ թուրքերուն տարած պայքարին մէջ:

Միայն թուրք մը կրնայ այսքան ամբարտաւան գաղափարներ յայտնել:

Դուք՝ թուրքերոյ, 1923-էն ի վեր կը ջարդէք քիւրտերը և քիւրտերուն ոչ մէկ իրաւունքը ցարդ ճանչցած էք, անոնց իբր քիւրտ գոյատեւելու իրաւունքը՝ ներառեալ:

Եւ երբ քիւրտերը այլեւս չեն հանդուրժեր այս ստրկութիւնը և իբր Զիւրտ ապրելու համար պայքար կը տանին, դուք՝ թուրքերոյ այս անգամ ալ քիւրտերը “Terroriste” կ'որակէք և զանոնք ճգմելու կ'աշխատիք:

Եւ ձեր այս անարդար և անմարդկային արարքներուն մէջ կ'ուզէք, որ Եւրոպական պետութիւնները ձեզի մեղսակից ըլլան, որ քիւրտերուն աւելի դիւրաւ կոտորէք...

... Դուք, վարժ էք, ժողովուրդները բնաջնջելու մէջ:

1915-թ.ին, Ա. Աշխարհամարտէն օգտուելով, հայ ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկեցիք:

Այն պատրուակով որ հայերը (իբր թէ) 1914-18 պատերազմին, Ռուսիոյ կ'օգնեն եղեր:



Բայց բուն պատճառը, հայերը ցեղասպանութեան ենթարկելով անոնց հայրենիքին ու ինչքերուն ձեր տիրանալ ուզելն էր: Եւ՝ յաջողեցաք:

Հիմա, նոյնը ընել կ'ուզէք քիւրտերուն համար:

Բայց քիւրտերը՝ հայերուն պէս «գառնուկներ» չեն....

Եւ ամէնէն կարելորդ՝ այսօր քիւրտերը, Ամերիկացիներուն օգնութեամբ, Հիւսիսային Իրաքի մէջ քրտական պետութիւն մը արդէն ստեղծած են:

Եւ դուք, հայկական ցեղասպանութեան Ամերիկայի կողմէ ճանաչման արգելք ըլլալու համար, կ'սպառնաք P.K.K.-ին, և ասոր ներկայութիւնը պատրուակելով կը պատրաստուիք յարձակիլ քրտական պետութեան վրայ, որ զայն քանդէք:

Թուրքեր, ձեզի բան մը ըսենք:

Շատ կը փափաքինք, որ այս տեսակ սխալ մը գործէք և յարձակիք իրաքեան քիւրտիստանի վրայ:

Որովհետեւ, քիւրտիստանի լեռները, ձեր բանակներուն գերեզմանը պիտի ըլլան:

Դո՛ւք ալ գիտէք այս իրականութիւնը....

Բայց եթէ լեռները երթալու տեղ, աւելի վար իջնէք և Kerkük-ի քարիւղի շրջաններուն մօտենաք, այն ատեն ամերիկեան օդանաւերը ձերին հրասալերը կ'այրեն և կը քանդեն:

Այդ պատճառաւ ալ չենք կարծեր, որ այս տեսակ «խենդութիւն» մը կ'ընէք:

Ձեր միակ ընելիքը, կը կարծեմ, որ փակել է Անաթոլիոյ խարիսխները, որոնցմէ կ'օգտուին Ամերիկեան օդանաւերը:

Բայց Ամերիկացիները, Իրաքեան պատերազմի այս դժուար օրերուն, իրենց համար վտանգալից նման քաջ մը չեն կրնար թոյլատրել ու հանդուրժել:

Եւ այդ պատճառաւ Ամերիկացիները, հայկական ցեղասպանութեան ճանաչումը կը յետաձգեն և P.K.K.-ին դէմ [իբր թէ] կարգ մը դժուարութիւններ կը ստեղծեն, որ թուրքերուն հաճելի թուին:

Եւ՝ այսքան: Ոչ շատ աւելի մեծ փոփոխութիւններ թոյլատրելով ի նպաստ թուրքերուն:

Մինչ այդ Ամերիկացիները, թրքական խարիսխներուն ենթակայութեան ձերբազատուելու համար կ'սպասեն, որ Kerkük-ի մէջ շատ մեծ օդանաւակայանի մը կառուցումը աւարտի:

Իսկ յետոյ, ի՞նչ կրնայ ըլլալ:

Միջին Արեւելքին վերաբերեալ նախատեսութիւններ ընելը, ընդհանրապէս կարելի չէ կամ՝ շատ դժուար:


Բայց, մէկ բան կրնանք ըսել:

Թուրքիան, այլեւս, Ամերիկայի անփոխարինելի գինակիցը չէ:

## ՈՉ ՈՔ ՄՈՌՑՈՒԱԾ Է...

Նոր Հոկտեմբեր 27-մըն ալ անցաւ, առանց որ բացայայտուի Մեծ ռեիբին... գաղտնիքը, ջուրի երես բերուին բուն ռերագործները որոնք ՀՀ-ի Ազգային Ժողովին աներեւակայելի, անպատմելի ու չմոռցուող սպանող կազմակերպեցին:

«Հ-1»էն տեսանք նոյն բեմադրութիւնը, «սենարիօն», բռնազրօսիկ, շրթնային, միջուկէ գուրկ խօսքերը լսեցինք Ազգ. Ժողովի նախագահին և միւսներուն, որոնք երկուքնեքն մեխակներով կը «ծաղկեցնէին» Վազգէնի, Կարէնի ու միւսներուն յիշատակին կանգնեցուած խորհրդանիշ ծայրաբեկորը, որ տեղադրուած է ԱԺ-ի բակին մէջ:



*Սպարապետ Վազգէն Սարգսեանի մայրը, իր եղերաբախտ զաւակին դամբանին վրայ՝ մարմնակործան:*

Ամէն ինչ ըսուեցաւ անարցունք ողբասացութեամբ, բացի հիմնականէն- ո՞վ, վերջապէ՛ս, պատուիրեց ահռելի այդ ռեիբը որ չի կրնար մէկ քանի ստահակի խելապատկին ծնունդը ըլլալ:

Անպատասխան հարցումներ: Բայց մինչեւ

ե՞րբ նշմարտութիւնը պիտի մնայ ֆողարկուած, իսկ բուն հեղինակները՝ մուրի մէջ:

Առեղծուածը կը քաշկուտուի, իսկ նշմարտութիւնը լոյսին բերելու պաշտօն ունեցողները կը մնան... պասյանձումն Զաքարիայի, կարծես, թէ եղեռնագործութիւնը ծածկել ու մոռցնել ըլլար իրեն պաշտօնը:

Եւ այդ լուրթիւնը, մեղսակից սակաւախօսութիւնը որ կը շարունակուի մօտ տասնամեակէ մ'ի վեր, վերածուած է անհանդուրժելի հետաքննութեան մը ամուլ և խորհրդաւոր, որով ռեիբին սֆողուած մնալը աւելի մեծ յանցագործութիւն, առեղծուած ու դաւ կը դառնայ քան բուն կոտորածը, ինք՝ 1999-ի Հոկտ. 27-ի եղեռնը:

Այդուհանդերձ կ'ըսուի, թէ այս Ս.բեւի տակ բան մը յաւերժ գաղտնի ու անլոյծ չի մնար: Կծիկը կը քակուի օր մը. համբերելն է դժուարը...:

ԻՆՉ ՈՐ ԹՈՅԼԱՏՐՈՒԱԾ Է ՊՈՒՇԻՆ...  
ԻՆՉՈ՞Ւ ԱՐԳԻԼՈՒԱԾ ԸԼԼԱՅ ԷՐՏՈՂԱՆԻՆ

Պատասխանելով մամուլի թղթակիցներուն այն դիտողութեան, թէ արդեօ՞ք, Իրաք խուժելու իր մտադրութիւնը գործի վերածելով, Թուրքիա ՄԱԿի Ուշաը բռնաբարած չըլլար, Վարչապետ Էրտողան սլառասխանած է.— Ինչո՞ւ... Մ. Նահանգները երբ Իրաք խուժեց, ոեւէ մեկէն արտօնութիւն խնդրած էր: Մինչեւ անգամ գործեց ՄԱԿ-ի Ա.պ. Խորհուրդի անդամներուն արգելքին և զգուշացումներուն հակառակ»: Ուստի, ըսել ուզած է ան.— Ինչ որ թոյլատրուած է ընել Նախ. Պուշին, ինչո՞ւ այդ մէկը արգելուած ըլլայ Էրտողանին... Ուաշինկթընի օրինագանց ընթացքին դէմ օրին սլահ մը քրթմնշածները, շուտով կը մոռնան նաեւ Թուրքիոյ յանցագործութիւնը որ սլիտի ըլլայ միջազգային Օրէնքին դէմ: ...Եւ ամէն ինչ «Կ'ընթանայ» բնական հունով:

**87 ՏԱՐԻ ԱՌԱՋ.....(Շար. էջ 1-էն)**

հաւատարիմ բարեկամութիւն»ի մասին խօսիլը... որուն ականջալուր և ականատես եղանք «Հ-1»էն դիտելով Հայաստանի Վարչապետին կատարած յայտարարութիւնները Ուաշինկթընի և մանաւանդ՝ Փարիզի մէջ:

Ցաւալի էր, սեհան, հայ-ֆրանսական բարեկամութեան մասին լսելը մանաւանդ սա օրերուն, երբ երբեմնի Կիլիկեան հայութիւնը, այժմ վտարանդի ու թափառական, կը սգայ կորուստը հայկական Կիլիկիոյ որ սկսաւ Հանրնի անկումով և աւարտեցաւ Կիլիկիոյ յանձնումովը Քեմալական Թուրքիոյ, որուն 87-րդ տարեդարձը կը սգանք այսօր: Եւ ողբալով Կիլիկիոյ կորուստը, կ'ողբանք խոստումնադրութիւնը, դաւանանութիւնը պետական Ֆրանսային [այլ՝ ո՛չ թէ Ժան Ժորէսի, Վիքթոր Հիւկօ-ի և Հանրի Պարպիւս-ի ֆրանսային որ եղաւ ու կը մնայ հաւատարիմ հայութեան], որ «Հայկական անկախ Կիլիկիա» խոստացաւ մեզի, բայց երկիրը յանձնեց Թուրքիոյ [«Դեռ հաւը երեք անգամ չխօսած» (Աւետարան)]... Եւ այժմ կը խօսուի Հայութիւն-Պետական Ֆրանսական անկեղծ ու հաւատարիմ բարեկամութեան մասին... որ չէ եղած, բայց կը մաղթենք, որ... ըլլայ գո՛նէ այսուհետեւ:

**Հ Ա Յ Գ Ի Ր Ք Ի Տ Ա Ր Ե Կ Ա Ն**

**Ց Ո Ւ Ց Ա Հ Ա Ն Դ Է Ս**

**18 ՆՈՅԵՄԲԵՐ, 2007**

**Մ Ե Ծ Ի Տ Ա Ն Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Ր Ա Ն**

**Հ Ա Յ Կ Ա Ջ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի  
Հ Ա Յ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Ս Մ Ա Ն Ց Ա Մ Պ Ի Ո Ն Ը**

**Կը ներկայացնէ՝**

**« Գ Ո Լ Ի Ս Է Ն Վ Ե Ն Ե Տ Ի Կ »**

**Լ Ո Ր Տ Գ Ա Յ Ր Ը Ն Ի Օ Ր Ե Ր Ո Ւ Ն »**

**Կը դասախօսէ՝**

**Դ Ո Կ Տ. Մ Ա Ր Կ Ն Շ Ա Ն Ե Ա Ն**

*Հայագիտական Ուսմանց Ամպիոն, Հայկազեան Համալսարան  
Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 31 Հոկտեմբեր 2007-ին՝ երեկոյեան  
Ժամը 7:00-ին, Հայկազեան Համալսարանի հանդիսասրահին մէջ:*



ԱՅԺՄԷԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ

ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐԸ ԵՒ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆԸ

Գրեց՝ ՎԱՐԴԱՆ Ա. ՔԸՆՅ. ՏԻԼԿԷՐԵԱՆ

Չեմ կրնար հաւատալ, որ բարեպաշտ քրիստոնէային անհերքելի թուող՝ անմահութեան գաղափարը՝ վրիպում մը ըլլայ իր գիտակցութեան մէջ:

Ինչո՞ւ Տիեզերքի Իմաստութիւնը՝ իր մարդկային ձեռակերտը լուսանաւանջ ձիրքերով օծտելէ ետք, ժամանակաւոր և անցողական գոյութիւն պիտի տար անոր, անասունի անգիտակից վախճանով:

Ի՞նչ նպատակով մարդը կեանքի պիտի կոչէր, եթէ իր ճակատագիրը պիտի չ'ագուցէր յաւիտեանականութեան:

Ի՞նչ իմաստ պիտի ունենար, ոսկորներով ու ջիղերով հիւսուած մարմին մը, եթէ օր մը պիտի ողբայ իր կորուստը, մահուան խաւարակոտ անդունդը գահավիժելով:

Եթէ մարդուն հոգեշունչ էութիւնը պիտի չզօդուի անմահութեան իրողութեան հետ, ինչո՞ւ իմացական ու հոգեւոր բարեմասնութիւններով Աստուած պիտի կերտէր մարդուն մէջ բարոյական անձնաւորութիւնը:

Եթէ աստուածային նախասահմանումով՝ մարդկային գոյութիւնը ողբերգական վերջակէտի մը պիտի յանգի, աշխարհի իմաստուններէն ո՞ր մէկը պիտի ուզէր շնչել մոլորակի մը մէջ, որ իր տառապալից ու անփառունակ կեանքին գերեզմանը պիտի ըլլար:

Ինչո՞ւ Արարիչը պիտի զինէր մահկանացու մարդը գերբնական կարողութիւններով, որ անհունութեան մէջ չլայտնուած գաղտնիքները քողագերծէ, եթէ իր յուսավատ հեռանկարները պիտի չիրագործուին ու ժխտուին:

Չեմ տարակուսիր, որ Տէրը հիասթափութիւն պատճառէ մարդուն, անոր գոյութիւնը սահմանափակելով երկրի նեղ սահմաններուն մէջ:

Որքան ատեն՝ մարդկային հզօր իմացականութիւնները հերքած չեն բնագանցական ճշմարտութիւնները, սխալ պիտի ըլլար կասկածներով ակօսել հաւատացեալին միտքն ու հոգին:

Ինչո՞ւ Արարիչը մահկանացու մարդուն՝ շոպլ վայելքներուն համար՝ դրախտային երկիր մը պիտի պարգեւէր ծաղկաստաններով ու պտղաստաններով, լեռնային ու դաշտային տեսարժան վայրերով, կարկաչուն գետերով ու աղբիւրներով, եթէ այս բոլորը երազային գոյութենէ մը ետք, իր վաղածամ մահով պիտի խաւարէր:

Աստուած շնորհեր է մարդուն վերապաց հոգի, որ երկրի կեանքը համաձուլէ երկնքի հետ: Ապրի ու ձգտի անմահութեան և աննիթական սիւեզերքը ըլլայ իր ձգողական տեսլականը:

Եթէ քրիստոնէայ հաւատացեալը՝ Աւետարանի՞մ բարոյականով՝ Աստուծոյ սիրոյ օրէնքին պիտի չհպատակի և մարմնոյն ցանկութիւններուն համաձայն պիտի տնօրինէ իր ճակատագիրը, կեանքին վերեւ գոց պահելով երկինքը, ի՞նչ պէս մտածող մարդը կրնայ գիտակցիլ ու ջահաւորել հոգին՝ քառասցած աշխարհի մը մէջ:

Ո՞ր եւն երբեմնի աղօթանուէր քարոզիչները և սրբակեաց բարեպաշտները, որոնց կերպարին վրայ կը զգայիր խունկին բուրմունքը:

Անաստուածներուն համար հաւատքը հեզմանք է, եկեղեցի յանախելը և աղօթելը՝ ժամավաճառութիւն և մեղքը՝ նախապաշարում:

Հակառակ, որ Աստուած մարդուն գլուխը ուներուն վրայ դրած է, որ վեր նայի ու երկնքէն առնէ հոգիին բոլոր պահանջները, փարած է հողին և անասունի պէս դունչը գետին կը ծոէ, որ հողէն առնէ իր ուզածը:

Եթէ էշը ճանչնար իր ինքնութիւնը, երբեք պիտի չհանէր մթնոլորտը ժխտող

այդ խժալուր գոոցը:

Բայց մարդը, գիտնալով հանդերձ իր մարդկային կոչումը, իր բոլոր արտայայտություններով կը բարացուցէ անմարդկայինը:

Իր գործած բոլոր մեղքերը և սխալները կը կատարուին խթանուած եսական շահերէ: Մեղաւորը կորուսած է մեղքին գիտակցութիւնը և կը նախընտրէ սապրիլ ինքնախաբէութեամբ:

★ ★ ★

Մերօրեայ մարդը կը ստէ՝ որ շահի, կը փաղաքշէ՝ որ անիրաւէ, կը գովէ՝ որ գովուի, կը կեղծէ՝ որ խաբէ:

Ամէն ինչ, որ կը շողայ իր կերպարին վրայ, կը հաւատայ, թէ սրժէք է ու կը սպարծենայ:

Իր ոխերիմ թշնամին ճշմարտութիւնն է, որուն դէմ կը պայքարի սուսին բոլոր հնարաւորութիւններով:

Մարդը և մարդկութիւնը՝ տարբեր չեն իրենց բարոյական որակով ու վարկով:

Ոչ դրամատէրը երջանիկ է իր շլացուցիչ հարստութեամբ, ո՛չ չքաւորը խաղաղ ու ապահով իր անպատում զրկուածութեամբ, ո՛չ ժողովուրդը կեղեքող վաշխառուները իրենց անյագուրդ շահերով, ո՛չ ալ սուտ քարոզիչները իրենց սիրոյ պատգամներով:

Ամէն գործառնութիւն կը կատարուի զիրար խաբելով ու անիրաւելով, զիրար ամբաստանելով ու դատապարտելով, զիրար ժխտելով ու մեղադրելով:

Մարդիկ սատանայէն աւելի չարացած ու բարբարոսացած են: Վստահութիւն չեն ներշնչեր իրենց ընտանեկան ու ընկերային յարաբերութիւններով:

Նիւթապաշտութիւնը և մարմնապաշտութիւնը, ապօրինութիւնը և անհաւատարմութիւնը, թերահաւատութիւնը և անաստուածութիւնը ձգողական թիրախները դարձած են անբարիշտներուն:

Սովորաբար, ամէն մարդու փառասիրութիւնն է հանրութեան մէջ երեւալ ու պատուուիլ, շլացուցիչ դիրքերու վրայ ծափահարուիլ և շքանշաններով պննազարդել կուրծքը: Հոգ չէ թէ ամբողջ կեանքին մէջ բլուր մ'անգամ նուաճած չըլլայ:

Որքա՛ն ազնուաշունչ իտէալներ, ազգային գաղափարական պայքարներ՝ կրնային արդիւնաւորուիլ համերաշխութեամբ և իրարհասկացութեամբ, եթէ մոլեռանդ ամբոխավարներու մեծաբերան պոռոտախօսութիւններէն չմտրակուէին:

Մարդոց բարոյական ըմբռնումները ա՛յն աստիճան խաթարուած են կամակոր եսականութենէ, որ յանցանք չի նկատուիր եթէ բարեկամդ կը խաբես, գործընկերդ կը շահագործես, անիրաւը կ'արդարացնես, անաստուածը կը պատուես և ճշմարտութեան դէմ զէնք կը բարձրացնես:

Աստուծոյ և ազգին նուիրեալ ծառան, որ եկեղեցական մըն է և պէտք է, որ իր պաշտօնը սնափառութեան շփումներէ անհպելի պահէ, կարծես ան էս, նուիրապետութեան աստիճաններուն վրայ կը սիրէ իր հոգեւոր ձիրքերուն ճանաչալթում տալ... եթէ ունի:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԳՐԱԿԱՆ 2007 ... (Շար. էջ 4-էն)

Հեռուստամեկնաբաններ:

Թ. Թորանեանի գիրքը ներկայացրեց ժիրայր Նայիրին՝ խօսելով Ռ. Սեւակի, նաեւ Յ. Ջիլինկիրեանի հայրենասիրական գործունէութեան մասին: Ապա ելոյթ ունեցաւ հեղինակը, որը նշեց, որ չնայած գրուող գրքերին՝ մեծագոյն գործը կատարում է դպրոցը՝ Սեւակեան ոգով կրթելով հայրենիքի վաղուայ սլաշտպանին: Ընթերցուեց Յովհաննէս Ջիլինկիրեանի ուղերձը՝ ուղղուած դպրոցին և Թ. Թորանեանին, որին շնորհուեց Ռ. Սեւակի անուան գրական մրցանակը:

Մրցանակակիրին ուղղուած գրաւոր խօսքի մէջ Յ. Ջիլինկիրեան ասում էր. «Սիրելի Թորոս Թորանեան... Գրեթէ 25 տարիներէ ի վեր հիացող մը եղած եմ ձեր հայրենասիրական ելոյթներուն՝ կատարուած Ֆրանսա, Զուիցերիա և այլուր:

Բայց մանաւանդ՝ 1995-ին, Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցի բացման հանդիսութեան ձեր կատարած ելոյթը զոր տեսաբերիզէն դիտելու և լսելու հաճոյքը ունեցայ, մեծապէս տպաւորած է զիս:

Ի ուր, այդ օր, սապէս ըսած էիք. «Այսօր Հայաստանի մէջ, բոլոր դժուարութիւններուն դէմ դնելով հայկական հողին փարած մեր հայրենի ժողովուրդի առջեւ և ի յարգանս՝ մինչեւ գետին կը խոնարհիմ»:

Ես ալ, ձեր՝ «Իմ Ռուբէն Սեւակը» հոյակապ ստեղծագործութեան առջեւ, առ ի շնորհաւորութիւն և շնորհակալութիւն՝ կը խոնարհիմ»:

Ապա դպրոցականները ներկայացրին մի հատուած Հ. մարգարեանի «Երբ Արեւը Լուէ» գրքից: Յուզիչ էին յատկապէս ոգի դարձած Ռուբէնի և Եանիի խօսքերը՝ ուղղուած դահլիճում նստած դստերը՝ Շամիրամին: Ապա երգչախումբը և շնորհաշատ աշակերտ-աշակերտուհիները հիացրին ներկաներին իրենց գեղեցիկ երգերով, սլարերով, ասմունքով:

Միջոցառումից յետոյ հիւրերը ծաղիկներ դրեցին Ռ. Սեւակի արձանի պատուանդանին և խոնարհուեցին նրա յիշատակի առաջ:

Իսկ եղեռնազարկ հերոս բանաստեղծը կանգնել էր հսկարս ու հայեացքը յառել յաւերժական Մասիսներին... Խորհում էր իր ժողովուրդի յաւերժութեան մասին... «Մենք սէտք է մեռնենք, որ հայ ազգը ապրի...» Հայ ազգը կ'ապրի, քանզի ծնում է քեզ նման զաւակներ...

ՄԱՐՕ ՄՈՎՍԻՍԵԱՆ

Ռ. ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ  
Հ. ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՁՈՒՂԻ

**Խ Ե Ղ Դ Ա Մ Ա Հ Ս Է Ր**

**ՍԻՄՈՆ ԿՈՍՏԱՆԴԻՆԵԱՆ**

Այսօր ծովուն ալիքներուն  
Հետ լողացի ես դողդոջուն:  
Ալիք մը ջերմ զիս թեւերուն  
Մէջ առաւ ու երազներու  
Աշխարհ տարաւ՝ խորը ծովուն:  
Հոն կը սիրէր խաղաղութիւն:  
Մարմինս անշարժ էր շնչահեղծ:  
Սակայն սիրտս դեռ կը տրոփէր:  
Անունը այդ սերս ալիքին .  
Ժայռի մը տակ զոր կարդացի՝  
Խորը ծովուն գիտէ՞ք ինչ էր.—  
Երանելի խեղդամահ սէր:

**ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆ**

Տիգրան Սարաֆեանի նորերս լոյս տեսած «Հ.Մ.Մ.ի Պատմութեան հետեւերով» գիրքին առ ի գնահատանք, Հալէպի Հ.Մ.Մ.ի նախկին ֆուտպոլիստ, վասուակաւոր վեթերան Ընկ. Սարգիս Շէօհմէլեան կը շնորհաւորէ հեղինակը և այդ սլատեխութեամբ 5000 Ս. Ռ. կը նուիրէ Հ.Մ.Մ. «Մասիս»ին:

**ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆ**

Հաճոյքով իմացանք, որ Տէր և Տիկ. Ալեք և Գալին Վանլեան-Եավերեան բախտաւորուած են մանչ զաւակով մը:  
«Նայիրի» կը շնորհաւորէ զիրեմք և կը խնդակցի իրենց հարազատներուն, Տէր և Տիկ. Պետրոս և Հուրի Վանլեանին՝ մասնաւորապէս:



Զարմանքս կը շարժէ, երբ կը տեսնեմ նորափետուր արեղայ մը տարիքի տհասութեան մէջ ծայրագոյն վարդապետի տիտղոս ստացեր է և հիմա անհամբեր եպիսկոպոսութեան կը ձգտի, դիւրին ճամբաներէ՝ այդ բարձունքը նուաճելու կարճ ժամանակի մէջ:

Նորընծայ քահանայ մը, առանց բաւարար ժամանակ սպառելու իր կարգին վրայ, դարձեր է արդէն խաչակիր քահանայ:

Քանի մը տասնամեակ առաջ, լանջախաւք կրող երէց մը մատով ցոյց կու տային, հիմա՝ հազուադէպ կը հանդիպիս հանդիսութիւններու մէջ քահանայի մը, որ կուրծքին վրայ լանջախաւք չկրէ:

Հազուագիտ բացառութիւններու համար չեն գրուիր այս մեղադրանքները, այլ՝ բանակային խաչակիրներուն համար, որոնցմէ շատերուն կուրծքին տակ պարսպութիւնը կը յօրանջէ:

Այս աժան ու հապշտապ լանջախաւքերու և շքանշաններու սուշութիւնը սւիտսալի է, որ շնորհազուրկ կղերականներու և աշխարհականներու սնապարծութիւնը կը սնուցանէ:

Օր մը քրիստոնէայ հաւատացեալ մը հետեւեալ հարցումը ըրաւ վանահօր Մասիոնի, որուն պերճիմաստ քարոզները ունկնդրելու կուգային... եպիսկոպոսները:

– Հայր իմ, չեմ հասկնար, ի՞նչպէս կ'ըլլայ, որ դուք վանական մըն էք, աշխարհային փորձառութիւնը չունինք մարդկային հոգիին անդունդները խորանալու և ճանչնալու, կը զարմանամ, թէ ինչպէ՞ս կրնաք այդ բոլոր բարոյական արատները վաւերական ճշտութեամբ քողագերծել:

Բարեհոգի հոգեւորականը պատասխանեց.

– Սիրելիս, այդ մեղքին արատները ես շատ դիւրին կը գտնեմ մեղքերով բրգացած իմ հոգիիս մէջ, բահի հարուած մը հերիք է, որ այդ բոլորը մակերեսի վրայ բերեմ:

Կը հարցնեմ, սրտբացօրէն, թէ քանի՞ հոգեւորական, աղօթանուէր վերսցումով կը սուգուի իր հոգիին մինչեւ յատակը ու կը փնայցնէ հոն կուտակուած մեղքին որոմները:

Ո՞վ սարսափով չի փղձկիր, երբ կը տեսնէ բարքերու բորբոսութեան մէջ նեխած աշխարհը, որ ամէն ակնթարթ կը չարափոխուի, կը կազմալուծուի և ցեխաջուրեռու մէջ կը սուգուի:

Հիմնովին փոխուած ու խեղաթիրուած են բարոյական արժէքները, և քրիստոնէական առաքիճութիւնները քշուած են մթին լուսանցքներու մէջ:

Գողգոթայի Ամմեղ Դատապարտեալը, Յարուցեալ Փրկիչը, որ խոստացաւ երկրորդ անգամ այցելել այս մեղապարտ աշխարհը, այս անգամ փշեպսակը գլխուն պիտի դնէին ո՛չ թէ հրեայ քահանայապետները, այլ՝ քրիստոնէայ սուտ քարոզիչները:

**ԲԱՅ ՆԱՄԱԿ**

**ՄԵԾԱՅԱՐԳ**

**ՊՐՆ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ...**

Հանդիպելով և շնորհակալությամբ ստացալ օրինակ մը Ձեր «Սուտերու Եւ Երազներու Ջոհ, «Էջ- Նահատակ» եղած Ազգ մը՝ Հայերը» Մեծղի ու փառաւոր հատորէն:

Անմիջապէս ըսեմ՝ որ զիս մեծապէս տպաւորեց և հիացուց անոր բովանդակութիւնը: Ոչ մէկ գործ այնքան հետաքրքրութեամբ և մեծ լարումով ընթերցեք եմ վերջին տարիներուն՝ որքան Ձեր հատորին շուրջ 800 էջերը, և այն ալ՝ նուազագոյն ժամանակի մէջ:

Ներկայ օրերուն շատ քիչ կը հանդիպինք հրատարակութիւններու որոնք մարդու միտքն ու հոգին լեցնեն այնքան շոպօրէն: Ձեր հեղինակութիւնը անոնց շարքին կը դասուի իր ազգային-հայկական-և միջազգային բաժիններով որոնք ճիշտ են, բովանդակալից, դաստիարակիչ և ողեցուցող:

Մերօրեայ համաշխարհային իրադրութիւններն ու միջազ. անցուդարձերը դուք կը բացատրէք, կը լուսաբանէք և քննուած խնդիրներէն եզրակացութիւն-թելադրանք կ'ուղղէք ընթերցողին այնպիսի համոզիչ շեշտով, դիրահաղորդ ջերմութեամբ, որ մարդ շուտով զանոնք կ'ընկալէ: Գեղեցիկ պատմուածք մը կարդացած ըլլալու տպաւորութիւն կ'ունենայ:

Ձեր վերլուծումները լոյս կը սփռեն ժամանակակից ամենաբարդ հարցերուն վրայ և աշխարհի մը մէջ, որ հակասութիւններու քառս կը կուսնէ՝ տնտեսական, ընկերային, զինուորական, քաղաքական ու կենցաղային բնոյթի:

Այդ հակասութիւնները կը յառաջացնեն աներեւակայելի խառնաշփոթ, առեղծուածային վիճակներ և տեսակէտ-գաղափարներու լաբիրինդոս մը, ուր մտնողը դժուար, թէ հոնկէ դուրս գայ:

Օրինակ մըն է ԱՄՆ-ի և իր արբանեակներուն կողմէ անվերջ կրկնուող «Ահաբեկչութեան դէմ Պատերազմ»ը լոզունգը, որուն ինչ և որու դէմ ուղղուած ըլլալը դժուար է կռահել:

Ո՞վ է ահաբեկիչը: Ի՞նչ է ահաբեկչութիւնը: Ո՞վ և ինչպէ՞ս կը յաւակնի վերջ տալ անոր- դժուար, թէ մարդ կարենայ պատասխանել սա հարցումներուն երբ, ինչ որ արդար սլայքար ու օրինական ընդդիմութիւն է մէկու մը համար, Պուշի Մ. Նահանգները զանոնք կը նկատէ ահաբեկչութիւն և յանցանք: Աւելին՝ զըրպարտութիւնը հիմք վերցնելով՝ կը յարձակի Ջոհին վրայ: Եւ կը յաւակնի «Արդարութիւն» պաշտպանած ըլլալ:

Մերօրեայ գրականութիւն կոչուածը, ընդհանուր առմամբ ոչինչ ունի դաստիարակիչ և մարդկային միտք լուսաբանող:

Այցելեցի գրախանութ մը որ սչք անտեմ նոր հրատարակութիւններու վրայ: Կարճ ըսեմ՝ մատուցուածը արելի շատ և ճիշդ՝ խոտան էր: Կը բուրեն կոխ, մահ, զրկանք, դժբախտութիւն, անհամ երգիծանք. ու մանաւանդ՝ տղիփ, պողնկազրութիւն կամ շուայտութիւն:

Ո՞ր են մնացեք երէկի ոգելից, միտք լուսաւորող հրատարակութիւնները: Անոնք չկան այսօր, կամ գրեթէ:

Պակաս վիատեցուցիչ և բարոյագրկող չէ հեռատեսիլներու կողմէ ցուցադրուածը, որուն առանցքին երկու բեւեռներէն մէկը եթէ բրտութիւնն է, միւսը, անտարակոյս՝ տոփանք, «Սէքս» կոչուածը:

Խօսքս Լիբանանեան հեռուստակայաններուն մասնաւորելով ըսեմ որ անոնք, տեղական լուրերէն բացի, ոչինչ ունին լիբանանեան:

Իսկ լիբանանահայ հեռուստադիտողներուն մէկ մեծ տոկոսը իր «Հոգեկան և մտաւոր սնունդ»ը կը ստանայ... Թրքական կայաններէն: Աւելի շատ թրքական «Բանալ»ներ կը դիտեն քան... Երեւանի «Հ-1»ը: Եւ ինքզինքնին կ'արդարացընեն ըսելով, որ հետաքրքրական բան չեն գտներ հայրենի «Հեռուստակայան»ին յայտագիրներուն մէջ: Աւելի լաւատեղեակներ կ'ըսեն. «Ինչ է տարբերութիւնը: Փոխանակ «Հ-1»ին սպաներէն, մեքսիկերէն, Պրագիլերէն կամ Արխանգելներէն «Սերիալ»ները դիտելու - օրը չորս ժամ-, կը դիտենք թրքական ֆիլմեր, որոնք անհաւատալիօրէն «Բովանդակալից» ու «Դաստիարակող» են: Հասկնալի ըլլալու-թրքերէնի իմացութեան նկատմով- առաւելութիւնն ալ ունին»:

Շատ ալ սխալ չէ այս «Գնահատութիւն»ը: Հայրենի հեռատեսիլը [«Հ.1»] քիչ բան ունի... հայկական: Դարձեր է օտար մշակոյթի, ֆիլմերու և «Մօտա»յի քարոզիչ: Եւ երանի, թէ օտարներուն լաւը և ոչ թէ խոտանը «հրամցուէր» մեզի, անվերջ կրկնող «Եւրոպական չափանիշ»ներուն հաւասարելու լոզունգի տակ:

Մինչդէռ հայ Սփիւռքը ծարաւի է այժմ, ավելի քան երբեք, հայ մշակոյթ-արուեստի, երգ-թատրոն-պարի, ազգային «Կինոսթուտիա»յի արտադրութիւններու:

Սփիւռքահայը կշտացած-յլփացած է օտարոտի այդ ցուցադրութիւններէն: Կարօտ է ազգայինին ու հայրենականին: Ո՞ր են երբեմն երգ-մեղեդիները, թատրոնը, պարարուեստը, գեղարուեստական ֆիլմերը... Անոնք դարձան անցեալ: Ի՞նչ կ'ընեն մեր արուեստագէտները, թատրոնի ղեկավարները, երգահանները, [լաւ որ, սա տողերը գրած պահուս Ռայիսա Մկրտիչեանը «Հ-1»էն, «Երեւան-Երեբունի»ն սկսաւ երգել - 27 Սեպտ. 2007, Կ. Ետք ժամը 18,40-ին]: ասոր հետեւցաւ, դժբախտաբար, երգ-պար մը որ Կեղրն. Ափրիկէի խաբշիկներուն յատուկ է՝ իր հասարակ բառերով: Երկար չտեսե՛ց մեր ուրախութիւնը:

Ի՞նչ է, ամերիկեան-թրքական մշակոյթո՞վ պիտի սնանի սփիւռքահայութիւնը այսուհետեւ: Եղածը չի՞ բաւեր...: «Հ-1»էն սփռուածներուն մեծ մասը կապ չունին հայ իրա՛ւ մշակոյթին հետ:

Մինչ կը կարծենք, որ մենք «Շատ բան ունինք յիշարժան ու յարգելի»: [Մ'եր ժողովուրդը իրաւունք ունի հայարտանալու իր մշակոյթով, արուեստով, գիտութեամբ, քաղաքագէտներով ու զինուորական հանճարի արտայայտիչ ռազմագէտներով, որոնք Բ. Հանրապետութեան 70 տարիներուն փառքը կը խորհրդանշեն]:

Տարօրինակ և վրդովիչ չէ՞ լսելը, որ հայուն մեծագոյն հարստութիւնը իր... Խաչքարերն են:

*Յարգելի Պրն. Չիլինկիրեան՝*

Մեծ հետաքրքրութեամբ և կեդրոնացումով կը հետեւիմ Ձեր գրութիւններուն, որոնք «Նայիրի»ով կը մատուցուին ընթերցողներուն:

Դուք, Ձեր կոթողային հատորով, կը ներկայացնէք մեր ժողովուրդին Պատմական յաղթանակները և -դժբախտաբար նաեւ- պարստութիւնները, և կը յորդորէք, խոր իմաստութեամբ, որ անցեալի սխալները ծառայեն դաս, որ ապագան



## Շ Ն Ո Ր Հ Ա Ի Ո Ր Ա Գ Ի Ր Հ . Մ . Մ . Ի Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ե Տ Ք Ե Ր Ո Վ ...

### Գ Ի Ր Ք Ի Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ռ Թ Ի Ի

Շատ սիրելի և թանկագին ընկեր Տիգրան Սարաֆեան:

Այսօր բոլոր հայերս կը տօնենք մեր Մայր հայրենիքին՝ Հայաստանի Գ. Հանրապետության և անկախության տարեդարձը՝ ուրախ առիթ մը հայրենիքի և Սփիւռքի հայերուս համար-, իսկ Հ.Մ.Մ.ական շրջանակին՝ ուրախության և հպարտանքի պատեհունքին, երբ դուք, համախմբուած «Մասիս» ակումբի սրահին մէջ, կը տօնէք երկար ժամանակէ սպասուած և շատ մեծ կարեւորութիւն ունեցող Ս.Դ.Հ.Կ.ի մարզական բաժինի Հ.Մ.Մ.ի Պատմութեան առաջին հատորի ծնունդը յատուկ Գինեձօնով մը:

Այսօր, հայոց պահմութեան կը յանձնուի, իր բոլոր մանրամասնութեամբ, Հայ Մարզական Միութեան Պատմութեան առաջին հատորը, դառնալով սեփականութիւնը Հայութեան, աշխարհի բոլոր ծագերուն վրայ:

Շնորհաւորելով անցնիլ ու երթալ կարելի չէ՝ այսպիսի կոթողային աշխատանքի մը ներկայութեան:

Վստահ եմ որ, ինծի նման շատեր կան, որ տեղեակ են այս գործի լրջութեան և հսկայական պրպտումի արդիւնք ըլլալու մասին, որ տասնեակ տարիներ ձեզ հիւծեց, լսեց թէ՛ ժամանակ և թէ՛ յոգնութիւն, երկար և անքուն գիշերներ անցուցիք հեռաձայնելով աշխարհի չորս ծագերուն որ սպահովէք հաստատ և լրիւ մանրամասնութիւններ և նկարներ, իրականացնելու համար «Երազ» նկատուած այս հրատարակութիւնը, որ այսօր առաջին անգամ ըլլալով, Հ.Մ.Մ. «Մասիս»ի սրահին մէջ կը յայտնուի սիրելի Հ.Մ.Մ.ականներուն, որոնք վկայ եղած են այս կազմակերպութեան փառքի օղակներուն, իր ծննդեան ժամէն մինչեւ ներկայ օրերս, սկսելով Լիբանան - Սուրիա և Միջին Արեւելքէն, անցնելով Եւրոպա, Ամերիկաները և հասնելով յատկապէս Մայր հայրենիք՝ Հայաստան:

Ո՞վ աւելի պատրաստ կրնար ըլլալ այս հսկայ գործին գլուխը անցնելու, եթէ ոչ՝ նոյնինքն այն վեթերան ընկերը, որ գրեթէ վաթսուն տարիներէ ի վեր, մնաց Ս.Դ.Հ.Կ.ի և Հ.Մ.Մ.ի պատնէշի վրայ, վերցնելով երկար տարիներ Հ.Մ.Մ.ի Ատենապետութեան ծանր բեռը, և տալով «Հայ Աշխարհին» օրինակելի մարզիկներ, սկառտներ, որոնք այսօր դարձած են, հայրեր ու մայրեր, իրենց հերթին ծնունդ տալով Հ.Մ.Մ.ական նոր սերունդներու:

Այսօր, հազարաւոր մղոն հեռուէն, ես և ինծի նման շատ հաւատաւորներ, Հ.Մ.Մ.ականներ, իրենց սրտի և հոգիի աջքերով կը հետեւին ձեզի, ուզելով ներկայ գտնուիլ այս պատմական պահուն, երբ Հ.Մ.Մ.ի Պատմութեան գիրքը կը դառնայ շօշափելի իրականութիւն: Ոյժ, կորով և քաջաւորողութիւն՝ սիրելի ընկեր, որ շարունակէք և «Լոյս աշխարհ» բերել երկրորդ հատորը:

Ժանէթը, իր դժուար վիճակին մէջ ինծի կը միանայ իր բարեմաղթութիւններով:

Կը մնամ միշտ Հ.Մ.Մ.ական ոգիով՝

Լոս Անճելըս

Եղբայրաբար՝ ԱԼՊԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ

**ԿՈՆՏՈԼԻԶԱ ԱՆՈՒ ՂՂԱԿԻ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ... (Շար. էջ 1-էն)**

Շատերուն քծնողական թուած այդ խօսքերուն առաջին հակազդողը եղած է Պետական Պաշտօնատան Ա Կ Նախարարուհի (Պետական Բարտուղար) Տիկ. Կոնտոլիզան որ ըսած է, թէ այդ բովանդակութեամբ բանաձեւի մը ընդունուիլը կը վնասէ Ամերիկա-Թուրքիա «Ռազմավարական դաշնակցութեան»ին, ուստի՝ անընդունելի է:

Իսրայէլի ծայրայեղ սիոնական-չրջանակները եւս զօրակոչի ենթարկած են իրենց միջոցները որ ձախողութեան մատենն այդ հայանպատ բանաձեւին որդեգրումը: Անոնք ճշուժ կը բանեցնեն ԱՄՆ-ի հրէական Լոպի-ին և այդ գծով ամերիկացի քննիրէսականներուն վրայ որ հակաթրքական բանաձեւին դէմ քուէարկեն: Ասոր հետեւանքով տասնեակ մը [առ. այժմ] գոնիրէսականներ որոնք ցեղասպանութեան ճանաչման ի նպաստ դիրքորոշուած էին դեռ երէկ, սկսած են վերապահ դիրք բռնել այսօր:

Եւ վերջապէս կ'ըսուի, թէ Նախ. Պուշ, կողմնակի շփումներով թելադրած է խումբ մը գոնիրէսականներու, որ մնան ձեռնպահ: Հայոց ի նպաստ և Թուրքիոյ դէմ չքուէարկեն:

Ի տես «քուլիս»ներու ետեւ տարուող իլրդային աշխատանքներուն հրէական, թրքական ու ամերիկեան «Լոպի»ներուն կողմէ, Վարչ. Սերժ Սարգսեան «Ինքնամխիթարութիւն» կազմող ելոյթ մը ունեցած է ըսելով. — Գոնիրէսականներուն մեծամասնութիւնը համաձայն են բանաձեւին, բայց, առ այժմ, պիտի... չքուէարկեն անոր ի նպաստ: Պիտի սպասեն յարմարագոյն պահին:

Ընդունելի՞ է, որ ԱՄՆ-ը այսպէս վարձատրէ իր «Ռազմավարական Դաշնակից Հայաստան»ի «հաւատարմութիւնը» հանդէպ իրեն, թոյլ չտալով որ ԱՄՆ-ի ներկայացուցիչներու Տունը Հայանպատ բանաձեւ ընդունի ճանչնալով հայկ. ցեղասպանութիւնը և ընդունելով, որ Թուրքիա մեղաւոր է:

Եւ յետոյ՝ Պրն. Վարչապետը կը ջանայ յուսադրել մեզ, որ խնդրոյ առարկայ բանաձեւը իր յարմար առնին քուէի դրուելով կը վաւերացուի: Կարելի՞ է հարց տալ իրեն ըսելով. — Ցեղասպանութենէն 87 տարի յետոյ արդեօ՞ք դեռ երկար սպասելու ենք, որ ԱՄՆ-ը ճանչնայ հայկ. ցեղասպանութիւնը:

միայն յաջողութիւն ու յաղթանակ արձանագրէ, խոհեմ հայ ղեկավարներու առաջնորդութեամբ:

Ձեր լաւատեսութիւնը կ'ոգետրէ մեզ: Կը հաւատանք, որ -կարծեցեալ- «Աստուծոյ Ընտրեալ»ներուն և իրենց զինակից ԱՄՆ-ին մեծատիրութիւնը պիտի չչաւերժանայ: Այսօր, Ձեր հայ ընթերցողներուն մէջ, կրնան գտնուիլ թերահաւատներ որոնք վերապահութեամբ ընկալեն Ձեր մարգարէական կոչելոյտ արժանի կանխատեսութիւնները, «Մի՛ մեղադրէք. ժողովուրդը շա՛տ յուսախարութիւններ կրած է», բայց ես կը հաւատամ, որ ժամանակը երթալով պիտի հիմնաւորէ Ձեր լաւատեսութիւնը, պիտի նուազի «Թովմաս»ներուն թիր, և տակաւ պիտի իրականանան Ձեր ճշմարիտ կանխատեսութիւնները: Պիտի կերտուի իսկապէ՛ս դեմոկրատական աշխարհ: Ձեր գաղափարները կը կազմեն փարոս մը, որ կ'առաջնորդէ մեր գիտակից, արթուն ժողովուրդը, և պիտի առաջնորդէ զայն մինչեւ այդ գաղափարներու ամբողջական իրականացումը:

Սիրելի երէց մարտընկեր՝ կ'ուզեմ կրկնել դեռ քսան տարի առաջ, իմ ղեկավար Մեծ ընկերոջ--այդ օրերուն արդէն ծերունազարդ- Յարութիւն Մատեանի յորդորը տրուած ինձի, իր կրտսեր գաղափարակից ընկերոջ թէ... Պէտք է գրել, պէտք է խօսիլ, պէտք է պայքարիլ: Պէտք չէ ընկրկիլ: Ուշ կամ կանուխ, մեր Գաղափարը պիտի յաղթէ: Եւ ես, այսօր, աւելի քան քսան տարի ետք, վստահ եմ, որ Պատմութեան անցած մեծ ղեկավարս իրաւունք ունէր: Մեր դատին չկայ նահանգ: Մեր դատին չկայ սպարտութիւն, կա՛յ միայն ու անխուսափելի՝ յաղթանակ:

Անսպառ ուժ և կարողութիւն՝ Ձեզի: Ծարունակեցէք լուսաւորել շրջապատը: Նամակագիր՝ ԱՐՏԱԾԷՍ ԳՈՒՅՈՒՄՇԵԱՆ